




Ակրոնի  
ԶԱՐԱ



# ՍՈՎԵՏԱՀԱՅ ԲԵՄԻ ՎԱՐՊԵՏՆԵՐ



Հրատարակվում է Հայկական թատերական  
Ընկերության խմբագրական խորհրդի որոշմամբ:

Գ. ԱՏԵՓԱՆՅԱՆ

# ՄԱՐԿԻ ԶԱՍԱՆ

A 15287

708

Հ Բ Ը

ՅՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ

1980



Г. Х. СТЕПАНЯН

МКРТЫЧ ДЖАНАН

(На армянском языке)

Издание Армянского Театрального Общества

(АТО),

Ереван — 1960

Մկրտիչ Զանանը սովետահայ բեմի ականավոր վարպետներից էր. որպես տաղանդավոր արտիստ, ռեժիսոր և դրամատուրգ նա իր արժանի տեղն է գրավել հայ թատրոնի պատմության մեջ:

Զանանը ունեցել է քառորդ դարի բեմական գործունեություն: Թատերական ասպարեզ է մտել 1910—1911 թթ.: Մի ամբողջ տասնամյակ,—որը մի քանի տարով ընդհատվել է առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ,— ապրել է որոնումների և ոչ արագաթափ ձևավորման շրջան: Եվ այդ՝ ոչ այնքան իր մեղքով, որքան աննպաստ այն պայմանների, որոնք ջլատում էին արևմտահայ թատրոնի ուժերը, այս ու այն կողմ էին նետում նրանց՝ առաջին համաշխարհային պատերազմին նախորդող ու հաջորդող տարիների ընթացքում:

Զանանի բեմական գործունեության երկրորդ ու ամենաբեղմնավոր շրջանը սովետական տարիներն էին, երբ նա հնարավորություն ունեցավ դրսևորելու և կարգացնելու իր արտիստական, ռեժիսորական ու

գրական կարողությունները, կարծ ժամանակում դառնալով սովետահայ թատերական արվեստի ականավոր դեմքերից մեկը:

Մոտ տասնհինգ տարի նա ակտիվ կերպով մասնակցեց Երևանի Պետական առաջին թատրոնի աշխատանքին, դրսնորելով արտիստական խոշոր տըվյալներ: Այնպիսի մի տաղանդավար ռեժիսոր, ինչպիսին Ա. Բուրջալյանն էր, զուր չեղ Զանանի մասին ասում, որ «Եթե Սովետական Միության մեջ կան նինգ արտիստներ, որոնք իրենց մտքով, տեսքով, խոսքով, ձայնով ու պահվածքով կարող են համարվել երկրի լավագույն ռեզոնյորները, ապա դրանցից մեկը Մկրտիչ Զանանն է»: Նույն բանն են Վկայում սովետահայ թատրոնի այլ ներկայացուցիչները, որոնք աշխատել են Զանանի հետ երկար տարիներ, ինչպես Վաղարշ Վաղարշյանը, նկարիչ Սիմոն Ալաջալյանը և ուրիշներ: . . .

Զանանը, սակայն լոկ ռեզոնյոր դերասան չի եղել: Նա ումեցել է արտիստական լայն դիապազոն. Բավասար հաջողությամբ հանդես է եկել թե՛ իբրև ողբերգակ, թե՛ կատակերգակ:

Ուսանելի է ստեղծագործական որոնումներով, իսկափ պոռթկումներով լի բեմական այն կյանքը, որի ուրվագիծը ներկայացնելու նպատակն է հետապնդում սույն գրքույկը:

## ԱՌԱՋԻՆ ՏԱՄԱՐՁԱԿԸ

Մկրտիչ Զանանը ծնվել է 1892 թ. Պոլսում, մշակութային մեծ անցյալ ունեցող այն քաղաքում, որի բների վրա փայլել են հայ թատրոնի ամենաշողողուն աստղերը՝ Պետրոս Ադամյանը, Սիրանովյանը, Ազնիվ Հրաչյանը, Մարտիրոս Մնակյանը, Վահրամ Փափառյանը և շատ ուրիշներ: Բայց նա ծնվել է այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ պոլսահայ թատրոնը փաստորեն չէր գործում: Վաղուց արգելված էին հայերեն ներկայացումները, պոլսահայ թատրոնի վերջին ցոլքերը մարեցին Պետրոս Ադամյանի վաղահաս մահով, Ադամյանի, որին մինչ այդ որպես բացառություն՝ թույլ էր տրվել կազմակերպել մի շարք բնեմադրություններ: Սիրանովյանը, Թովման Ֆասովաճյանի և ուրիշների՝ հաջորդ տարիներին կատարած փորձերը մատնվեցին անհաջողության:

Արևամտահայ թատրոնի այդ «լոռության» շրջանում է անցնուամ Զանանի մանկությունը Պոլսի աշխատավորական Սամալթիա թաղամասում, որտեղ նա ստա-

նում է իր տարրական և միջնակարգ կրթությունը, սովորելով տեղի Սահակյան և Կարապետյան վարժարաններում:

Զանանի մեծ հայրը՝ դարբին Հովհակիմը, Սամարիայում ճանաչված է եղել որպես հայտնի պատմող, նա եղել է նաև արևելյան գործիքների վրա նվազող երաժիշտ: Իսկ հորեղբայրն ու մեծ եղբայրը եղել են դերասաններ: Այսպիսի մի ընտանիքում ծնված երեխան չեր կարող անտարբեր լինել դեպի թատերական կյանքը, որը հրապուրում, ձգում էր շատ երիտասարդների: Զանանի ընտանիքում շարունակ խոսել են թատրոնի մասին, կատարել են նույնիսկ խաղալու փորձեր, նվագվել են առանձին հատվածներ նշանավոր երկերից: Դրանց ունկնդիր ու ականատես է եղել Մկրտիչը:

Պոլսում թեև հայերեն ներկայացումներ չեին տըրպում, բայց կար հայ թատերախումբ, որը գործում էր տաղանդավոր դերասան, ռեժիսոր Մարտիրոս Մնակյանի գլխավորությամբ և իր ներկայացումները տալիս թուրքերեն լեզվով: Բեմական խոշոր տվյալներով, ստեղծագործական վառ երևակայությամբ օժտված այդ արտիստը երկար տասնամյակներ գործել էր Պոլսի բեմերում, թատրոնի կայծը գցելով՝ բավմաթիվ մարդկանց սրտերի մեջ, որոնցից շատերն այրվել էին նրա հրով, անձնատուր եղել բեմին:

Դրանցից էր նաև Մկրտիչ Զանանը։ Նա առաջին անգամ տասնմեկ տարեկան հասակում տեսնում է Մնակյանի խմբի մի ներկայացումը ու սիրում թատրոնը, ամբողջ հոգով կապվում նրա հետ։

Թե ինչ ներկայացում է եղել դա, զիտենք. հայտնի է միայն, որ այդ տարիներին, այսինքն 1903—1904 թթ. Մնակյանի խումբը բեմադրում էր բացառապես Ֆրանսիական և իտալական մելոդրամաներ։

Զանանի հայրը արվեստի հետ կապված մարդ լինելով, այնուամենայնիվ չի ցանկացել, որ իր որդին նվիրվի բեմին, մանավանդ որ մայրենի լեզվով թատրոն գոյություն չուներ։

«Երբեմն,— գրում է Զանանը,— հայրս հարցնում էր ինձ. «Ի՞նչ ես ուզում դառնալ. «դերասան կամ երաժիշտ» պատասխանում էի մտքումս,— բայց պատասխանս չորանում էր կոկորդումս և ասում էի. — «Զգիտեմ»։ Սակայն հայրս, ինքն էլ արվեստին շըփված, արվեստից դաղված մարդ, կարդում էր իմ մտքերը և ասում. — «Մարդ եղիր, մարդ, ինչքան ալ մեծ դերասան ըլլաս, Մնակյան չես ըլլար, զավալը մարդը անօթի է»<sup>1</sup>։

1 Մ. Զանանի արխիվը սիրահոժար մեզ տրամադրել է արտիստի վերջին տարիների կյանքի ընկերումին՝ ժաննա Բաղրամյանը, որին նայտնում ենք մեր խորին շնորհակալությունը։ Նկատի ունենալով, որ այդ փաստաբղբերն այժմ պահպում են

Մայրը նույն կարծիքին է եղել: 1921 թ. որդուն դեպի Եվրոպա ճանապարհ գցելիս ասել է. «Ինչքան աշխատեցինք, որ դուն մարդ ըլլաս, նորեն ալդ դերասանության պոչը չթողուցիր»: Միայն տարիներ անց, երբ նա Երևանից ստացել է որդու լուսանկարը, տեղեկացել նրա հաջողություններին Երևանի պետական թատրոնում, ասել է,—«Քա մա՛րդ է դարձե՞ր»<sup>1</sup>:

1908 թ. Թուրքիան ապրում է քաղաքական զգալի փոփոխություններ: Հռչակվում է այսպես կոչված օսմանյան սահմանադրությունը, հայտարարվում է մամուլի, խոսքի ազատություն: Այդ բոլորը մասամբ շոշափելի իրողություն են դառնում, երբ 1909 թ. գարնանը գահընկեց է արվում երեսուներեք տարի իր ժողովրդին սարսափի ու խավարի մեջ պահող արյունկակ Աբդուլ Համիդը:

Նկատելի եռուցեռ է սկսվում մտավորական կյանքում, կազմվում են մշակութային, կրթական ընկերություններ, լուս են տեսնում տասնյակ թերթեր, ամսագրեր, տարեգրքեր:

Հնարավորություններ են ստեղծվում նաև հայթատրոնի համար: Կազմակերպվում են թատերախմբեր:

Ակադեմիայի Գրականության և արվեստի բանգարանում՝ Մ. Զանանի ֆոնդում, նետագա էջերում որպես աղբյուր հիշատակվում է բանգարանը:

<sup>1</sup> Խոյն տեղում:

թեր, որոնք ներկայացումներ են տալիս տարբեր թաղամասերում:

Չնայած արտաքին նպաստավոր պայմաններին,— երբ հնարավոր էր գրել, հրատարակել, բեմադրել անհամեմատ ավելի անվաշկանդ քան առաջ,— «ապատության» այդ հինգ տարիների ընթացքում գրականությունն ու թատրոնը արևմտահայերի մոտ նկատելի զարգացում չապրեց: Գրեթե չստեղծվեցին դրամատիկական մնայուն երկեր, որոնցով հնարավոր լիներ սնուցանել հայ բեմը. չստեղծվեցին հատկապես իրական կյանքը արտացոլող ռեալիստական գործեր: Դրամատուրգիան գնաց պատմական ողբերգությունների տրորված ճանապարհով: Ասպարեզ եկավ մի նոր թեմա, որն ըստ Էության պատմական անցալի պատկերման մի այլատեսակությունն էր նոր պայմաններում: Դա դաշնակ, հնչակ և այլ քաղաքական պարտիաների հայրուկային «քաջագործությունների» փառաբանումն էր անտաղանդ ու ապաշնորհ մի շարք դրամատուրգների կողմից (Հմ. Արամիան, Ս. Պարթևական և ուրիշներ):

Այդպիսի խղճուկ մի պիեսի բեմադրության առիթով է, որ մենք ժամանակի պոլսարայ մամուլում առաջին անգամ հանդիպում ենք Մ. Զանանի անվան հիշատակությանը, պարզապես՝ Բենց Մկրտիչին:

1910 թ. Պոլսի Վարիեթի թատրոնում բեմադր-

վում է «Անմահն Ժիրայր» կոչվող մի պիես: Այս ներկայացման ժամանակ Մ. Մնակյանի, Վ. Փափազյանի և ուրիշների հետ միասին, հանդես է գալիս նաև Զանանը երկրորդական մի դերով: Պիեսի ծայր աստիճան թույլ լինելը,— որի ներկայացումը, ի դեպ, տեղին ծաղրված է Վ. Փափազյանի «Հետադարձ հայցք» գրքում<sup>1</sup>,— դերի աննշանությունը հասկանալի է, որևէ նկատելի հետք չէին կարող թողնել Զանանը բեմական կյանքի վրա:

Նա սպասում էր առավել նպաստավոր պայմանների:

Նույն այդ շրջանում Զանանը սիրային կապեր է հաստատում պոլսահայ բեմի վրա նոր-նոր երևցող մի աղջկա՝ Ատրինե Դերձակյանի հետ, որ հետագայում ամուսնացավ նրա հետ և դարձավ Զանանի և բեմական, և՝ կյանքի ընկերութիւն: Ատրիկը Զանանին մղելիս է եղել դեպի թատրոն, տվել է ստեղծագործական լիցք, հոգատար մերձակիցը հանդիսացել:

Ինչպես ասվեց՝ այդ թվականներին Պոլսում գործում էին մի շարք դերասաններ, պոլսահայ բեմարվեստի փայլուն աստղերի շառավիղները, որոնք նըպաստավոր պայմաններում կարող էին շատ բան անել հայրենի թատերարվեստի զարգացման համար:

1 Վ. Փափազյան — «Հետադարձ հայցք» նատ. Ա. էջ  
241—244:

Ալդպիսի երիտասարդ ուժերից էին Վահրամ Փափազյանը, Արուս Ռուկանյանը, Մկրտիչ Զանանը, Ենովք Շահենը և ուրիշներ:

Ազգային թատրոնի զարգացմանը խթանում էին Կովկասից Պոլիս Եկած Աբելյան-Արմենյան և Սիրանուլիշի թատերախմբերը, որոնց ինքնուրուլն խաղացնելը, հատկապես Շիրվանզադեի պիեսները, խանդակառությամբ էին ընդունվում տեղի թատերասեր հասարակության կողմից: Սիրանուլիշը և Աբելյան-Արմենյանը իրենց շրջագայություններով թատրոնի ջահը տանում, հասցնում էին նույնիսկ Բեռավոր գավառական քաղաքները: Մամուլը լայնորեն արձագանքում էր ներկայացումներին, գրվում էին ընդարձակ ռեցենզիաներ յուրաքանչյուր ներկայացման մասին: Հոդվածներով, ռեցենզիաներով հանդես են գալիս պոլսահայ ականավոր գրեթե բոլոր գրողները՝ Գրիգոր Զոհրապը, բանաստեղծութի Սիափիլը, Երվանդ Օտյանը, Վահրան Թեքելյանը և ուրիշներ:

1913 թ. վերջերին արևելահայ դերասան Ավո Ազյանը, որը առաջին անգամ Պոլիս էր Եկել Աբելյան-Արմենյանի խմբի հետ 1908 թ., կազմակերպում է մի թատերախումբ: Ազյանը Պոլիս էր վերադառնում Մոսկվայան թատրոնների բեմադրությունների թարմ տպավորություններով, ծգտելով իր կազմակերպած խումբը մղել դեպի ռեալիստական արվեստը, ծառա-

յեցնել իրական կյանքի պատկերմանը: Հենց սկզբից  
Պոլսում Ավյանը համակրանք ու վստահություն է  
ձեռք բերում: Մամուլը («Շանթ», «Մանանա» և ու-  
րիշներ), ողջունում է Ավյանի նախաձեռնությունը,  
գոհ մնալով հատկապես այն բանից, որ նա ճգոտում  
էր իր խաղացանկում լայն տեղ տալ հայ ինքնուրույն  
դրամատուրգիային: Այսպես, ականավոր երգիծաբան  
Երվանդ Օտյանը իր խմբագրած «Մանանա» պարբե-  
րականում, ընթերցողներին հայտնելով նորակազմ  
խմբի ստեղծման լուրը և այն, որ խմբում խաղալու են  
կոմիկ դերասան Զափրաստն ու Մկրտիչ Զանանը,  
գրում է. «Լումբը հետպիետե պիտի ներկայացնե Պա-  
րոնյանի, Շիրվանվադեի, Սունդումկյանի և այլն պիես-  
ները»<sup>1</sup>:

Ինչպես տեսնում ենք՝ Օտյանը թվարկում է բացա-  
ռապես հայ կլասիկ դրամատուրգմերին և խմբի առա-  
վելությունը համարում է հենց Ավյանի ինքնուրույն  
խաղացանկը:

Գրեթե նույնական ոգով է արտահայտվում  
«Շանթ» պարբերականը ու գրում. «Գոհ ենք, որ վեր-  
ջապես պոլսահայերս ալ մեր սեփական թատերախում-  
բը կունենանք: Ծանոթ կատակերգակ Ավյանի ռեժի-  
սորությունով կազմված է նոր թատերախումբ մը, որ

<sup>1</sup> «Մանանա», Պոլիս 1914 թ. № 7:

պիտի ներկայացնե 1914 թ. թատերական եղանակի ընթացքին մասնավորաբար զուտ հայկական թատերագրություններ: Պետք է քաջալերել այս գեղարվեստական ձեռնարկը, որուն պետքը զգալի էր<sup>1</sup>:

Այսպիսի տողեր գրել են նաև այլ թերթեր, արտահայտելով պատմական ողբերգություններից ու թարգմանական մելոդրամաներից հոգնած հայ մտավորականության տրամադրությունը և ձգտումը դեպի իրականությունն արտացոլող կենսալից դրամատուրգիան:

1914 թ. հունվար ամսից Ավյանի խումբը սկսում է իր ներկայացումները: Հավատարիմ մնալով ազդարած ծրագրին՝ նա իր գործունեությունն սկսում է ազգային դրամատուրգիական երկերի բեմադրությամբ, սակայն դերասանական կազմի թուլության պատճառով սկսում խուսափում է կլասիկների երկերից և բեմադրում է Ալ. Աբելյանի «Մարվող ճրագներ» պիեսը:

Ներկայացմանը մասնակցում է և Զանանը:

Չնայած խմբի ղեկավարի որոշ երկյուղին,— որի մասին ակնարկներ կան մամուլում,— ներկայացումը հաջողություն է ունենում: Գրեթե բոլոր թերթերը գործում ակությամբ են արծագանքում այդ ներկայացմա-

1 «Շանք» շաբաթաթերթ, Պոլիս 1914 թ. № 52—53:


նը, դրվատանքով խոսում, հանդուրժող ու ներողամիտ գտնվելով թերությունների նկատմամբ:

«Արելյան-Արմենյան խումբին Պոլսեն հեռանալեն ի վեր,— գրում է թերթերից մեկը,— առաջին անգամն էր, որ գրեթե ամբողջությունով ներդաշնակ թատերախումբի մը ներկայացմանց հանդիսատես կըլլանք մենք՝ պոլսահայերս»...

Մի այլ թերթ, գրեթե նույն խոսքերով էր արտահայտում իր վերաբերմունքը ու գրում.— «Արդարև կովկասահայ խումբերու հեռանալեն ի վեր, Պոլսու մեջ ատեն ատեն չպատրաստված դերերով և անճոռնի հայերենով ներկայացումներեն զպվելե ետքը,— ընդհանրապես խոսելով,— միսիթարական էր շաբաթ գիշեր ներկա ըլլալ ներկայացման մը, ուր դերասանները, մեծ մասով թեև սկսնակ,— հասարակության կը ներկայանալին պատրաստված, և լեզվով մը, որ թեպետ կովկասահայերեն, բայց մաքուր հայերեն էր ամեն բանե առաջ»:

Առանձին դերակատարումների մասին գրվել է համեմատաբար ավելի ժատ: «Շանթ» շաբաթաթերթը, անդրադառնալով Զանանի դերին (Սերոբ), նշել է, որ նա հիմնականում կարողացել է հաջողությամբ ներկայացնել այն, իր խաղով հանդիսականի մեջ բողոքի զգացում է հրահրել «դեպի կեղեքողները և գործարանատերերը»<sup>1</sup>:


<sup>1</sup> «Շանթ» 1914, № 54.



Զանանը Շեքսպիրի գերեզմանի մոտ  
Ստրատֆորդ, 1920:



Քաղաքագլուխ՝ «Շենիզոր»



Մի ուրիշ գրախոս հավաստել է, թե «Պ. Զանանյան, որ իր կարգին խոստումնալից դերասանի հատկություններով երևան եկավ, կորովի խաղարկություն մը ցուց տվավ»:

Զանանի այդ դերակատարումը արտիստի թերևս առաջին լուրջ քննությունն էր թատրոնի բեմում:

Մեր բերած վկայությունները քիչ բան են ասում երիտասարդ դերասանի ստեղծագործական խառնը-վածքի մասին, սակայն այդ սեղմ տողերն ել վկայում են, որ բեմական ասպարեզ էր մտնում խոստումնալից մի ուժ, որը նպաստավոր պայմաններում կարող էր ուրույն տեղ գրավել ժամանակակից հայ թատրոնում:

Զանանի այդ տարիների բեմական գործունեությանը վերաբերող փաստերը սակավաթիվ են: Կան տվյալներ, որ նա 1911—1914 թթ. մասնակցել է Կոմիտասի կողմից Պոլսում կազմակերպված հայտնի «Գուսան» երգչախմբի համերգներին, երգելով որպես բարիտոն, մի հանգամանք, որը վկայում է նրա նաև երաժշտական ընդունակությունների ու ծախնական տվյալների մասին: Առհասարակ նա եղել է բավմակողմանի կարողությունների տեր անձնավորություն: Մեկ հասած համերգային մի ծրագրից իմանում ենք, որ Զանանը հանդես է եկել նաև ասմունքով, արտասանելով արևմտահայ բանաստեղծների ստեղծագործություններից նմուշներ:

2-1107

Ժ/Տ/087



Այդ տարիների նրա բեմական գործունեությանն է վերաբերվում նաև այն փաստը, որ 1914 թ. նա կատարել է Լորանի դերը ըստ Էմիլ Զոլայի համանուն վեպի գրված «Թերեւ Ռաքեն» պիեսում, որը ըստ երևույթին թարգմանել է ինքը Ֆրանսերենից, քանի որ նրա ձեռագրերում այժմ էլ պահպանվում է այդ պիեսը՝ գրված Զանանի ձեռքով:

Նույն 1914 թ. Պոլիս է գալիս դերասան Հովհ. Զարիֆյանի թատերախումբը և տալիս է մի շարք ներկայացումներ: Զանանը խանդավառվում է Զարիֆյանի արվեստով, ցանկանում խաղալ նրա խմբում: Նա պայմանավորվում է Զարիֆյանի հետ՝ Կովկաս գալու համար, սակայն վերահսկա քաղաքական դեպքերը արգելք են հանդիսանում նրա այդ ցանկության իրագործմանը:

Առաջին համաշխարհային պատերազմը չարգ ու փշուր է անում խանդավառ շատ երիտասարդների երազներն ու մղումները: Դադարում են գործելուց թատերախմբերը. մշակույթային կյանքը կանգ է առնում: Զանանը, որ այդ տարիներին արդեն սովորում էր Պոլսի իրավաբանական վարժարանում, հարկադրված է լինում հավաքել իր ուսանողական տետրերը, հրաժեշտ տալ ամեն ինչի և մեկնել բանակ:

Նրա՝ պատերազմի տարիների կյանքը ներկայացնող միակ փաստաթուլթը, որ հասել է մեզ, մի լուսա-

նկար է, երևի հանված անձնագրի համար: Խունացած, դեղնած այդ նկարից նայում է վտիտ մի զինվոր, դեմքին՝ իր ժողովրդի կրած ողբերգության սարսափը...

\* \* \*

Մկրտիչ Զանանի բեմական գործունեության ավելի հասուն մի շրջանն է ընդգրկում 1918—1922 թթ. հնգամյակը, երբ նա դառնում է պոլսահայ բեմի հիմնական ուժերից մեկը և իր վրա է հրավիրում մամուչի ու թատերական ուղարկությունը:

Ավելի քան կես դարի վարգացում ապրած պոլսահայ թատրոնը, ինչպես ասվեց, պատերազմի տարիներին խափանվել էր. կազմալուծվել էին բոլոր խմբերը, նրանց անդամները ցրվել էին աքսորի ու տառապանքի ճամփաներին: Կոտորածից ու թալանից ազատված և Պոլսում ծվարած հայերը նախ պետք է մտածեին իրենց տնտեսական վիճակի, օրվա ապրուստի, ապա միայն՝ մշակութային կյանքի մասին:

Թվում էր թե այս պալմաններում թատրոնի մասին խոսք լինել չէր կարող: Սակայն կենսունակ հայ ժողովուրդը, իր մեծ վիշտը զսպած սրտում, նորից լըծվում է ստեղծարար աշխատանքի, այդ թվում և մտավորական, մշակութային գործունեության:

Օգտվելով զինադադարի և ժամանակավոր խաղաղության ընձեռած մասնակի հնարավորություններից, Պոլսում համախմբվում են որոշ մտավորական ուժեր, փորձում վերսկսել ընդհատված մշակույթային կյանքը:

Բեմական արվեստին նվիրված մարդիկ անասելի տառապանքներից, դժվարություններից հետո նորից գտնում են միմյանց, կազմում ընկերություններ, թատերախմբեր, բարձրանում բեմ ու պատերազմի արհավիրքներից սահմանակած իրենց հայրենակիցների հետ խոսում արվեստի լեզվով, ոգևորում նրանց, կյանքի կոչում:

Մշակույթային այդ գործին զինվորագրված մարդկանց առաջին շարքերում, ահա, մենք տեսնում ենք Մկրտիչ Զանանին, որպես եռանդուն քաղաքացու, հասարակական գործչի, թատերախմբեր կազմակերպողի:

1918 թ. վերջերին Մ. Զանանը, Երվանդ Չափրաստը, Տրդատ Նշանյանը, Երվանդ Թոլայանը և մի քանի ուրիշ դերասաններ հիմնում են «Պոլսո հայ դրամատիկ ընկերությունը»՝ նպատակ ունենալով վերականգնել պատերազմի քառամյա հրդեհում այրված ու ոչնչացած պոլսահայ բեմը:

Նման պայմաններում կազմակերպված մի թատերախմբի համար,— որի ստեղծմանը ի դեպ մեծապես

նպաստել էր ռեժիսոր Օվի Սևումյանը,— միանգամայն հասկանալի է խայտաբղետ այն խաղացանկը, որով հանդես եկավ խումբը 1919 թ. սկզբներից: Այնտեղ կային և՝ ինքնուրուցն, և՝ թարգմանական արժեքավոր պիեսներ (Շիրվանզադեի, Շեքսպիրի, Իբսենի և ուրիշ դրամատուրգների պիեսներից), կային և շատ երկրորդական գործեր («Հիմար կուսը», «Բարեկամներ», «Դյուրան-Դյուրան» և այլն):

Բայց պետք է խոստովանել՝ այդ պայմաններում «Պոլսո հայ դրամատիկ ընկերությունը» կոչված էր մեծ դեր կատարելու և կատարում էր: Հենց այն հանգամանքը, որ թատերախումբը օրընդմեջ ներկայացումներ էր տալիս, թատրոնի հետ կապում բավմահավար հանդիսատեսների,— ինքնին ցույց է տալիս խմբի գործունեության օգտակարությունը:

Զանանը մասնակցում է գրեթե բոլոր ներկայացումներին:

1919 թ. առաջին անգամ նա առիթ է ունենում հանդես գալու Շիրվանզադեի դրամատուրգիայում, կատարելով Գալոյի դերը «Արմավիրքի օրերին» պիեսում, Սեյրանի դերը՝ «Նամուսում», Գիծ Դանիելի դերը՝ «Չար ոգի» պիեսում:

Առաջին դերակատարումը ոչնչով աչքի չի ընկել, գոնե մամուլում մենք որևէ վկայության չենք հանդիպում, սակայն Սեյրանի և Գիծ Դանիելի դերերում նա

ունեցել է հաջողություն: Այդ դերերի նկարագրությունը մեզ չի հասել և դժվար է ասել, թե ինչպես է մեկնաբանել դրանք, բայց ցաք ու ցրիվ այն տեղեկությունները, որ քաղել ենք մամուլի էջերից, վկայում են, որ նա կարողացել է կերտել ժամանակի նախապաշարման—պոհ Սեյրանի համովիչ կերպարը, նրան հաղորդելով լիրիկական առանձնահատուկ ջերմություն:

Մամովում մենք ավելի բարձր գնահատականի ենք հանդիպում նրա Գիծ Դանիելի մասին:

«Պարոն Զանան,— գրում է «Շանթը», — Գիծ Դանիելի դերին մեջ ինքվինքը գերազանցեց»:

Թե ինչով էր գերազանցել «ինքվինքը», հայտնի չէ. ակնքախ է միայն, որ նա, այդ դերը կերտելիս ամենայն հավանականությամբ հաշվի՝ էր առել Հովհաննես Զարիֆյանի Գիծ Դանիելը, որն այնքան խոր տպավորություն էր. թողել Պոլսի թատերասեր հասարակության վրա՝ դեռևս պատերազմի նախօրյակին, 1914 թվականին:

Այդ թատերաշրջանում Զանանի կատարած ուշագրավ դերերից է Ժան Վալժանը՝ Վ. Հյուգոյի «Թլշվառներ» վեպի հիման վրա գրված համանուն պիեսում: Մամուլը վկայում է, որ այդ դերը նույնպես դերասանը կատարել է հաջողությամբ:

Զանանի մասին գրված այս ժլատ տեղեկություններից երևում է, որ արտիստը որոշակի հակում է ունեցել դեպի սոցիալական բովանդակություն ունեցող դերերը: Այդպիսի դեր էր նրա Սերոբը, այդպիսին են եղել Սելյանն ու Ժան Վալժանը:

Հազիվ մի թատերաշրջան բոլորած, 1919 թ. աշնանը Մ. Զանանը որոշում է մեկնել Փարիզ, դերասանական արվեստը կատարելագործելու նպատակով:

Հրաժեշտի այն երեկոյի ծրագրից, որը կազմակերպվել էր 1919 թ. սեպտեմբերի 14-ին Զանանի մեկնելու առթիվ,— երևում է թե նա ընդամենը մի քանի ամսում ինչպիսի հեղինակություն էր վաստակել Պոլսում:

Այդ ծրագրում կարդում ենք.

«Պոլսու բոլոր արվարձաններուն և Բերայի հայությունը կը հուսանք թե պիտի փութա հրաժեշտի այս ներկայացումին՝ հարգանքի իր վերջին պարտքը վճարելու թատերախոսմբին ամենեն ավելի գնահատված ու խոստումնալից դերասան պ. Մկրտիչ Զանանյանին, որ մոտ ատենեն կը հեռանա մեր մեջեն: Ան կը մեկնի Փարիզ՝ լուսադրյուրը գիտությանց ու մեղրագետը արվեստներուն, երջանիկ օր մը վերադառնալու համար դեպի մեզ, ավելի մարզված և կազմված և ատակ էովին նվիրվելու կրթական և հասարակական

այն վեր ու վսեմ գործին՝ թատրոնին, վոր կը պաշտե  
ու կը սիրե»<sup>1</sup>:

Այս տողերի մեջ կա և Զանանի արվեստի գնա-  
հատականը, և այն ակնկալությունը, որ ուներ Պոլսի  
նորաստեղծ հայ թատերախումբը նրանից:

1919 թ. հոկտեմբերի 7-ին Զանանը հասնում է;  
Մարտել, 10-ին՝ Փարիզ: Նույն օրը իր կնոջն ուղար-  
կած նամակում կարդում ենք.

«Սիրելի Աստրիկս. այսօր Փարիզ հասա, առողջ եմ,  
տակավին տուն մը չեմ հաստատված. պանդոկ մը կը  
մնամ... այստեղ հայերեն ներկայացումի հավանակա-  
նություն կա»<sup>2</sup>:

Զանանը մտնում է Փարիզի կոնսերվատորիայի  
դրամատիկական բաժինը, իբրև ապատ ունկնդիր,  
աշակերտելով Պոլ Մյունեին: Նա միաժամանակ լսում  
է Ալլանս Ֆրանսեսի գրականության և արվեստի դաս-  
ընթացները, հետևում Սորբոնի համալսարանի դասա-  
խոսություններին, «անվերջ այցելելով թատրոններն ու  
թանգարանները», ինչպես գրել է ինքը հետագայում,  
ավելացնելով, որ Փարիզի փողոցներն անգամ իր հա-  
մար եղել են «արվեստի ըմբռնողության խորունկ ազ-  
դակներ»:

<sup>1</sup> Գրահանության և Արվեստի բանգարան. Մ. Զանանի  
ֆոնդ:

<sup>2</sup> Խայբ տեղում:

Շնորհիվ կազմակերպչական իր ընդունակությունների և բեմական արժանիքների, նա սիրելի անձնավորություն է դառնում նոր միջավայրում: Այստեղ էլ կազմակերպում է ներկայացումներ: Ապրուստի հոգսը, ուսումը շարունակելու բուռն տենչը, հարկադրում է նրան հանդես գալ զանազան, երբեմն պատահական դերերով:

1919—1920 թթ. Փարիզում նա կատարում է և՝ դրամատիկ և՝ կոմիկ մի քանի դերեր, որոնցից հատկապես աչքի է ընկնում Գիծ Դանիելը («Զար ոգի»), խաղում է նաև այնպիսի դերեր, որոնք ակնհայտնի կերպով փող վաստակելու, նյութական անապահովությունից դուրս գալու միջոցներ էին սոսկ: Մեր կարծիքով այդպիսի նպատակ էր հետապնդում նրա մասնակցությունը հայտնի պարունի Արմեն Օհանյանի համերգներին: Օհանյանը մեծ հոչակ էր ծեռք բերել արևելյան պարերի կլասիկ կատարմամբ: Օհանյանն իր մի շարք ելույթներին մասնակից է դարձնում Զանանին, որ կատարում է արևելյան բռնապետի դերը, բռնապետ, որի համար պիտի պարեր հարեմի «գերութին»: Օժտված արտաքին տվյալներով՝ թիկնեղ մարմին, գրավիչ դիմագիծ, արևելցու բոցկլտուն աչքեր,— որոնք վճռական դեր են կատարում նրա հարուստ դիմախաղը ավելի արտահայտիչ դարձնելու գործում,— Զանանը հրաշալի կերպով կատարում է լուր, բայց շատ խոսուն իր այդ դերը:

1920 թ. Արմեն Օհանյանի կողմից Զանանին նվեր տրված մի նկարի վրա կարդում ենք. «Սիրելի պարոն Զանանյան, ընդունեցեք իմ խորին շնորհակալությունները ձեր գեղեցիկ երգի համար»:

Այս տողերից երևում է, որ Զանանը այդ համերգ-ներում միայն լուր դերեր չէ, որ կատարել է, այլև՝ երգել է, ունենալով «ապշեցուցիչ հաջողություններ, ստանալով այնպիսի բարձր գնահատականներ,— գրում է Զանանը,— որոնք մինչև այժմ էլ անհասկանալի են մնացած «սոլո երգիչ» դերասանիս»<sup>1</sup>:

Փարիզյան այդ օրերի տպավորությամբ է անշուշտ, որ հետագայում, երբ Արմեն Օհանյանը այցելում է Սովետական Միություն և վերադառնալով գրում իր հայտնի «Աշխարհի մեկ վեցերորդ մասում» ֆրանսերեն գիրքը, ջերմ տողերով է հիշատակում Զանանի հետ իր հանդիպումը Սովետական Միությունում:

Ինչպես հասդատում են Զանանի հետ Փարիզում եղող նրա ընկերները, նա մեծ եռանդով ուսումնասիրում է թատերական կյանքը: Փակված իր սենյակում սուպվել է արվեստագիտական գրքերի ընթերցանության մեջ, երբ չի հաճախել դասախոսություններին, իսկ երեկոները, որքան որ ներել են ժամանակը և նորութական պայմանները, հաճախել է թատրոն:

1 Գրականուրյան և արվեստի քանգարան. Մ. Զանանի կոճել:

Փարիզը մեծ տպավորություն է թողնում երիտասարդ, արվեստը խորապես սիրող դերասանի վրա: Նա տեսնում է նաև դասակարգային հակամարտություններ, տեսնում է պայքար, ընդվզում կապիտալիստական կարգերի դեմ: «Այնտեղ, ճիշտ է, ես տեսալավագույն թատրոնները,— գրում է Զանանը,— մեծ վարպետների, բայց և տեսա, թե ինչպես մարդկությունը բաժանված է երկու մասի՝ աշխատողների և վայելողների: Այդ երկուսի պայքարը տեսա. տեսա մայիսմեկյան արյունոտ ցուցեր, կոմունարների պատի առաջ միտինգներ և մոտիկից ճանաչեցի դաշնակցական շեֆերին, որոնք հայ ժողովուրդը, Հայաստանը ողբալով, զբաղվում էին ազգավաճառությամբ, հանուն վեխ ու շվայտ կլանքի»<sup>1</sup>:

1920 թ. ամռանը Զանանը մեկնում է Անգլիա, այցելում Շեքսպիրի ծննդավայր Ստրատֆորդը, լինում է Լոնդոնում, Մանչեստրում և այլ վայերներում, դիտում է մի շարք ներկայացումներ, այցելում Բրիտանական թանգարան:

Անգլիայում նա կազմակերպում է փոքրիկ ներկայացումներ, որոնց հանդիսականների մեջ լինում են և անգլիացի արտիստներ: Նրանք բարձր են գնահատում Զանանի բեմական կարողությունները, առաջար-

<sup>1</sup> Գրականության և արվեստի քանգարան, Մ. Զանանի ֆոնդ:

կում խաղալ իրենց խմբերում: Շեքսպիրի պիեսներում հռչակված Սըր Բենսընի խումբը առաջարկում է խաղալ «Վենետիկի վաճառականում», և հայերեն լեզվով կատարել Շայլոկի դերը: Զանանին համոզում և քաջալերում է նաև Շեքսպիրի թարգմանիչ Հովհ. Մասերիանը, նրան հատկացնելով «Վենետիկի վաճառականի» իր անտիպ թարգմանությունը, սակայն Շեքսպիրի հայրենիքում բեմ դուրս գալու պատասխանատրվության գիտակցությունը ստիպում է նրան՝ հրաժարվել և վերադառնալ Փարիզ: Այսպես է բացատրել դերասանը այդ մերժումը իր ինքնակենսագրականում:

Զանանը հարուստ տպավորություններով է վերադառնում Փարիզ, նորից ձեռնամուկս լինում հայերեն ներկայացումների կազմակերպմանը:

Օգտվելով Շիրվանզադեի Փարիզում գտնվելուց, փարիզահայ դերասանական խումբը, Մկրտիչ Զանանի ակտիվ մասնակցությամբ, որոշում է ներկայացնել «Պատվի համար» դրաման:

Ներկայացումը տրվում է 1921 թ. մայիսի 15-ին: Մասնակցում են դերասանութիներ Թերլեմելյանը (Մարգարիտ), Բոյաջյանը (Ռովալիա), դերասաններ Արման Կոթիկյանը (Բագրատ), Հարությունյանը (Օթարյան), Սվաճյանը (Սուրեն), Դովլաթյանը (Սաղաթելի):

Զանանը կատարում է Անդրեաս Էլիպբարովի դերը: Փարիզահայ մամուլում նրա այդ դերակատարման մասին գրված է վուսպ, անգամ ասված է, որ նա իր դերում չէր:

Թե՛ Պոլսում և թե՛ Փարիզում Զանանը, հանդես գալով կատակերգական դերերում, այնպիսի ժողովրդականություն էր ծեռք բերել, որ անգամ նրա անխոս երևումը բեմի վրա, դահլիճում առաջացնում էր աշխուզ ծիծաղ: Դրամատիկ դերերում, չկարողանալով ամբողջովին ձուլվել իր պատկերած կերպարի հետ, նա անտեղի, գուցե և ակամա, դերակատարման բնույթը վերածում էր կատակերգականի, որը և վնասում էր խաղին: Որ նա որպես կատակերգակ դերասան աչքի է ընկել հենց Փարիզում, երևում է «Արձագանք Փարիզի» պարբերականի թատերախոսականից, որտեղ բննադատվում է նրա Էլիպբարովը: Այդ պարբերականը գրում է, որ նախորդ դերակատարումների ժամանակ Զանանը «ցուց տվակ արտակարգ տաղանդ կատակերգակ դերասանի». անոր կացքն ու շարժութը, միմոսականը, ձայնատվությունը, շեշտը, գործողությունը կատակերգակ են, պարոն Զանանյան իր ամբողջ էությամբ կատակերգակ մ'է բառի գեղարվեստական ամենաբարձր առումով. պետք չէ շփոթել կատակերգակը խեղկատակին հետ, առաջինն արվեստագետն է, ստեղծող մ'է, երկրորդը՝ արհեստավոր մը,

Նմանող մը: Առաջինը մտքին ու ուղեղին վրա կազդե, երկրորդը՝ ջիղերուն. առաջինը նուրբ քննադատ մը, խորաթափանց դիտող մ'է, երկրորդը գռենիկ ծամածըռող մը: Եվ ահա ասոր համար է, որ լավագույն բեմերն իսկական կատակերգակին նույնչափ և ավելի հարգ կընծայեն, որչափ ողբերգակին, որովհետև շատ ավելի դժվար է լավ կատակերգակ ըլլալ, բան լավ ողբերգակ: Դերասան Զանանյանը լուսավոր աստղ է հայ թատերական ցանցառ համաստեղության մեջ, որուն վրա պետք է գուրգուրալ, բայց իրմե կախված է գոլիսավոր աստղ մը դառնալ հոն, իսկական բարձր կատակերգության ճաշակը զարգացնելով մեր ժողովորդին մեջ, բան մը, որ իրեն համար շատ դժվար չպիտի ըլլա»<sup>1</sup>:

Ինչպես երևում է այս ընդարձակ մեջբերումից, այարբերականի նպատակն է եղել Զանանին մղել միայն դեպի կատակերգություն: Արտիստը չի հետևել այս խորհրդին: Եվ ճիշտ է վարվել: Հետագալում նա ապացուցեց, որ նույնքան հաջող դրամատիկ դերասան է, որքան կատակերգակ:

1921 թ. ամռանը Զանանը Փարիզից մեկնում է Շվեյցարիա, այնտեղից Խոտալիա, լինում Վենետիկում, ապա նույն թվի սեպտեմբեր ամսին վերադառնում է

<sup>1</sup> «Արձագանք Փարիզի», 1921, թիվ 5:

Պոլիս, եռանդով մասնակցում 1921 թ. մայիսից վերականգնված Պոլսո հայ թատերական միության ներկայացումներին:

Խումբը ի պատիվ Զանանի, կազմակերպում է թատերական շքեղ մի ցերեկութ, բեմադրելով Ա. Դյումա Որդու «Կամելիավարդ տիկինը» պիեսը, որտեղ գլխավոր դերերում հանդես են գալիս Մ. Զանանը (Արման Դյուվալ) և Էլիկ Գովանը (Մարգարիտ Գորիե): Զանանը հուսախաբ չի անում պոլսահայ իր ընկերներին և կերտում է բուռն սիրո անձնատուր Արման Դյուվալի կերպարը, աչքի ընկնում իր տրամարանված և խորապես հուպական խաղով:

1921—1922 թթ. թատերաշրջանը պոլսահայ թատրոնի վերջին արդյունավետ շրջանն էր, որի նմանը այլևս չկրկնվեց: Այդ թատերաշրջանում կանոնավոր գործում էր ոչ միայն նորաստեղծ «Պոլսո հայ թատերական միությունը» այլև մի շարք ուրիշ թատերախմբեր, ինչպես «Կիլիկյան» խումբը, Ֆելեկյան քույրերի խումբը, Կովկասահայ օպերետային խումբը՝ Սուրաբյանի ղեկանվարությամբ, Օրթագյուղի Բարեսիրաց թատերախումբը և այլն:

Սակայն այդ թատերաշրջանում մեծ մասամբ բեմադրվել են թարգմանական պիեսներ: Դրամատիկական որևէ նորություն չենք տեսնում: Այնպիսի հավակնություններով բեմ հանված մի քանի երկեր

(ինչպես S. Կամսարականի «Փրկանքը» և ուրիշներ), աննշմարելի են մնում Ալ. Շիրվանվադեհի պիեսների կողքին: Մամուլը ցավով է նշել ինքնուրույն դրամատուրգիայի նվազումը:

Մշակույթային կյանքում մեծ իրադարձություն է դառնում Թիֆլիսի Հայարտան օրինակով Հայ արվեստի տան կազմակերպումը Պոլսում 1921 թ. աշնանը, բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ջանքերով:

Պոլսի Հայ արվեստի տան ծրագիր-կանոնադրության մեջ կարդում ենք.

«Պոլսում մեջ հայ արվեստի տուն մը հիմնելու գաղափարը ծնունդ առավ առաջին անգամ թելասեղանի մը պահուն, զոր Թիֆլիսի Հայ արվեստի տան նախագահ պարոն Հովհաննես Թումանյան կուտար ի պատիվ Պոլսում հայ մտավորականության, 1921 թ. նոյեմբեր 26-ին, Բերա Թոքատլյանի մեջ: Պոլսում հայ գրողներն ու արվեստագետները համախմբելու, անոնց մեջ որոնումին և ստեղծագործության ճիգը արթնցնելու և այդ կերպով հայ արվեստի մշակման համար մթնոլորտ մը ստեղծելու մասին բաղձանք մ'էր, որ արտահայտվեցավ միահամուռ, թելասեղանի պահուն»<sup>1</sup>:

Կազմվում է մի հանձնաժողով: 1921 թ. դեկտեմբերի 31-ին հիմնադրված է հոչակվում Հայ արվեստի


1 Գրականության և արվեստի բանգարան. Մ. Զանանի Քոնդ:



Սատին՝ «Հատակում»



Արգան՝ «Երևակայական ճիվանդ»



տունը՝ հինգ բաժիններով՝ գրական, երաժշտական, նկարչական, թատերական և «քննասիրական»:

Թատերական սեկցիայի մեջ է ընտրվում Մկրտիչ Զանանը որպես «ատենադպիր», այսինքն որպես քարտուղար: Քաղաքական դեպքերը հնարավորություն չտվին Հայ արվեստի տան հիմնադիրներին՝ ծավալելու լայն գործունեություն. մանավանդ թատերական սեկցիան գրեթե չգործեց, և դա, ամենից առաջ, այն պատճառով, որ Պոլսում, ինչպես ասվեց, թատերախմբեր շատ կային: Զանանը ամենաքեղմնավորը հանդիսացող Պոլսահայ դերասանական խմբի մեջ էր և կանոնավոր մասնակցում էր ներկայացումներին:

Այդ թատերաշրջանում նա խաղում է թարգմանական մի քանի պիեսներում («Տրիլբի», «Հո երթաս», «Դատախազ Հալլեպ», «Մրրիկը» և այլն):

Խաղացանկը չի բավարարել առաջավոր մտավորականությանը, որը, Զանանի մեջ տեսնելով բեմական նկատելի տվյալներ, ափսոսացել է, որ նա իր ուժերը սպառում է միջակությունից չբարձրացող պիեսներում, անարվեստ մելոդրամաներում: Լսվում են առողջ ծայներ, որոնք հուշում են նրան դիմել դեպի ինքնուրույն կամ թարգմանական կլասիկ դրամատուրգիան, ցուց տալով, որ նա մեծ հաջողություն կարող է ունենալ հատկապես Շեքսպիրի և Շիլլերի պիեսներում:

Զանանի արխիվում պահվում է խունացած, դեղնած մի տետրակ, բաղկացած 38 էջից: Այդ տետրակը, որ գրված է 1922 թ. մայիս ամսին, ցույց է տալիս, թե Փարիզում և Լոնդոնում ինչ ուղղությամբ է աշխատել Զանանի որոնող ու անհանգիստ միտքը, դեպի ուր է մղել նրան համաշխարհային արվեստի խորչերը թափանցելու ներքին մղումը: Այդ տետրակը նվիրված է Շեքսպիրի կյանքին ու գործունեությանը. այն մեծ մասամբ թարգմանական է, տեղ-տեղ հատվածները չակերտների մեջ են առնված, տեղ-տեղ՝ վերապատմված:

Ի՞նչն է հետաքրքրել Զանանին Շեքսպիրի կյանքից և ստեղծագործությունից: Հայտնի է, որ Շեքսպիրին նվիրված արևմտաեվրոպական գրականության մեջ լայն տեղ էր տրվում նրա կենացրության առեղծվածային էջերին, Շեքսպիրի անձնավորության ով լինելուն, որի մասին արվում էին տարբեր դատողություններ: Զանանին այս բոլորը չի հետաքրքրել: Նա շատ համառու ծանոթացնում է Շեքսպիրի կյանքի հիմնական գծերը և անցնում նրա արվեստի մի քանի առանձնահատկություններին, բերելով այնպիսի փաստեր, որոնք ցույց են տալիս Շեքսպիրի սերտ կապը ժամանակակից կյանքի հետ, նրա ստեղծագործությունների հումանիստական էությունը: Այս առիթով նա խոսում է

Շեքսպիրին քննադատողների մասին, ծանրանում հատկապես Վոլտերի վրա և տարօրինակ չի համարում, որ շատ մեծ մտածող, բայց իր ամբողջ կյանքը արիստոկրատական միջավայրում անցկացրած Վոլտերին չէր կարող դուր գալ ժողովրդի կյանքի և հոգեբանության հարազատ ցուցադրումը Շեքսպիրի երկերում:

Զանանը նպատակ է ունեցել, Պոլիս վերադառնալիս պոլսարայ բեմի խաղացանկում արժանի տեղ հատկացնել շեքսպիրյան դրամատուրգիային, թատրոնը մղելով դեպի ռեալիզմ: Սակայն Պոլսում նա չկարողացավ կենսագործել իր նպատակը: Պոլսարայ մամուլի խորհուրդներին անսալով, փորձեց իր նոր ըմբռնումները կիրառել Շեքսպիրի «Օթելլոյի» բեմադրության մեջ, որն ըստ էության Զանանի ռեժիսորական գործունեության վավերական սկիզբն է: Այդ բեմադրության մեջ ինքը՝ Զանանը առաջին անգամ հանդես է եկել շեքսպիրյան կերպարով՝ Յագոյի դերում: Ժամանակի մամուլը «Օթելլոյի» ռեժիսորական աշխատանքի մասին ոչինչ չի գրել, իսկ Յագոյի դերակատարման մասին խոսել է ընդհանուր ծևով, նշել, որ նա հաջող է կատարել այդ դերը:

Անկախ այս բոլորից վերոհիշյալ բեմադրությունը շրջադարձային կետ պիտի համարել Զանանի բեմական ըմբռնումների մեջ: Փարիզում և Լոնդոնում Շեքս-

պիրի դրամատուրգիային հաղորդակից դարձած արտիստը հանդես էր գալիս մի պիեսում, որն իր խևնորոշումով, իբրև դրամատիկական արվեստի նմուշ՝ հանդիսանում էր համաշխարհային դրամատուրգիայի գլուխգործոցը։ Պոլսական բեմը ողողած մելոդրամաներից հետո Յագոն հումկու թափով Զանանին մղում էր դեպի մարդկային իրական փոխհարաբերությունների ու ըմբռնումների անծայրածիր հեռաստանները, դեպի ստեղծագործական երկարավուն մի ճանապարհ, որի վրա նա հաստատ կանգնեց միայն Երևանում, երբ Պետական առաջին թատրոնում ստեղծեց շեքսպիրյան իր կերպարները։

Պոլսի պայմաններում Զանանը հաղորդակից է դառնում ո՛չ միայն համաշխարհային դրամատուրգիայի, այլև ռուսական բեմարվեստի խոշորագույն ներկայացուցիչների արվեստին։

Զանանի արխիվում պահպանվում են աշակերտական տետրի մի քանի էջեր, որոնք ռեժիսորական արվեստին վերաբերող դասախոսություններ են, գրված իր ձեռքով՝ 1922 թվականին։ Առաջին հայացքից կարող է թվալ, թե դրանք հենց այն դասախոսություններն են, որ նա կարդացել է Պոլսի հայ դերասանական խմբի համար, սակայն դասախոսություններից մեկում եղած տողերը, որտեղ խոսվում է նաև Զանանի մասին, և այն փաստը, որ տետրում լայնորեն

Բիշատակվում են ռուսական թատերական արվեստի երևույթները, կասկած չեն թողնում, որ դրանց հեղինակը Զանանը չէ: Անկախ այն հարցից, թե ո՞ւմն են դրանք, Զանանի բեմական ըմբռնումների համար այդ էջերը շատ կարևոր են: Վերոհիշլալ դասախոսություններում խոսվում է բեմական ոճի, ոփթմի, դերաբաշխման, դերապատրաստման և այլ հարցերի մասին, և, որ ամենից կարևորն է, օրինակները մեծ մասամբ բերվում են ռուսական բեմարվեստից, ականավոր ռուս արտիստ Մաչալովից, ռեժիսոր Ստանիսլավսկուց և ուրիշներից:

Ուրեմն՝ Զանանը դեռևս Պոլսում հետաքրքրվել է և որոշ գաղափար կազմել ռուսական ռեալիստական բեմարվեստի սկզբունքների մասին:

\* \* \*

1922 թվականից նորից ու ավելի աննպաստ է դառնում Պոլսի քաղաքական իրադրությունը: Պոլսահայ թատրոնը խոր ճգնաժամի առաջ է կանգնում: Եթե մինչ այդ նյութական դժվարություններն եին ճնշում թատերախմբերին, այժմ դրանց միանում էր քաղաքական հաղածանքը: Անտանտի զորքերը թողնում են Պոլիսը, հեռանում: Սկսվում են ցենզուրական խստությունները: Հույն—թուրքական պատերազմը, Խպմիրի հրդեհումը առիթ են հանդիսանում նոր

կոտորածների: Թուրքիայի հայաբնակ նահանգները վերջնականապես դատարկվում են հայերից, որոնք թափվում են նախ Պոլիս, ապա այնտեղից մեկնում են տարբեր երկրներ՝ Հունաստան, Բուլղարիա, Ֆրանսիա, Ամերիկա և այլ բազմաթիվ վայրեր:

Նոսրանում է թատրոն հաճախողների թիվը: «Պոլսո հայ թատերական միությունը» ընկնում է նյութական շատ ծանր վիճակի մեջ:

Սկսվում է պոլսահայ մտավորականության փախուստը Եվրոպական տարբեր երկրներ և Կովկաս: Այդ մտավորականության առաջավոր մասի հայացքը միշտ էլ հառած է եղել դեպի մայր հայրենիքը: Բայց քաղաքական անորոշությունը, սովետական երկրի մասին տարածված վրաբարտչական լուրերը, Հայաստան մեկնելու հետ կապված դիվանագիտական դժվարությունները առաջին տարիներին հնարավորություն չեն տալիս նրանց՝ իոծ զանգվածներով ներգաղթել Սովետական Հայաստան:

Պոլսում կենտրոնացված մտավորականությանը Հայաստանի հետ կապելու գործում նկատելի դեր է կատարում ՀՕԿ-ի պատվիրականությունը: Արտաշես Կարինյանի և Հովհաննես Թումանյանի գլխավորությամբ եկած այդ պատվիրակությունը պոլսահայերին ծանոթացնում է մայր հայրենիքի հետ: Պոլսի հայերը թեկուլ հեռվից ճանաչում են իրենց հայրենիքը, բուռն

ցանկությամբ լցվում՝ օժանդակելու նրա սոցիալիստական շինարարությանը: Հյուրերի հետ ծանոթանում են նաև դեռևս Պոլսում գտնվող արտիստները, այդ թվում՝ Մկրտիչ Զանանը և Հրաչյա Ներսիսյանը:

Այդ 1922 թ. էր: Զանանը իր մի քանի ընկերների հետ կողմորոշվում է ոչ թե դեպի «գիտությանց լուսաղբյուր»՝ եվրոպական քաղաքները, որտեղ նա եղել էր, այլ դեպի մայր Հայաստանը:

1922 թ. դեկտեմբեր ամսին Մկրտիչ Զանանը, Վահրամ Փափազյանը, Գրիգոր Ավետյանը և Հրաչյա Ներսիսյանը Պոլսից մեկնում են Կովկաս: Մի խումբ այլ մտավորականներ ու դերասաններ, ինչպես Տըրդատ Նշանյանը, Արտաշես Գմբեթյանը և ուրիշներ, մեկնում են Ֆրանսիա, Հովհաննես Աբելյանը, Հովհաննես Զարիֆյանը և ուրիշներ՝ Ամերիկա:

Քայքալվում են Պոլսի գրեթե բոլոր հայկական թատերախմբերը, ընկերություններն ու միությունները: Կարծեք մի դաժան ծեռք իր ափի մեջ առնելով կատորածից ճողովրած մտավորականներին, ցանում է նրանց աշխարհով մեկ՝ ծանոթ, անծանոթ հողերում: Այն մտավորականները, որոնք հենց սկզբից կողմնորոշվեցին դեպի հայրենիքը ու եկան Հայաստան, մայր հողի վրա նորից ծիլեր տվեցին, առավել հասունացան, և զարգացման մեծ հնարավորություններ ստանալով, դարձան խոշոր արտիստներ, իսկ նրանք,

որոնց ժամանակի չար քամին շպրտեց մայր հայրենիթից հեռու՝ անծանոթ երկրներ, օտար միջավայրում, քաղաքական օտար կլիմայի տակ խամրեցին, չորացան և մեծ մասամբ օրիասական ու տիսուր վախճան ունեցան, չնայած իրենց տաղանդով նվազ չէին Կովկաս ներգաղթած արվեստագետներից:

Մինչև այժմ մենք խոսեցինք Մկրտիչ Զանանի բևմական գործունեության առաջին տասնամյակի մասին, գերազանցապես տալով նրա կենսագրության հիմնական գծերը: Այդ տասնամյակը՝ ինչպես ասել ենք նախորդ Էջերում, եղել է արտիստի բեմական որոնումների, թափառական կյանքի շրջանը, երբ, ցանկանալով հանդերձ ամբողջովին նվիրվել հայ թատրոնին, տնտեսական ու քաղաքական պայմանները արգելք են հանդիսացել նրա այդ ծրագրի կենսագործմանը, հնարավորություններ չեն ստեղծել խորացնելու իր արվեստը:

Մենք հնարավորություն չունենք գծագրելու Զանանի արտասահմանյան տարիների արտիստական դեմքը, ցուց տալու թե ստեղծագործական կազմակորման այդ շրջանում նա ինչպես է մեկնաբանել այս կամ այն դերը, ո՞րն է եղել նրա հիմնական ամպլուան, ո՞ր դերերն է, որ նա կատարել է իր արտիստական ընկալման թելադրանքով, ո՞ր դերերը՝ ակամա: Ճիշտ է, մեր բերած փաստերը վկայում են, որ Պոլ-

սում նա բավականաչափ ճանաչված դերասան է եղել, նրան վստահել են առաջնակարգ դերեր, նա նույնիսկ ռեժիսորական որոշ աշխատանք է կատարել, բայց այս բոլորի մասին խոսելիս պետք է միշտ չափանիշ ունենալ 1918—1922 թթ. պոլսական պայմանները, որը կարող էր ստվերը համարվել ադամյանական շըրջանի պոլսահայ բեմի: Բեմական մեծ փորձ ու անցյալ ունեցող ճանաչված դեմքերի բացակայությունը, հարափոփոխ խաղացանկը,—որով սնվում էր պոլսահայ բեմը,— հայ թատրոնի կիսատնայնագործական վիճակը, այս բոլորը խանգարել են շատերի թվում նաև Զանանին՝ լիովին դրսեսորելու իր ստեղծագործական լայն հնարավորությունները, ճշտելու իր արտիստական դեմքը:

Այսպիսով՝ 1922 թ. վերջերին Հայաստան եկող Զանանը դեմ առ դեմ էր կանգնելու նոր հարցեր բարձրացնող, ստեղծագործական նոր մեթոդներով գործող մի արվեստի հետ, որի գաղտնարանները բաց անելու ջանասիրությունը, եռանդն ու իմացությունը բարեբախտաբար ուներ նաև գործադրեց լիովին:

## ՍՈՎԵՏԱՀԱՅ ԲԵՄՈՒՄ

Մկրտիչ Զանանը Հայաստան եկավ այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ ընդամենը մեկ թատերաշրջան բոլորած մեր Պետական թատրոնը մեծ եռանդով լծվել էր սովետահայ թատերարվեստի ստեղծման դժվարին աշխատանքին:

1923 թ. սկզբներից սկսած ամբողջ տասնհինգ տարի Զանանի բեմական գործունեությունը համարայլ է ընթացել Հայաստանի թատերական կյանքի զարգացմանը: Նա ակտիվ կերպով մասնակցել է նոր թատրոնի ձևավորման հետ կապված դժվարությունների հաղթահարման գործին, դժվարություններ, որոնք կապված էին դերասանական կոլեկտիվի, կայուն խաղացանկի ստեղծման և կազմակերպչական ու տեխնիկական շատ խոչընդոտների հաղթահարման հետ:

Նոր թատրոնի դերասանական և ռեժիսորական ուժերը գալիս էին տարբեր երկրներից ու քաղաքներից, բեմական տարբեր ուղղություններով ու ազդե-

ցություններով, սակայն մեծ առավելություն էր այն, որ սովետահայ թատրոնի կորիպը Բիմնականում Գ. Սունդուկյանի պիեսների վրա աճած դերասան դերասանութիններից էր կազմվել, որոնք մինչ այդ մեծ մասամբ խաղացել էին Թիֆլիսում: Դա հնարավորություն տվեց նորաստեղծ բեմին, ինչոք սկզբից կանգնելու ստեղծագործական որոշակի և ճիշտ ուղղություն է անտեսել այն փաստը, որ տարբեր քաղաքներից եկած արտիստական ուժերը այնուամենալիք իրենց տարբեր, երբեմն նույնիսկ հակունիա ոճերով ազդեցություն էին գործում թե՛ խաղացանկի և թե՛ բեմարվեստի վրա:

Զանանը շատ բան ուներ սովորելու Երևանում, իր ուսերից թոթափելու համար խորթ ազդեցությունները, որոնց մասին առաջին տարիներին բազմիցս է նշվել սովետահայ մամուլում:

Երևանում՝ կարող ռեժիսորների օգնությամբ, Զանանը աստիճանաբար ընկնում է հունի մեջ: Լինելով կարդացած, շատ երկրներ շրջած, ուղղամիտ և ազնիվ մարդ, նա մտերմական ամենաանկեղծ կապերի մեջ է մտնում իր նոր ընկերների հետ: Կատակասեր, սրամիտ ու կենսուրախ դերասանը իրեն զգում է հարազատ ընտանիքում, ջերմ ու անկեղծ մթնոլորտում, ազահորեն սովորում է, սովորում և՛ բեմում, և՛ թատրոնից դուրս, նոր կյանքը ընկալում իր բազմազանության մեջ:

Զանանի առաջին դերերը Երևանում գրեթե ան-նըկատ մնացին: Մամուլում ցաք ու ցրիվ տողեր միայն կան նրա մասին: Քննադատ Տիմուսը (Տիգրան Հա-խումյան) 1922—23 թթ. թատերաշրջանի փակման առթիվ գրած հոդվածում, նշելով ընթացիկ տարվա դժվարությունները, թվարկում էր այդ թատերաշրջա-նում ասպարեզ եկած «շնորհալի ուժերին», դրանց թվում հիշում Զանանի անունը:

Զանանը համարվել է «շնորհալի ուժ». ոչ ավելին. և դա միանգամայն հասկանալի է:

Երևանում լուրջ փոփոխության ենթարկվեց Զա-նանի խաղացանկը: Այստեղ նույնպես բեմադրվում էին կլասիկ հեղինակների՝ Շեքսպիրի, Շիլլերի, Մո-լիերի և ուրիշների պիեսները, սակայն բեմադրվում էին նաև հեղափոխական բովանդակություն ունեցող ինքնուրույն և թարգմանական պիեսներ: Նորը հենց այդ էր Զանանի համար և այդ նորն էլ դարձավ լա-վագույն մի դպրոց, որը նրան բերեց, մոտեցրեց իր ժողովրդի կյանքին, նրա մեջ հակում զարգացրեց դե-պի ռեալիստական արվեստը ավելի շեշտակի ու որո-շակի, քան մինչ այդ եղել էր:

Նա շատ արագ կողմնորոշվեց. Վերածնված հայ-րենիքում իշխող գաղափարախոսությունը ռոմանտիկ պաթոսով լցրեց նրա հոգին և որքան էլ դա զարմա-նալի թվա, Հայաստան գալուց ընդամենը 5—6 ամիս

հետո մենք նրան գտնում ենք ո՞չ միայն սոցիալիստական նոր արվեստի գաղափարով խանդավառվողի. այև այդ գաղափարները պրոպագանդողի դերում: Դրա ցայտուն ապացուցը պետք է համարել այն, որ 1923 թ. գարնանը Զանանը, Ամո Խարավյանի հետ միասին հանդես է գալիս կոլեկտիվ թատրոնը կազմակերպողի դերում: Այդ թատրոնի ծրագիրը,— որ թատերագետ Ս. Մելիքսեթյանի վկայությամբ գրել է Մ. Զանանը, լուս է տեսել «Խորհրդային Հայաստան» թերթում Ա. Խարավյանի և Մ. Զանանի ստորագրությամբ: Դա ուշագրավ փաստաթուղթ է և վկայում է թե ինչպես էր պատկերացնում Զանանը թատրոնի դերը մասսաների գեղարվեստական դաստիարակության գործում:

Կոլեկտիվ թատրոնի նպատակները շարադրելով՝ փաստաթղթի հեղինակները գտնում են, որ իրենց նըպատակն է «Ամեն հնարավոր միջոցներով խուսափել ինդիվիդուալ, նեղ հոգեբանական թատրոնից, որտեղ բեղմնավորվում ու իշխում է լոկ անհատական ստեղծագործումը և կատարումները. ստեղծել հավաքական ստեղծագործության ցուցադրիչ մասսայական արվեստ, կոլեկտիվ թատրոն»:

Հետաքրքրական է փաստաթղթի հատկապես այն մասը, որը վերաբերվում է խաղացանկին: Կոլեկտիվ թատրոնի հիմնադիրները շեշտը դնում են ժամանա-

կակից ռուսական հեղափոխական պիեսների վրա (մասնավորապես Ա. Լունաչարսկու պիեսների), իսկ «կլասիկ թատերախաղերի մասին,— ասված է այդ ծրագրում,— վարչության տեսակետը հետևյալն է. նրանցից ոմանք պարունակում են հեղափոխական թափ, մտքերի անջնջելի ճշմարտություններ, մասսայական շարժումների և փոխանցումների սքանչելի կառուցվածք. ահա այսպիսի կլասիկ թատերախաղերը վարչությունը նկատում է նույնքան հարմար մեր որոշված բեմադրության ձևին»<sup>1</sup>:

Խարապյանի և Զանանի ծրագիրը մնաց թղթի վրա: Եականը դա չէ, այլ այն, թե Զանանը հենց առաջին ամիսներից որքան էր խանդավառված ժողովրդական թատրոնի գաղափարով, թատրոնը մասսաների դաստիարակությանը ծառայեցնելու մտքով: Հետագա էջերում մենք կտեսնենք, թե ինչպես էր կենսագործում նա վերոհիշյալ պահանջները՝ իր բեմական գործունեության ընթացքում:

Երևանի Պետական թատրոնում աշխատելու առաջին տարիներին Մկրտիչ Զանանը կատարում է հետևյալ դերերը. հուշարար Սոլոմոն (Ալ. Դյումայի «Քին» պիեսում), Պետրուչիո (Վ. Շեքսպիրի «Կամակոր կնոջ սանձահարումը» պիեսում), Կլավլիոս («Համլետում»), Ղոռօբուդա (Դ. Ռեմիրճյանի «Քաջ

1 «Խորհրդային Հայաստան» 1923 թ. № 92:

Նազարում»), Դուքս (Ա. Լունաչարսկու «Ազատագրված Դոն Կիխոտում»), Ռագին (Ա. Լունաչարսկու «Կարմիր դիմակում»), Արգան (Մոլիերի «Երևակայական հիվանդ» կատակերգությունում), Բարթոլոմէ (Ֆալկոյի «Վարժապետ Բուբուս» կատակերգությունում), Պաստոր (Հառապտմանի «Զրասուզ զանգում») և այլն:

Նշված դերերից մի քանիսը անցողիկ նշանակություն են ունեցել Զանանի ստեղծագործական կյանքում: Առհասարակ նրա վերելքը սովետահայ թատրոնում կատարվել է աստիճանաբար, համառ ու տևական աշխատանքի շնորհիվ:

Զանանը աշխատում էր մասնագիտական լուրջ կրթություն ստացած փորձառու ռեժիսորների հետ, որոնք ուժեղ կերպով ազդում էին դերասանի ստեղծագործական կյանքի վրա, մղում նրան դեպի հեղինակի ստեղծած կերպարի հասարակական քաղաքական տեսդենցների բացահայտումը:

Նրա արտիստական դեմքի ծևավորման գործում նշանակալից դեր են կատարել ռեժիսորներ Ս. Բուրգալյանը և Լ. Քալանթարը, որոնք՝ զինված ռուսական առաջավոր արվեստի խորը գիտելիքներով, աճեցրել են բազմաթիվ արտիստական կադրեր:

1920-ական թվականներին ռեժիսորի միջամտությունը դերասանի աշխատանքում անհամեմատ ավելի

ակտիվ էր: Դա ուներ իր և՝ դրական, և՝ բացասական կողմը: Բացասականն այն էր, որ ռեժիսորը երբեմն քիչ հնարավորություն էր տալիս դերասանին՝ ազատորեն դրսեալու իր սեփական ըմբռնումը, դա ցայտուն կերպով ի հայտ էր գալիս հատկապես կլասիկ կերպարների մեկնաբանման ժամանակ:

Նոր մոտեցման ընդհանուր մղումը հասկանալի էր դասակարգային պայքարի այնպիսի մի շրջանում, երբ հեղափոխություն կատարած պրոլետարիատը կանգնած էր գաղափարական թշնամու դեմ, որն իր դիրքերը հեշտությամբ չէր վիճում: Անհրաժեշտ էր բնուից հանդիսականներին հասցնել կոմունիստական ապագայի իդեալները, խոսել այն ամենի մասին, որով հղի էր պատմական այդ ժամանակաշրջանը:

Ամեն ինչ նոր գաղափարներով մեկնաբանելու ձգտումը, սակայն, որոշ ռեժիսորների մոտ հանգույն էր անցյալի մոդեռնացման: Նրանք, օրինակ, Շերսպիրի, Շիլերի և այլ կլասիկ դրամատուրգների ստեղծագործությունները փորձում էին արհեստականորեն «հեղափոխականացնել»: Այս տենդենցին տուրք էր տալիս անգամ շատ տաղանդավոր ռեժիսոր Արշակ Բուրջալյանը: Նա այդպիսի «նոր մեկնաբանությամբ» է բեմադրել Մոլիերի «Երևակայական Բիվանդ» կատակերգությունը, ուր Արգանի դերը հենց Զանանն էր կատարում:

Բուրջալանը, հետևելով Մեյերինոլդին, այդ կատակերգությունը բեմադրում էր հաշվի չառնելով նրանում պատկերվող ժամանակը, հասարակական հարաբերություններն ու կենցաղը: Բանն այն է, որ մամուլը ոչ միայն չէր քննադատում նման մոտեցումը, այլ ողջունում էր և նշում, որ Բուրջալանին հաջողվել է ներկայացնել առհասարակ հասարակական հարաբերություններ և առհասարակ անձնավորություններ, անկախ տեղից, ժամանակից, բարքերից: Մի ռեցենզենտ, օրինակ, ողջունելով Բուրջալանի նոր մոտեցումը, այնքան էր խանդավառվել, որ խորհուրդ էր տալիս միջամտել հեղինակի տեքստին, նոր մտքեր, գաղափարներ ավելացնել: «Ստեղծվում են սրամիտ դեկորներ,— գրում էր այդ ռեցենզենտը,— զգեստներ, շարժումներ, մոմենտներ, որոնց նպատակն է տալ ընդհանրապես տիպը, անձը, անկախ միջավայրից ու պայմաններից:... Դուք տեսնում եք տիպեր, որոնք իրենց արտաքինով ո՞չ ֆրանսիացի, ո՞չ անգլիացի, ո՞չ հայ, ո՞չ ռուս են, բայց կարող են լինել ամեն տեղացի: Իհարկե նման բեմադրումը շատ ավելի թարմ ու առաջարեմ է... շատ ավելի լավ պիտի լիներ, եթե արտաքին փոփոխությունից բացի կատարվեր նաև բովանդակության որոշ փոփոխություն»<sup>1</sup>:

Իհարկե այս բոլորը իրենց անդրադարձումը պետք

<sup>1</sup> «Խորհրդային Հայաստան», 1923, № 253:

է ունենային դերասանի խաղի վրա: Զանանը եղել է նման նոր մեկնաբանություններով խանդավառվողներից, բայց՝ ի պատիվ նրա, պետք է ասել, դրանից չի տուժել, օրինակ, նրա Արգանի ներքին մարդկային էությունը: Նա այդ կերպարը պատկերել է խորապես ռեալիստորեն: Արտիստը խոշոր աշխատանք էր կատարել Արգանին որպես քայլայված, քաղքենիական դասակարգի ներկայացուցչի պատկերելու, նրա հոգեբանության բացահայտման, համոզմունքների դրսեորման ուղղությամբ, ներկայացնելով նեխած դասակարգի անպետքությունը մարմնավորող մի անձնավորություն, որի մակարուժային էությունը արդյունք էր ո՞չ թե նրա հիվանդագին կասկածամտության միայն, այլ Արգանի պատկանած խավին, հասարակական այն հարաբերություններին, որոնց մեջ գործում էր «երևակայական հիվանդը»:

Զանանը այս միտքն էր դրել կերպարի մեկնաբանության մեջ, հանդես բերելով խաղարկման նկատելի ինքնատիպություն: Նրա խաղը ազատ էր ու անբռնապրոս. նա գտել էր յուրաքանչյուր գործող անձի հետ խոսելու ուրույն ձև, առողանության նրբերանգներ, որոնք բոլորը կարողանում էր օգտագործել հմտորեն, հատկապես արագախոսության ընթացքում: Զանան-Արգանի մեջ երևան էր եկել նաև յուրահատուկ մի մանկամտություն, կարծեք նա գիտակցում

էր, որ բոլորը կարող են խաբել իրեն, զգում էր, որ խաղի նման բան է կատարվում իր շուրջը. մեկ նայիկ էր դառնում, մեկ խորամանկ, դիմացինի միտքը ստուգող, նրա ծրագրերի մեջ սուզվել ցանկացող մի հետախուզվ։ Եվ այս բոլորը՝ դերասանի մոտ հագեցված էր կոմիկական բազմազան երանգներով, դիմախաղի վարպետությամբ։

«Դերասանը այնքան շնորհալի է կատարում իր դերը,— գրում է «Խորհրդային Հայաստան» թերթը,— որ մեզ թվում է թե նրա ամպլուան այդ պիտի համարել։ Դերասան Զանանը ահա չորրորդ տարին է մեր բեմի վրա հանդես է գալիս և մենք դժվարանում ենք մի այլ դեր հիշատակել, որով նա բավարար մեզ այնպես, ինչպես Արգանով։ Նրա միմիկան այնքան հարազատ է, շարժումները բնորոշ, խաղը պարզ և սահուն։ Նա ստեղծագործում է այդ տիպը իր նուրբ խաղով, արժեքավորում է Մոլիերի ստեղծագործությունը»։

Զանանի՝ այդ տարիների հաջողված դերերից մեկը պետք է համարել Դիմանշի փոքրիկ դերը Մոլիերի «Դոն Շուանում»։ Մեծ հմտությամբ կատարված գոիմի և գունագեղ ու ինքնատիպ խաղի շնորհիվ, այս փոքրիկ դերում նա հասավ այնպիսի տիպականացման, ինչպիսին դրսեորել էր իր նշանավոր դերակատարումները՝ Արգանը, Յագոն կերտելիս։

«Դոն Ժուանի» բեմադրության ընթացքում ո՞չ մի տեսարան էսթետիկական այնպիսի հաճուկը չէր պատճառում հանդիսականին, չէր գրավում նրան, որքան այն տեսարանը, որտեղ հանդես էր գալիս Դիմանշը, որպեսպի Դոն Ժուանից պահանջի վաշխով տված իր գումարները։ Այս տեսարանում բեմահարթակի վրա խաղացող Գոն-Ժուան-Փափազյանը, նրա ծառայի դերը կատարող Խաչանյանը և Զանանը մրցում էին իրար հետ, ստեղծելով մի անսամբլային կլասիկ ամբողջություն։ Դոն Ժուանի խորամանկ քայլերը՝ ամեն անգամ, երբ Դիմանշը պատրաստվում էր փող ուզելու, նրա կողմնակի հարցերը, Դիմանշի ու նրա ընտանիքի առողջության, որպիսության մասին, վաշխառուի հարևանցի պատաժանները, — որից հետո անմիջապես նա սկսում էր փող խնդրելու նախադասությունը, — խնդրելու ընթացքում նրա ընդունած տարբեր դիրքերը, ժեստիկովացիայի ու դիմախաղի բազմազանությունը, մերթ խղճալի դեմքով, մերթ ձեռքերը շփելով ողորմություն հայցելը, միշտ կորաքամակ կեցվածքով Դոն Ժուանին հետևելը, — այս բոլորը Զանանը կատարում էր բացառիկ հաջողությամբ։ Ամբողջ այդ տեսարանում, որ թերևս 15—20 րոպե էր տևում, Դիմանշի արտասանած հիմնական նախադասությունն էր. «Ես եկել եի փող խնդրելու»։ Փափազյան-Դոն Ժուանի ճարպիկ ընդմիջումները հնարավորություն

չեին տալիս վաշխառուին՝ արտասանելու իրեն հուզող այդ նախադասությունը, ჩասնելու մինչև մտքի տրամաբանական վախճանը։ Հապիվ էր նա արտասանում «ես եկել եի որ...», ընդհատվում էր նրա ասելիքը Դոն Շուանի մի նոր ու խորամանկ հարցով։ Բայց ինչպես և էր արտասանում Զանանը այդ կիսատ նախադասությունը, եկել բառը սղելով, դարձնելով քմբային, «ես եկեի, ո՛ր...»։

Զանանը հաջողությամբ խաղաց նաև Պետրուչիոի դերը Վ. Շեքսպիրի «Կամակոր կնոջ սանձահարումը» կատակերգությունում, Շպիգելբերգի դերը Շիլլերի «Ավագակներում»։

Կլասիկ խաղացանկի մասին խոսելիս պետք է ասել, որ Զանանը որոշ դեպքերում ընկել է չափազանցության մեջ, խտացրել է հերոսների բացասական կամ դրական կողմերը, անուղղակի կերպով վերադառնալով մելոդրամատիկ խաղացանկի շարժիչ ուժը հանդիսացող չարի և բարու հակադրությանը, չարը միայն չար, բարին միայն բարի ներկայացնելու քարացած ըմբռնմանը։ Այս բանը նկատվել է Կլավոդիոսի դերակատարման մեջ։ Խաղի առաջին մասերում նա այնքան է խտացրել Կլավոդիոսի դաժանությունը, նրան տալով բացառապես անմարդկային գծեր, որ աղոթքի հայտնի տեսարանում չի կարողա-

ցել խաղը տանել նույն բարձրությամբ, պատճառաբանել, մի բան, որը քննադատվել է մամուլում:

Շեքսափիրի, Շիլլերի և Մոլիերի կերպարների մարմնավորման մեջ Զանանը հասել է ակներև բարձրության և դա առաջին հերթին արդյունք է եղել պատասխանատվության այն խորը գիտակցության, որով նա ծեռնարկում էր յուրաքանչյուր դերի ուսումնասիրմանն ու պատրաստմանը: Զանանի հասցեին ասված այն խոսքը, թե նա եղել է «գիտնական դերասան» հաստատում է գտել հատկապես արևմտաեվրոպական և ռուսական կլասիկ դրամատուրգիայի լավագույն դերի կատարման ընթացքում: Նա ամեն մի դեր պատրաստելիս իսկապես որ կատարել է գիտական մանրազնին աշխատանք, խորապես ուսումնասիրել է ժամանակաշրջանը, բարքերը, դասակարգային հարաբերությունները, և որ ամենից կարևորն է, յուրացրել է ներկայացվող պիեսի տեքստը ամբողջությամբ, իր դերն ընկալելով որպես ամբողջի մի մասնիկը, թափանցելով նաև մյուս հերոսների հոգեքանության մեջ: Այս բոլորին նպաստել է, բացի իր արտիստական՝ տվյալներից, նաև այն, որ Զանանը եղել է զարգացած անձնավորություն, գիտակ շատ ժողովուրդների պատմությանն ու արվեստին: Նկարիչ Ս. Ալաջալյանը, որը երեք տարի աշխատել է Զանանի հետ միասին Երևանի Պետական թատրոնում, մեր խորհրդով գրած իր ու-

շագրավ հիշողություններում ասում է. «Զանանը բավմակողմանի կրթություն ունեցող մարդ էր: Նա լավ գիտեր արվեստի պատմությունը և դա ի հայտ էր գալիս հաճախ այն դիտողություններում, որ նա անում էր իմ կատարած էսքիզների մասին, այն ներկայացումների առիթով, որոնց մասնակցում էր ինքը»: Նույն Ալաջալյանը վկայում է, թե որքան բժախնդիր է եղել Զանանը ո՞չ միայն իր դերի, այլև կոստյումի, գրիմի նկատմամբ, թե ինչպես գիշերով հաճախ այցելել է նկարչին, որպեսզի տեսնի թե ինչպես է ստացվում իր կատարելիք դերի կոստյումի էսքիզը, արել է դիտողություններ, տվել խորհուրդներ:

\* \* \*

Հեղափոխական թեմայով գրված պիեսները, հատկապես Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության առանձին դրվագները, քաղաքացիական կրիզները պատկերող երկերը Զանանի, իբրև դերասանի համար կատարյալ նորություն էին:

Մինչ այդ իրական կյանքը երբեք այնքան անմիջականորեն ու թանձր գույններով չէր ներթափանցել Զանանի բեմական արվեստի մեջ, որքան հեղափոխական հերոսների առօրյան ու հոգեբանությունը կերտելիս: Իր պատկերած կերպարներից շատերին՝ առաջնա ծանոթացել էր գրքերից, մինչդեռ նոր դերերը ներ-

կայացնում էին այն մարդկանց, որոնք ապրում և ստեղծագործում էին իր շրջապատում՝ Հայաստանում կամ Ռուսաստանում։ Դրանք իրենց հոգեբանությամբ, համոզմունքներով ու կենցաղով հակադրվում էին քաղքենիական միջավայրին։ Հեղափոխական բռվանդակությամբ գրված պիեսների դրական հերոսները նույն այն կյանքի մարդիկն էին, որի մեջ ապրում էր ինքը Զանանը, նույն կրքերով, նույն առօրյայով։ Իր հերոսների հուզվերը, ապրումները հարազատ էին և իրեն։ Հաճախ նա բեմից արտասանում էր այնպիսի խոսքեր, որոնք լսել կամ արտասանել էր գուցե հենց նախորդ կամ նույն օրը մի ինչ որ տեղ, ասենք՝ ժողովում։

Բայց սխալ կլինի կարծել, թե Զանանը բեմում իր խաղով պատճենում էր իրական կյանքի այս կամ այն երևույթը։ Դերասանի տաղանդից էր կախված կյանքի մարդկանց բեմում այնպես ներկայացնել, որ նրանք բարձրանան առօրեական փաստերի մակարդակից, իրենց սխրագործություններով խանդավառեն հանդիսատեսին և իրենց հայրենասիրությամբ, բանվոր դասակարգի գործի նկատմամբ նվիրվածությամբ, հասարակական քարոյական անշահախնդիր նախասիրություններով ներկայանան իբրև նոր հասարակարգի տիպական անդամները։

Զանանը հոգով կապվում է ռեսուլյուցիան իրենց

ուսերի վրա կրած այդ մարդկանց հետ, սիրում է նը-  
րանց ապնիվ պաթոսն ու ոգևորությունը, բարձր գա-  
ղափարալնությունը:

Այդ մասին նա գրել է. «Մեր հեղափոխությունն  
ու քաղաքացիական կռիվները առանձին շրջան են,  
որոնք պահանջում են ներուժ և պաթետիկ շունչ:...  
Պետք է տալ այդ հերոսամարտերի ներքին խորը սիմ-  
ֆոնիան, որ հաճախ խափանվել է հրացանների  
տրաքոցներով»<sup>1</sup>:

Զանանի այս տիպի դերակատարումները ժամա-  
նակի մամուլում ջերմորեն գնահատվել ու խրախուս-  
վել են: Թերթերի վկայություններից երևում է, որ հե-  
ղափոխական բովանդակություն ունեցող պիեսներում  
նա իր խաղով հուզել է հանդիսատեսին, գեղարվես-  
տական հաճույք պատճառել, նրա մեջ առաջացրել  
բուռն սեր դեպի նորաստեղծ սովետական իշխանու-  
թյունը, ցասումնալից ատելություն՝ դեպի թշնամին:

Այդպես է ներկայացրել Զանանը, օրինակ, Պավել  
Շուռուպովին Ա. Լունաչարսկու «Թույնում»: Նախկին  
բանվոր, իսկ հեղափոխության թեժ օրերին կոմիսար  
Շուռուպովի մեջ նա ընդգծել է շարքային ռուս մար-  
դուն հատուկ ու բնորոշ գծերը, պայքարով տարված  
գործչի հոգեկան գոհունակությունը, որը չի փոխվում

<sup>1</sup> Գրականության և արվեստի բանգարան, Մ. Զանանի  
ֆոնդ:

մեծամտության ու հոխորտանքի: Կոմիսար Շուռուպովը իր հոգու խորքում նույն բանվորն է, միայն այն տարբերությամբ, որ գիտակցում է, թե այժմ իր նմաններն են նոր կյանքի տերերը: Հեռու մնալով կեղծքաղաքարական նորմաներից ու ծիսակատարություններից, Զանանի Շուռուպովը առօրյա փոխարաբերությունների մեջ գերադասում էր պարզն ու անկեղծը: Նրա մոտ հոգեկան քնքշությունը, դյուրազգացությունը, սերը դեպի յուրայինները զուգակցվում էին խիզախության, կամքի մեծ լարման, անհողողողության հետ, երբ նա հանդես էր գալիս որպես սոցիալիստական հայրենիքի համար պայքարող մարտիկ: Զանանը Շուռուպովի մոտ ընդգծում էր կամքի բացառիկ ուժը, լրջությունը՝ պետական գործերը որոշելիս, ստեղծելով մի այնպիսի հերոս, որը պատկանելով հանդերձ շարքային մարդկանց թվին, այսօր իշխող է, դեկավարող, կազմակերպող, աններող՝ թշնամու նկատմամբ, թեկուզ այն լինի իր հարավատը:

Զանանի այս կարգի լավագույն դերերից պիտի համարել նաև Գոդունը Լավրենյովի «Բեկում» պիեսում: Նրա Գոդունը օժտված էր նույնայիսի գծերով, ինչպես Շուռուպովը, նույնապես վինվորագրված հեղափոխության: Զանան-Գոդունի մեջ հանդիսատեսը տեսնում էր ո՞չ միայն լայնախորհ ռուս մարդուն, այլև պատմության մեջ աննախընթաց մեծ հեղափոխու-

թյունը իրականացնողին, մարդու, որի ուսերի վրա էր կանգնած նոր հասարակարգը։ Դերասանը իր նուրբ ու անմիջական, անկեղծ ու խորապես համովիչ խաղով հոգեկան զարմանալի կապ էր ստեղծում իր և հանդիսականի միջև, որը հիանում էր նրանով, հատկապես այն տեսարաններում, որտեղ Գոդունը հանդես էր գալիս կապիտան Բերսենին ուղղողի, օգնողի դերում, ի հայտ բերելով մարդկային ամենաազնիվ ու վեր հատկանիշներ, որոնք հատուկ էին նոր մարդուն և գրավականն էին սոցիալիստական հասարակարգի հետագա ամրապնդման։ Հանդիսականը, բեմում տեսնելով նման հերոսների, հավատում էր նրանց և խոսքին և գործին, հավատում էր՝ որ այն պայքարը, որի մարտիկները ալյափի ազնիվ, անշահախընդդիր՝ հեղափոխության վիճակության մարդիկ են, կպակվի հաջողությամբ։

Զանանի Գոդունը ներշնչել է ալյափիսի հավատ։ «Զանանը խաղում է այս դերն առանձին ոգևորությամբ,— կարդում ենք մամուլում,— նավաստու նախվությամբ և հեղափոխական մեծ թափով։ Նա մեզ ամբողջական պատկեր է տալիս անկեղծ, ազնիվ նավաստու խորը բարության և հեղափոխական վճռականության։ Զանանի խաղն ամբողջական է և տիպիկ»<sup>1</sup>։

<sup>1</sup> «Խորհրդային Հայաստան», 1928, № 53.

Զանանը հեղափոխության փոթորկոտ օրերի փորձությունների, հակարեղափոխական խռովությունների ճնշման մեջ իր մարտական տոկունությունն ու հավատը կոփող ազնիվ կոմունիստի վեհ կերպարն էր ստեղծել դիվիզիայի պետ Բուրավոյի դերում (Ֆուրմանովի «Խռովություն» պիեսում) :

«Բուրավոյի հատկանիշները՝ մաներելու շնորհքը, հեղափոխական կարգապահությունը Զանանը ներկայացրել էր օգտագործելով բեմական իր ճկուն հնարավորությունները, մնալով զուսպ, ազդեցիկ իր լըրջությամբ ու սակավախոսությամբ, ցուցադրելով հաղթական կեցվածք, ծանրախոհ ու կշռադատված շարժումներ, խոսուն դիմախաղ»:

Առհասարակ Ֆուրմանովի «Խռովությունը» 20-ական թվականների լավագույն բեմադրություններից մեկն է եղել, ուր Զանան-Բուրավոյի և Ավետիսյան-Կարավասի ներդաշնակ ու հավասար ուժգնության խաղը հանդիսատեսին լարված է պահել մինչև ներկայացման վերջը:

Դահլիճը միշտ բուռն ծափահարություններով է դիմավորել այն տեսարանը, որտեղ Բուրավոյը պատուիանի մոտ կանգնած հաղթականորեն գոչել է.

— Կարմիր բանակայիններ առաջ, դեպի Ֆեղանա՝ :

Զանանի այս կարգի դերակատարումների հաջողությունը հասկանալու համար պետք է հաշվի առնել այն, որ դասակարգային պայքարի պաթոսով առեցուն այդ ժամանակներում հասարակությունը բացառիկ մեծ սիրով էր դիտում հեղափոխական բովանդակություն ունեցող պիեսները։ Կլասիկ դրամատուրգիան միառժամանակ իր տեղը զիջել էր նոր կյանքի բարդ վերափոխումը ավետող ու պատկերող դրամատիկական երկերին։ Հնի դեմ նորի պայքարը ոգևորում էր ու վարակում հանդիսականներին, կատարելով դաստիարակչական խոշոր դեր։ Աշխատավորությունը գոհունակությամբ էր դիտում իրական կյանքում բորբոքող դասակարգային պայքարի արտացոլումը բեմում։ Դրանով պետք է բացատրել թատրոնի մարդկանցից շատերի արտահայտած վերապահումը կլասիկ դրամատուրգիայի նկատմամբ՝ այդ շրջանում։

Զանանը այս կարգի որոշ դերեր տանում էր ռեզոնյորական պլանով, իսկ դրան նպաստում էր նրա բեմական արտաքինը։ Նկարիչ Սիմոն Ալաջալյանը իր հուշերում գրում է. «Բայց եթե ჩին տրադիցիայի համաձայն որոշենք Զանանի դերասանական ամպլուան, ապա նա իհարկե իդեալական ռեզոնյոր հերոս էր։ Նրա ամբողջ արտաքինը, խոսվածքի ու կեցվածքի մաներան, նրա վերլուծող մտքի ամբողջ պաշարը ձգտում էին դեպի այդ ամպլուան, որը ի դեպ

չէր խանգարում նրան՝ հաջողությամբ խաղալ նաև  
այլ կարգի դերերում»:

Մ. Զանանը ռեպոնյորական պլանով էր խաղում  
Ռազինի դերը Ա. Լունաչարսկու «Կարմիր դիմակ»  
պիետում: Ռազինը եղել է Զանանի լավագույն ստեղ-  
ծագործություններից մեկը, մշակված, մինչև վերջ  
հաղթահարված մի դերակատարում, որը երկար տա-  
րիներ վառ կերպով դրոշմված է մնացել այդ ներկա-  
յացումը տեսնողների հիշողության մեջ: Զանան-Ռա-  
զինը դրսնորում էր այնպիսի հատկանիշներ, որոնք  
ընդգծում էին նրա մեջ սոցիալիստական կարգերի  
կատաղի թշնամուն, բայց չէին ներկայացնում նրան  
որպես մի խրտվիլավի: Ռազինը նրա կատարմամբ  
խրոխտ էր, տեղ-տեղ ամբարտավան, ի հայտ էր բե-  
րում շրջահայաց մարդու սառնարյունություն, զգուշ  
էր, խորամանկ՝ խոսելիս ու գործելիս, դատող, տրա-  
մաբանող: Զանանի հնչեղ ծայնը, պլաստիկ կեցված-  
քը, հարափոփոխ դիմախաղը ավելի էին ընդգծում  
նրա՝ ապրեցիկ մարդու կերպարանքը: Զանանի նպա-  
տակն էր ցուց տալ հակառակորդին իր դասակար-  
գալին մոլուցքի մեջ, ներկայացնել նրան որպես սո-  
ցիալիստական կարգերի անվիճող թշնամի, բայց  
և ներկայացնել իր մարդկային բարդ ապրում-  
ների մեջ: Արտիստական իր այդ նուրբ ու փայլուն  
խաղով Զանանը կարողանում էր հանդիսատեսի մեջ

առաջացնել ավելի ուժգին ատելություն ու արգահատանք դեպի վտանգավոր թշնամին, դեպի այն մարդիկ, որոնք օգտագործում էին դիվանագիտական ու քաղաքական ամենանենգ միջոցներ, որպեսզի իր խանձարուրի մեջ խեղդեն սովետական իշխանությունը: Թե ինչպիսի մեծ տպավորություն է թողել Զանանի Ռագինը, երևում է «Խորհրդային Հայաստան» թերթի հետևյալ վկայությունից.

«Դերասան Զանանը Ռագինի դերում միանգամայն իր տեղումն է: Այդ գիշեր մենք ականատես եղանք խոշոր հետևողականություն ունեցող կուլտուրական դերասանի խորապես և նուրբ խաղին, միշտ խոհուն, հեռատես և սառնասիրտ՝ դիպլոմատների ժողովում, կամ բանվորական միտինգում. նա ցուց տվեց նաև վրիժառու մարդու ցասումն ու վճռականությունը Դիանայի սպանության տեսարանում: Ընդհանրապես դերասան Զանանը այդ գիշեր թողեց հասարակության վրա միանգամայն բավարար տպավորություն»<sup>1</sup>:

Բանվորական հեղափոխական թեմատիկայով գորված պիեսները Զանանին հնարավորություն տվեցին ծանոթանալու աշխատավոր ժողովրդի հոգերանության և կենցաղի հետ: Թափանցելով իր ներկայացրած հերոսների հոգեկան գաղտնարանների մեջ՝ նա

<sup>1</sup> «Խորհրդային Հայաստան», 1924, 28 նոկանմբերի:

իրեն զգացել է մի նոր աշխարհում: Հենց իրական այդ աշխարհում է, որ նա հնարավորություն ունեցավ ուսումնասիրելու և ճանաչելու նոր մարդուն իր առօրյայով ու հոգեբանությամբ:


Եվրոպական մելոդրամատիկ պիեսների՝ մեծ մասամբ անգույն հերոսներից մինչև Շեքսպիրի հոյակապ կերպարները, և ապա մինչև հեղափոխական պաթուվ տոգորված դերերը,— ահա այն ճանապարհը, որ Զանանը անցավ մաքառումներով, իր խոսքերով ասած՝ ծանր երկունքով:

Նրան հատուկ էր քրտնաջան աշխատանքը յուրաքանչյուր դերի վրա: Իր հոդվածներից մեկում նա գրում է.

«Սիսալ է կարծել, թե դերասանի աշխատանքը ներկայացման ժամանակ կատարած խաղարկությունն է: Ոչ: Աշխատանքի ամենադաժան և հոգնեցուցիչ շրջանը կավմում է այն, երբ դերասանը մտահոգված է իր ստեղծագործելիք տիպարը ուսումնասիրելով և նրա ապրումները պատկերելով: Դա ստեղծագործական երկունքի շրջան է, երբ արվեստագետի հոգում ոչ մի անհանո ճվաղոց չի կարող արձագանք գտնել»<sup>1</sup>:

Հայտնի է, որ վերը նշված հնգամյակում, հատկապես առաջին տարիներին, Զանանի խաղի մեջ նըկատելի էր որոշ երգայնություն, ավելորդ վերամբար-

1 Գրականության և արվեստի բանգարան, Մ. Զանանի ֆոնդ:



Արիսողոյ աղա՝ «Մեծապատիկ մուրացկաններ»



Օդին՝ «Պաղպասաց արքա»  
Լևոն Սերգեյ Գրիգորյանի նկարը  
ՏԵԽՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՍՊԱՐՏԱԿ

ծություն ու հանդիսավորություն, դիմախաղի ու շարժուածնի չարաշահումներ: Այս բոլորը քննադատվել են մամուլում և մտերմական միջավայրում, անգամ ամենից նպաստավոր ռեցենզիաների վերջում մենք հանդիպում ենք Զանանին վերաբերող օգտակար դիտողությունների: Այսպես, 1926 թ. «Խորհրդային Հայաստան» թերթը բարձր գնահատելով Զանանի դերենից մեկը, գրում էր. «Կցանկանայինք միայն, որ նա լիովին ազատվեր ֆրանսիական դեկլամացիոն շկոլայից, որից մի քիչ դեռ մնացել է»: Գրեթե բառացի նույն դիտողությունն է արվել նաև մի քանի այլ առիթներով:

Վերոհիշլալ թերությունները հաղթահարվում էին ստեղծագործական համառ աշխատանքով: Երևանի առաջին Պետական թատրոնում ստեղծվում էր իր բոլոր դրսնորումներով խորապես ռեալիստական մի խաղաոճ: Այս տեսակետից բնորոշ էր այն գնահատականը, որ տվել է «Խորհրդային Հայաստան» թերթը դեռևս 1923 թ.: Ամփոփելով 1922—23 թթ. թատերաշըրջանի արդյունքները, այսինքն այն թատերաշոշանի, որը թատրոնի ստեղծագործական կոլեկտիվը համալրվել էր նոր ուժերով, (Վ. Փափառյան, Մ. Զանան, Հ. Ներսիսյան և ուրիշներ), թերթի ռեցենզենտ Տիմուսը (Տիգրան Հախումյան) գրում էր.

«Ծանր, դժվարին պայմաններում անցավ այս թա-

տերաշրջանը, բյուրավոր տագնապներով լեցուն և հազար ու մի արգելառիթ պատահարների ենթակա, նոր հովերի ու գեղարվեստական նոր պահանջների թափը որոնումների և նոր գյուտերի անհրաժեշտության առջև կանգնեցրեց մեր թատրոնը»<sup>1</sup>:

Ուեցենպենտը իրավացիորեն այդ բոլոր դժվարությունների հիմքում տեսնելով անցյալի հայ թատրոնի անկայուն վիճակը, գոհունակությամբ նշում է, որ սովետահայ երիտասարդ թատրոնը նկատելի հաջողություններ է ծեռք բերել դերասանական նոր ուժերի պատրաստման ուղղությամբ:

\* \* \*

1928—1932 թթ. Զանանը աշխատել է աղբբեջանական թատրոնում, Բանվորական թատրոնում, Լենինականի պետական՝ 2-րդ թատրոնում, Մասնակցել է Երևանի պետական թատրոնի գաստրոլներին Թիֆլիսում և այլն:

Այս շրջանում նա ավելի շատ հանդես է եկել որպես թատերական գործի ակտիվ կազմակերպիչ, ռեժիսոր, քան որպես դերասան:

Ուստի տարօրինակ չպետք է թվա, եթե ասենք, որ այդ տարիների ընթացքում նա քիչ բան է ավելաց-

1 «Խորհրդային Հայաստան», 1923, 6 ապրիլի:

թել նախորդ հնգամյակում ձեռք բերած իր բեմական հաջողությունների վրա, թեև ունեցել է նշանակալից դերակատարումներ հատկապես Լենինականի թատրոնում աշխատելիս (1930—1931)։ Այդ թատերաշրջանում Զանանը կատարել է հետևյալ դերերը՝ Քաղաքագլուխ (Գոգոլ—«Ուկիայոր»), Ժեներալ (Ս. Բաղդասարյան—«Մարոկկո»), Ելցին (Դ. Շեգով—«Վերածուլում»), Քոչար (Ի. Միկիտենկո—«Դիկտատուրա», փոխադրություն S. Հախումյանի), Մորիս (Գավենկևիր—«Նապոլեոնի արշավանքը») և այլն։

Այս դերերից ամենից շատ հաջողվել են Ժեներալը և քաղաքագլուխը։ Ֆրանսիական կյանքին, կենցաղին, նիստ ու կացին, լեզվին ծանոթ արտիստի համար ի հարկե մեծ դժվարություն չէր Ժեներալի դերի հաղթահարումը։ Ինչ վերաբերում է անման Գոգոլի քաղաքագլուխին, ապա այդ կերպարը մարմնավորելու հետ կապված դժվարությունները Զանանը կարող էր հաղթահարել միայն տքնածան աշխատանքով, Գոգոլի պատկերած կյանքի բազմակողմանի ուսումնասիրության միջոցով։ Եվ հենց այդ էլ դրվատել է ժամանակի մամուլը, դերասանի պատկերած քաղաքագլուխի մասին արտահայտվելիս։

Նկատի ունենալով, որ այս դերերը, այնուամենայնիվ, Զանանի ստեղծագործական կյանքում էափկողիկ բնույթ են կրել, ընդարձակ չենք խոսում դրանց մասին։

\* \* \*

Զանանի ստեղծագործական կյանքի ամենաբուռն զարգացման ու հասունության շրջանն է հանդիսանում 1932—1937 թթ. հնգամյակը, երբ նա բարձրարվեստ կատարման է հասցնում մի քանի դերեր, իրեն դրսերում է որպես հմուտ ռեժիսոր և իր «Շահմանե» պիեսով՝ հաստատուն տեղ է գրավում սովետահայ դրամատուրգիայում:

Այս շրջանում նա շատ դերեր է խաղացել, ինչպես կլասիկ խաղացանկում, այնպես էլ սովետական կյանքը արտացոլող պիեսներում: Դրանցից են Յագոն, Մակբեթը, Սատինը, Օգսենը, Աբխոզում աղան, Բարխուդարը և այլն՝ կլասիկ խաղացանկից, Արկադի Մարտինիչ Կիրակոսովը (Վ. Վաղարշյանի «Նավթում»), Մարտինովը (Դ. Դեմիրճյանի «Ֆոսֆորային շողում»), և այլն՝ ժամանակակից պիեսներից: Նա խաղացել է թարգմանական այլ պիեսներում էլ, ինչպես Շանշիաշվիլու «Արտենում»՝ իշխան Զաալ, Ի. Միկիտենկոյի «Պատվի գործում»՝ Կալավարից, Ա. Աֆինոգենովի «Ահում»՝ Ցեխավոյ և այլն:

Ներկա գրքումկի ծավալը թույլ չի տալիս մի առ մի խոսել բոլոր դերերի մասին: Դրանցից մի քանիսը, հատկապես տվյալ ժամանակաշրջանի կյանքը արտացոլող և մեր դրամատուրգիայի պատմության մեջ մնայուն հետք չթողած պիեսներում կատարած դերե-

րը, թիչ բան են ավելացնում այն ամենի վրա, ինչ ծեռք էր բերել Զանանը մինչ ալդ: Մենք կանգ կառնենք այն դերերի վրա, որոնք բնորոշ են և կարևոր՝ դերասանի ստեղծագործական կերպարը ինչոր չափով ամբողջացված ներկայացնելու համար:

Նախ շեքսափիրյան կերպարների մասին: Շեքսափիրի պիեսներում Զանանը խաղացել էր դեռևս Կ. Պոլսում. Շեքսափիրյան կերպարներով նա շարունակել էր խանդավառվել Երևանում, կատարել Յագոյի, Պետրոչիոլիի, Կլավդիոսի դերերը, տալով նրանց նոր մեկնաբանություն, ճգտելով իր խաղում ընդգծել սոցիալական հակամարտությունները: Նա ծեռք էր բերել ալդ հերոսների պատկերման զգալի փորձ, բազմակողմանիորեն լուրացրել էր առհասարակ անզիական դրամատուրգիան, ուսումնասիրել ժամանակը, միջավայրը, հասարակական քաղաքական հարաբերությունները:

Յագոյի դերը մի քարձրակետ է Զանանի ստեղծագործական կյանքում: Նախորդ տասնամյակում, նույնիսկ դրանից էլ առաջ, նա մի քանի անգամ առիթ էր ունեցել հանդես գալու որպես Յագո: Սակայն 1932 թ. նրա Յագոն, որպես ավարտուն կերպար, սպետահայ բեմի նվաճումներից էր, որով կարող էր պարծենալ ամեն խոշոր թատրոն: Բեմում նա համարված էր Վահրամ Փափազյանի Օթել-

լոյի հետ: Արդարությունը պահանջում է ասել, որ Վ. Փափազյանը քիչ է ունեցել այնպիսի տաղանդավոր Յագո խաղընկեր, ինչպիսին եղել է Զանանը: Երբ Փափազյան-Օթելլոն և Զանան-Յագոն բեմի վրա էին, մեկն իր դյուրահավատությամբ խանդին զոհ դարձած, մյուսն իր խարդախությունների լայն ցանցը բացած, հանդիսասրահը ապրում էր գերազույն բավականության անբացատրելի զգացում՝ ամբողջովին ծովակելով բեմի հետ. նա սրտատրով հետևում էր բեմահարթակի վրա կատարվող դեպքերին, արտասանվող ամեն մի նախադասությանը: Նրանց ամեն մի դիալոգը, շարժումը պատճառաբանված էր, իմաստավորված, խելացի ու տպավորող, համովիչ ու ազդեցիկ. Փափազյան-Օթելլոյի խանդի ահավոր տեսարանում Զանան—Յագոյի ցինիվմով լի դեմքի արտահայտությունը, հետո նշանավոր խոսքերը.

«Ո՞ն, զգույշ, տե՛ր իմ, խանդառությունից.

Դա այն նիվաղն է կանաչ աշերով,

Որ ինքն է ստեղծում այն կերպուրք, որով սնվում է,

Զանան-Յագոն արտաքուստ այնքան հեզ էր, հոգատար իր տիրոջ պատվի նկատմամբ, հուզված նրա հետ կատարված անախորժության համար, որ մի պահ, միայն մի պահ, կարծեք թվում էր, թե նա այն չէ, ինչ է և այդ րոպեն է, որ ավելի համովիչ, բայց ավելի հուպիչ էր դարձնում Օթելլոյի հայտնի խոսքերը.

«Արտաք կարգի պարկեցտ մարդ է սա, և հմուտ մտքով, գիտե մարդկային ամեն մի գործի բուն էությունը»:

Հետո՝ արդեն «ապացուցների» տեսարանները՝ բնի մեջ Կասիոյի խոսելը, թաշկինակի պատմությունը, այս բոլորը Զանանը մատուցում էր բեմական բազմազան ու բազմապիսի եղանակներով, Օթելլոյին աննկատելի մնացող կարճ ռեպլիկների վարպետ օգտագործումով, մինչև այս գերագույն պահը, երբ Յագոն հեռանում է Օթելլոյից, ցինիվով լի ակնարկը զցած իր մոլորուն տիրոջ վրա, ասելով.

«Զեր անձնվե՛րը մինչև հավիտյան»:

Մի հոգեվիճակից մյուսը անցնելը հաճախ կատարվում էր նույն ակնթարթում: Մի րոպե առաջ տիրոջ հետ խոսելիս անսահման հեզություն, հարգանք, սեր և երախտագիտություն արտահայտող նրա դեմքը հաջորդ րոպեին,— առանձին ասված մի ռեպլիկի պահին,— դառնում էր ահավոր, դուրս ցայտեցնելով նրա ճիվաղային ամբողջ հոգին, ներքին վտանգավորությունը:

Զանան-Յագոն գեղեցիկ տղամարդ էր,— որը և հնարավորություն էր տալիս նրան հուսալու անգամ Դեզիեմոնայի սերը,— արտաքինից բարի էր, Օթելլոյի հետ զրուցելիս՝ նույնիսկ համակրելի: Գծուծ ներքնաշխարհը և արտաքինի այդ փետուրները՝ հակադրու-

թյան մեջ մտնելով, ավելի էին ընդգծում նրա ճիշաղային էությունը և խոր ատելությամբ լցնում հանդիսականների սրտերը դեպի այդ գեղեցիկ, բայց չար մարդը, որի ուղեղը ընդունակ էր ոճիրներ հղանալու, սիրտը՝ հաճույք ստանալու անմեղ մարդկանց ողբերգություններից:

«Խորհրդային Հայաստան» թերթը Զանանի ռեալիստական այդ խաղը գնահատելիս նշում էր, որ նա «իր հոյակապ խաղով ապացուցում էր Շեքսպիրի այն հանճարեղ միտքը, թե դեմքը հոգու շատ վատ հայելին է: Այս Զանանի խաղը ցուց էր տալիս, որ ամենադիշային ծրագրերն անգամ կարող են կազմվել ժողովական ու կատակով և այս մոմենտները, մանավանո մոնուգները Զանանի Յագոն դարձնում են տիպական, լրիվ ու համովիչ»:

Յագոն Զանանի գլուխ-գործոց դերերից էր:

Իրավացի է Վահրամ Փափազյանը, երբ խոսելով Մ. Մանվելյանի Յագոյի մասին, գրում է. «Հետագայում լավագույն Յագոն Սունդուկյանի բեմում եղավ Մկրտիչ Զանանը»<sup>1</sup>:

1933 թ. Գ. Սունդուկյանի անվան պետական թատրոնում բեմադրվեց «Մակրեթը»: Նախքան պրեմիերան՝ մամուկում սկսվեց աշխույժ դիսկուսիա: Ընդար-

<sup>1</sup> Վ. Փափազյան, «Հետադարձ հայացք», հատ. 2, էջ 14:

ծակ հոդվածաշարքով հանդես եկավ բեմադրող ռեժիսորը բացահայտելով իր ըմբռնումներն ու նկատառումները, այն, թե ինչպես պետք է հասկանալ Մակրեթի կերպարը: Հանդես եկան և ուրիշները: Նկատելի հետաքրքրություն ստեղծվեց պիեսի շուրջը:

Հակառակ դրան՝ բեմադրությունը ըստ էության ըննություն չբռնեց: Եվ այս բանում ո՞չ այնքան մեղավոր էին դերակատարները, հատկապես Մակրեթի դերակատարներ Մ. Զանանն ու Հ. Ներսիսյանը, որքան ռեժիսորը, որը միանգամայն նոր, բայց սխալ մեկնաբանություն էր տվել պիեսին, կատարել անտեղի կըրճատումներ, ավելացրել այլ պիեսներից վերցված մըտքեր, որի հետևանքով Շեքսպիրը դարձել էր գրեթե մի սոցիալ-դեմոկրատ, իսկ բեմահարթակի վրա քիչ էր մնում ցուց տրվեին հեղափոխական սիտուացիաներ:

«Մակրեթի» բեմադրությունը խստորեն քննադատվեց մամուլում: Ուեժիսորը հարկադրված եղավ հրապարակով ընդունել իր սխալները:

Ինչ խոսք այս բոլորը պետք է բացասական անդրադարձում ունենար պիեսի գեղարվեստական կատարման վրա: Ուեժիսուրայի նման միջամտությունը հնարավորություն չէր տվել Մ. Զանանին և Հ. Ներսիսյանին՝ խորանալու Շեքսպիրի բարդ կերպարի հոգերանության մեջ:

Մեր խոսքը մասնավորացնելով Զանանին, պետք  
է ասել, որ նա Մակբեթին ընկալել է, մատուցել որ-  
պես դաժան մի մարդու, որը ընդունակ է միայն ոճի-  
րի ու արյան: Նման միակողմանիությամբ զարգաց-  
նելով Մակբեթի կերպարը, նրա մեջ խտացնելով մի-  
այն վայրենի բնապդը,—և այդ հատկանիշների մարմ-  
նավորման մեջ էլ ցուցաբերելով իր խոշոր տաղան-  
դը,— Զանանը զինաթափ էր եղել նույն Մակբեթի  
այլ հատկանիշների մարմնավորման առաջ՝ խոր-  
իող, բուռն ապրումներ ունեցող Մակբեթի հո-  
գեբանությունը գծելու մեջ: Զանանը Մակբեթի  
չարությունը, դաժանությունը, անողոքությունը այն-  
քան էր ընդգծել, որ դրանով այդ կերպարը մա-  
սամբ մոտեցրել է Յագոյին, մինչեւ Մակբեթն իր  
հոգեբանական կոմպլեքսով տարբեր էր Յագոյից: Յա-  
գոն յուրաքանչյուր ոճիրից, դավադրությունից հետո  
ապրում է հոգեկան բերկրանք, Մակբեթը նման դեպ-  
քերում ընկնում է ծանր ապրումների մեջ, հուզվում է,  
գալարվում, որոնք ընդգծում, առավել բարդացնում են  
շեքսափիրյան այդ կերպարի բուն էությունը: Մամուլը  
իրավացիորեն հարց է տվել. Եթե այդքան դաժան էր  
Մակբեթը, էլ ինչո՞ւ էր նա տառապում, քանի որ նա  
վախսկոտ էլ չէր, իր մեջ ուժ էր գտնում մենամարտելու  
Վրկանի վագրի հետ, միայն թե չտեսնի իր ոճրագոր-

ծությունների հետքերը: Կնշանակի նա ոճիրը գործելուց հետո սարսափում էր նույն այդ ոճիրից:

Զանանի Մակրեթի մասին թատերագետ Ս. Մելիք-սերյանը գրում է.

«Նա լավ է միայն խաղի որոշ մոմենտներում, երբ անդորրություն, կամ կասկածներ է ցուց տալիս, և կամ վճռում է դիմել սպանության և ուզում է Բանկոյին ոչնչացնել, կամ ապատիա զգալ ու վերջին մարտի ելնելու վճռականությամբ համակվել, իսկ երբ տասանվում է, հոգեկան տանջանք է ապրում, կամ բարոյական ուժեղ կսկիծներ ունենում ու սարսափելի մտապատկերներից հալածվում, այդ ժամանակ նրա խաղը անկեղծ չէ և մեզ ամենափառ չի համոզում»<sup>1</sup>:

Զանանի այս շրջանի դերերի մեջ, անտարակուս կարևոր տեղ է գրավում Սատինը:

Զանանը բացառիկ մեծ սեր ու երկրուղածության հասնող հարգանք է ունեցել պրոլետարական գրականության մրրկահավ մեծ Գորկու նկատմամբ, ինտաքրքրվել է նրա ստեղծագործությամբ՝ Հայաստան գալու առաջին օրերից, ուսումնասիրել է, խանդավառվել: Նա այն երջանիկ մարդկանցից է եղել, որոնք առիթ են ունեցել անձամբ տեսնելու և ճանաչելու Գորկուն, զրուցելու նրա հետ:

<sup>1</sup> «Խորհրդային արվեստ», 1933 թ. № 5:

Զանանը գրել է այդ հանդիպումից ստացած իր տպավորությունները, որտեղ երևում է նրա անսահման սերն ու հարգանքը «Հատակումի» հեղինակի նկատմամբ:

«Խորհրդային գրողների համամիութենական առաջին համագումարում, առաջին անգամ ես տեսա Գորկուն,— գրում է նա,— հափշտակությամբ և երկար դիտեցի նրան: Աստված իմ, կյանքի դաշնության ինչպիսի՝ կնիք էր դրոշմված նրա դեմքին: Գիտեի, որ պրոլետարական գրականության այդ հսկան վաղուց է, որ շրջապատված է նյութական բարիքների բոլոր պայմաններով, բայց դաժան անցյալի հետքերն անջնջելի էին նրա երեսից: Վիթխարի հասակով վոլգացի այդ մարդու ձայնը, մաշված թոքերից խիստ նը-վակ էր հնչում: Հիշում եմ նրա բեմ բարձրանալը, ի պատիվ իրեն հուտնկայս և երկարատև ծափահարությունից իր դժգոհությունը, կինոնկարման համար, դեմքին ուղղված լուսարձակների դեմ իր բողոքը: Ականջիս դեռ հնչում է կենսափիլիսոփայությամբ հագեցած իր ճառը, մեր գրականության մարտական խընդիրներին նվիրված, աչքիս առաջ պատկերվում են նստվածքի, լսելու, թութունը փաթաթած՝ մուշտուկի մեջ անցկացնելու, իր բեխները սրբելու ձևերը: Անմոռանալի է ինձ համար, նրա աչքերի և դեմքի խստորեն ներթափանց արտահայտությունից հանկարծակի ման-

կական անմեղունակ ժպիտը: Անջնջելի կմնա ինձ համար նրա պարզությունը»<sup>1</sup>:

Դա նույն այն թվին էր, երբ Զանանը լարված աշխատանք էր կատարել Գորկու «Հատակում» պիեսում պատկերվող կյանքը բազմակողմանիորեն ուսումնասիրելու, հատկապես Սատինի կերպարի ընկալման հետ կապված դժվարությունները հաղթահարելու ուղղությամբ: Սատինը շատ է վբաղեցրել Զանանին, վրդովել նրա էությունը, դարձել նրա մտասնեռման առանցքը՝ երկար ամիսների ընթացքում: Ինչի մասին էլ որ մտածել է, միջամտել՝ է Սատինը, հարկադրել մոռանալ ամեն բան, վբաղվել իրենով, հասկանալ իր վիշտը: Նա հոգով փոխադրվել է արտաքուստ սովորական, սակայն խորքում փոթորիկներ պահող այդ մարդու կաղապարի մեջ, հաղորդակից դարձել նրա կյանքի գաղտնիքներին, իմացել նույնիսկ այնպիսի մանրամասնություններ, որոնք չկան պիեսում, բայց չեին կարող չլինել Սատինի կյանքում:

Ստեղծագործական նման երկունք հաճախ է ապրել Զանանը, սակայն դրանցից և ո՞չ մեկը չի կարող համեմատվել Սատինը բեմական աշխարհ բերելու համար՝ արտիստի ապրած երկունքի հետ:

«1933—34 թատերաշրջանին — գրում է նա, ինձ

<sup>1</sup> Գրականության և արվեստի բանգարան, Մ. Զանանի ֆոնդ:

Վիճակվեց առաջին անգամ խաղալ Գորկու «Հատակումի» մեջ Սատին: Շափերի կարծիքով իր պատմական դերն արդեն ավարտած այդ տաղանդավոր պիեսը, այնուամենայնիվ փոթորկեց իմ հոգու աշխարհը: Այն խոսքերը, որոնց հուզմունքով վերապրում էի բեմի վրա, զգում էի, որ հաղորդվում են հանդիսատեսին նրան ավելի լավ մարդ դարձնելու համար: Ցուրաքանչյուր ներկայացումից հետո դեռ իմ մեջ շարունակվում էր վսեմ մի հուզում, զգում էի բարձրագույն տրամադրություն և ներքին տարօրինակ թեթևություն. կարծես հոգիս լոգանք արած լիներ: Հոգեկան այս գերագույն հաճույքի համար ես ներքնապես ինչքա՞ն շնորհակալ եմ եղել Գորկուց»:

«Հատակումը» Երևանում առաջին անգամ բեմադրվել էր 1928 թ. և մեծ հաջողություն էր ունեցել: Մամուլում նշված է, որ 1932 թ. բեմադրության ժամանակ «Խումբը ընդհանուր առմամբ խաղում էր իր ուժերից ցածր որակով: Կաստակավոր դերասաններ Գ. Ավետյանի և Մ. Զանանի հաջողված խաղերը, ցավոք, չեին կարող փրկել դերակատարներից մի մասի միջակ և մի մասի թույլ խաղակատարումը»:

Անկախ այս ընդհանուր բնութագրից, Զանանը այդ բեմադրության ընթացքում ստեղծեց իր գլուխգործոց դերերից մեկը: Սատինի կերպարը մարմնավորելիս նա կուգահեռ զարգացնում էր երկու գա-

ղափար՝ մի կողմից իր հերոսի ողբալի կենսավիճակի ցուցադրումով պատմել հանդիսատեսին, թե կապիտալիստական հասարակարգում մարդն ինչ ծանր ու խոր ճգնաժամ է ապրում, մյուս կողմից՝ դուրս գալով այդ վիճակի պասսիվ ցուցադրումից, գորկիական ոչընչացնող քննադատությամբ ժխտել այդ կարգերը, ցուց տալ նրանց ներքին փոտածությունը։ Զանանը այս երկու մոտիվները արտահայտում էր խորը համոզչականությամբ և ուժով, գործադրելով բեմական իր բոլոր հնարավորությունները։

Ներկայացումը հանդիսականի վրա թողնում էր ծանր, ճնշող տպավորություն։ Ոչ շքեղ սենյակներ, ոչ ճոխ կարասի. կեղտոտ, անհրապույր նկուղներ, որ տեղ երևում է կյանքի հատակում թապլտկող, կյանքից հարվածված ու խեղված մարդկանց արտաքուստ գորշ մի զանգված, որտեղ կա և՛ թղթախաղ, և՛ ալկոհոլ, և՛ կոհիվ, վիրավորանք ու հայրոյանք, կա դաժանություն, անտարբերություն դեպի ամեն ինչ։ Այդ անհրապույր միջավայրի հարազատ անդամն է Սատինը։ Հենց սկզբից Զանան Սատինը զգացնել էր տալիս իրեն։ Նրա խռմփոցը, հանդարտ, ծուլ-ծուլ հորանջելով զարթնելը, «այն ո՞վ էր երեկ ինձ ծեծում» առաջին բառերը, արդեն որոշ չափով սահմանապատում էին նրան հատակի մյուս մարդկանցից և հանդիսատեսին մղում դեպի թախտի վրա պառկած այդ

տարօրինակ էակը, որի հետ, չգիտես ինչու, կապվում էր մարդ հոգեպես, ուզում, որ նա խոսի, պատմի իր ով լինելը: Ու նա սկսում էր ասել ճշմարտություններ, սեղմ, լակոնիկ նախադասություններով, որոնք արտասանում էր Զանանը այնքան հմտորեն, հստակ առոգանությամբ, անկեղծ շեշտով, ամեն մի բառը տեղ հասցնելով: Դերասանի հետ վիճելիս, երբ վերջինս ասում էր, թե մի անգամ նրան այնպես կծեծեն, որ կսպանեն, Զանան-Սատինը նվազկոտ, թախծոտ ակնարկով դառնում էր դեպի դերասանը և մի աննկատելի, դառը ժպիտ խաղացնելով տառապալից դեմքին, ասում էր.

— Իսկ դու տխմար ես:


— Ինչո՞ւ:

— Որովհետև երկու անգամ սպանել չի կարելի:

Ո՞չ մի բան չէր կարող այնքան արտահայտիչ դարձնել հատակի մարդկանց այդ վիճակը, որքան Գորկու այդ նախադասությունը, որ արտասանում էր Զանանը արտաքուստ գրեթե անտարբեր, հենց այնպես, առանց որևէ հանդիսավոր ձևի, բայց արտասանում էր այնքան բնական, որ ցնցում էր ամենավերջին նստարաններում նստած հանդիսականներին:


Զանանը Սատինի կերպարին տալիս էր ողբերգական երանգ, միշտ մռայլ, թախծոտ, շրջապատի նկատմամբ անտարբերի «դիմակ»:

Տեսարան «Բեկում» Աերկայացումից։ Զարից՝ Հանունք Գողոսնի դերում։





Մակրեպ՝ «Մակրեպ»



Այս հոգեվիճակում նա արտասանում էր «Երբ ես  
դեռ փոքր տղա էի» նախադասությունը, որը մի պահ  
կարծեք խլում էր նրան այդ հոգեբանությունից,  
գորշ միջավայրից ու գցում ծաղկավետ մի պուրակի  
մեջ, որտեղ խաղում է նա որպես երեխա: Հետո՝ «գի-  
տե՞ս, ես կրթված մարդ էի» ապա՝ «Բութնով, ինձ մի  
հինգ կոպեկ տուր»:

Սատինը հատակի մարդ է և իր սոցիալական  
դրությամբ, և՝ հոգեվիճակով: Նա խաղամոլ է, հայրո-  
լող: Առօրյա ծանր վիճակը նրան չի մտահոգում, ჩու-  
զում: Նա կորցրել է ամեն, ամեն ինչ, այլևս ոչինչ  
չունի տանով տալու: Նրա հոգում կան մարգարիտ-  
ներ, որոնք արտաքուստ թվում են, թե թաղված են տըղ-  
մի մեջ, բայց հանկարծ փայլվլում են, ու այդ փայլի  
տակ ավելի մռայլ ու դաժան տեսք է ընդունում «հա-  
տակը»: Զանանը գորկիական մտքի այդ մարգարիտ-  
ների ցուցադրման մեջ էր, որ անմրցելի էր, ինքնա-  
տիպ: Դուրս չգալով հատակի մարդկանց իր վիճա-  
կից, գեղարվեստական խորը ընդհանրացումներով,  
արտահայտչական նուրբ ու բազմազան միջոցներով  
նա ներկայացնում էր բնության գերագույն ստեղծա-  
գործությունը հանդիսացող մարդու գահավեժ անկու-  
մը: Զանանը կերպարի ողբերգական կողմը հմտորեն  
զուգակցում էր խոհականության հետ, Սատինի փի-  
լիսոփայական դատողություններին տալով նկատելի

---

լրջություն, խուսափելով վավեշտից անգամ այն հատվածներում, որտեղ Գորկու սրամիտ բնութագրումները կարող են նման բան թելադրել:

\* \* \*

Պարոնյանական դրամատուրգիայում Զանանը իր տարերքի մեջն էր: Ո՞չ մի միջավայր այնքան հարազատ չէր նրան, որքան Պարոնյանի կատակերգություններում պատկերված միջավայրը, ցուցադրված մարդիկ, որոնց նա հանդիպել էր Պոլսում ամեն քայլափոխում, եղել նրանց հետ, հաղորդակից դարձել նըրանց զգացումներին, համոզմունքներին, ապրել նույն կենցաղով, նույն առօրյայով: Իսկ լեզուն, իր բարբառային ուժեղ ու ընդգծված առանձնահատկություններով, հենց իր լեզուն էր, որով յուրայիմների, համարաքացիների հետ սիրում էր խոսել անգամ Երևանում: Պետք էր տեսնել մտավորականության ժամանակավայրերում Թոթովենցին, Զանանին, Աճառյանին և Արա Սարգսյանին, Հրաչյա Ներսիսյանին, Վ. Փափառյանին ու այլոց, նարդու կամ ճաշի սեղանի շուրջ պրուցելիս, կատակելիս, բարբառային հյութեղ ոճով դեպքեր պատմելիս, վիճելիս՝ համոզվելու համար, թե որքան հարազատ էր բեմից հնչում արևմտահայերնը, մասնավորապես Պոլսի բարբառը, մեծ մասամբ նույն այդ մարդկանց բերնից:

Անմոռանալի էր Զանանի Օգսենը: Նա միանգամայն լուրովի էր ըմբռնում Օգսենին: Իր դերակատարման ընթացքում հաճախ էր հանդիսականներից կորպում լիաթոք ծիծաղ, բայց կորպում էր ո՛չ թե ի հաշիվ էժանագին ժեստիկուլյացիայի, ծամածռությունների, միմոսությունների, այլ իր արժանիքը գիտակցող մարդու լրջության ու բուրժուական արդարադատությունը բնորոշող դատարկ ֆրազների կոնտրաստի ցուցադրումով, որը կրկնակի ուժ էր ստանում Պարոնյանի խոսքի կոմիզմի շնորհիվ:

Զանանի Օգսենը արտաքին հատկանիշներով լուրջ մարդ էր, ուներ առերեվույթ խելոքություն, իր մասնագիտության խորը գիտակցություն: Կոմիկական վիճակը առաջանում էր այդ արտաքին լրջությունից ու նրա խոսքի, սնամեջ գաղափարների բախումից: Դիմախաղը նա օգտագործում էր իր դերին լրջություն հաղորդելու համար և ո՛չ ընդհակառակը:

Զանանի կատարողական արվեստի ամենափայլուն նմուշներից մեկը կարելի է համարել այն տեսարանը, որտեղ Օգսենը սովորեցնում է Պաղտասարին դատաստանական խորհրդի առաջ արտասանելիք խոսքերը: Զանանը այդ ամբողջ տեսարանը վարում էր վերին աստիճանի հմտությամբ, ամեն մի դետալ, միզանցեն մշակած, առանց գոռում-գոչումի և ծամածռությունների, ինչպես անում են ուրիշները, են-

թադրելով, թե Օգսենի դերը որքան ավելի կոմիկական պլանով տանեն, այնքան ճիշտ լուծած կլինեն, մանավանդ որ դահլիճը,— դերասանին գայթակղեցնող այդ փորձաքարը,— հաճախ քաջալերում է նման մոտեցումը՝ լիաթոք ծիծաղով:

Զանանը Օգսենի արտաքին շարժուծների, լրջության և նրա դատողությունների հակադրության վրա էր կառուցում դերը, հարազատ մնալով հեղինակին: Պետք է հաշվի առնել, որ Պարոնյանը այդ հերոսին չի տվել խեղկատակային կերպարանք: Նա տիպիկ բուժուական փաստաբան է, որը հարգանք է վայելում իր միջավայրում. էականն այստեղ ժամանակի արդարադատության մերկացումն է սրամիտ այն դատողություններով, որ նա անում է: Որքան կշահեր Օգսենի մեր օրերի դերակատարումը, եթե հաշվի առնվեր Պարոնյանի տեքստից բխող նման մոտեցումը, որ իր կլասիկ մարմնավորումն էր գտել Զանանի մոտ:

Զանանի խաղի մեջ ուշագրավ էր նաև մի այլ հանգամանք: Նա խորապես յուրացրած լինելով Պարոնյանի երգիծանքի հատկանշական կողմերը, լավ տիրապետելով տեքստին, ուներ այդ տեքստը տեղ հասցնելու մեծ վարպետություն. Խոսքը միայն արևմբտահայ լեզվին տիրապետելու կամ բարբառային առանձնահատկությունները պահպանելու մասին չէ, որը ի հարկե շատ կարևոր էր և Զանանը սքանչելի

կերպով կատարում էր, խոսքը պարոնյանական սրա-  
մտությունները, խոսքի կոմիզմը անկորուստ տեղ  
հասցնելու մասին է: Զանանը այդ անում էր օգտա-  
գործելով և՛ դիմախաղը, և՛ ընտրելով հարմար մո-  
մենտներ, արտասանության համար նպաստավոր տեղ  
ու դիրք: Պարոնյանի թևավոր խոսքերից և ո՛չ մեկը  
աննկատ չէր անցնում: Զանանը գիտեր, թե որտեղ  
պետք է իրեն ավելի լուրջ պահի, որտեղ պետք է դիմի  
արագախոսության, առանց փաստաբանի իր պառ-  
նասլան բարձրությունից իջնելու: Նրա մոտ դիմա-  
խաղը, շարժուձևը, արագախոսությունը ու արագա-  
շարժությունը չափազանցության. չէր հասնում. նա  
դրանց դիմում էր այնքանով, որքան անհրաժեշտ էր  
միամիտ ու շվարած Պաղտասարի վրա ազդելու հա-  
մար:

«Զանան-փաստաբանի շարժուձևերը,—գրում է մի  
ռեցենզենտ,—խոսելու եղանակը, նույնիսկ շնչառու-  
թյունը պոլսական են, նրա խաղը մեխվում է մարդու  
հիշողության մեջ և տիրականորեն իշխում այնտեղ»:

Օգսենի՝ փողի վրա խարսխված ամբողջ փիլիսո-  
փայությունը, բախվելով Պաղտասարի հոգեկան տրա-  
գեդիայի հետ, առաջացնում էին ծիծաղ, բայց ոչ ան-  
նպատակ, ժամանցային ծիծաղ, այլ ալնպիսի ծիծաղ,  
որը նպաստում էր Պաղտասարի կոմիկական հոգեվի-

ճակի միջից տեսնելու ժամանակաշրջանի սոցիալական տրագեդիան, որին զոր էին գնում ո՛չ միայն Պաղտասարի նման մարդիկ, այլև ողջ ժողովուրդը:

Ովքեր տեսել են Զանանի Օգսենը Պարոնյանի «Պաղտասար աղբարում» չեն կարող մոռացած լինել էսթետիկական այն մեծ հաճույքը, որ պատճառել է նա իր այդ դերակատարումով: Ինչ խոսք, դրան նպաստում էր նաև այն, որ Զանանն ուներ տաղանդավոր խաղընկերներ, ինչպես Հ. Խաչանյանը (Պաղտասար), Հրաչյա Ներսիսյանը (Կիպար), Արուս Ռսկանյանը (Անուշ) :

Զանանի սիրած ու հաջողությամբ կատարած դերից էր Աբիսողոմ աղան Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններում», որի ինսցենիրովկան գրել էին ինքը և Թոթովենցը: Աբիսողոմ աղան սոցիալական նույն միջավայրի ներկայացուցիչ է, ինչ Պաղտասար աղբարը, այն տարբերությամբ, որ Պաղտասարը իր գավառական միամտությամբ բախվում է բուրժուական քաղաքի որոշ խավերի հետ, գործ է ունենում փաստաբանի, դատաստանական խորհրդի անդամների, այլասերված երիտասարդության ներկայացուցիչ Կիպարի հետ, Աբիսողոմ աղան շփվում է ո՛չ միայն քաղքենիական խավերի, այլև արհեստավորների, մշակների, մտավորականության, Բոգմորակա-

նության և այլ կարգի մարդկանց հետ: Եթե տիպերի այս բազմազանությունը նպաստում էր առավել ամբողջական դարձնելու այն միջավայրը, որը պատկերված է կատակերգության վերածված վիպակում, ապա վնասում էր Աբիսողոմի կերպարի խորացմանը, իար կադրելով դերասանին որոնել ու գտնել նորանոր ձևեր, հոգեվիճակներ միմյանց հաջորդող ու միանման այցելությունների համար: Զանանի Աբիսողոմ աղան ահա այս կողմով է, որ աչքի էր ընկնում: Զանանը գտնում էր նոր ու ինքնատիպ ձևեր յուրաքանչյուր «մուրացկանի» ընդունելիս ու վրուցելիս: Մերթ հեգնանքն էր ուղեկցում նրա վրուցներին, մերթ զարմանքը, մերթ զայրույթն ու ջղածգությունը, մերթ հոխորտանքն ու ինքնահավան մեծամտությունը: Փոփոխվող այս հոգեվիճակների ցուցադրման ընթացքում պահելով չափի զգացումն ու զսպվածությունը, շռայլորեն, բայց խելացի կերպով օգտագործում էր դիմախաղը, լեզվի հարափոփոխ ինտոնացիան: Թեթևառիկ բանաստեղծի, սափրիչի և լուսանկարչի հետ ունեցած հանդիպումների տեսարաններում նա աննման էր:

Զանանը ոչ միայն տեղ էր հասցնում Պարոնյանական սրամտությունները, խոսքի կոմիզմի ամբողջ ուժը և դրանով աշխույժ պահում դաჩլիճը, այլև դերակատարման լուս մասերով, շարժուձևերով, հատկապես հարուստ դիմախաղով, հանդիսականներին կա-

պում էր քեմի հետ: Այդպես էր խաղում նա այն տեսարանում, որտեղ անմուսա բանաստեղծը սեղանի վրա կանգնած՝ արտասանում է իր հռչակավոր ճառը, իսկ Արիսողոմը չիմանալով, թե ինչ է այդ անծանոթ մարդու մտադրությունը, սարսափած հետևում է նրա ամեն մի նախադասությանը, ամեն մի բառին, դեմքի փոփոխվող արտահայտություններով դրսնորելով իր վերաբերմունքը, մինչև որ արտասանում է «միտքի ինչ է աղբար, ես քեզի ինչ ըրի» նախադասությունը:

Բայց մինչև այդ հայտնի նախադասությունը Զանանը «խոսում էր» դիմախաղով, մտքեր «արտսասանում» իսկ հանդիսականը հասկանում էր նրան լրիվ, կարդում նրա դեմքին մերթ սարսափ, զայրուց, մերթ երկյուղ, անհանգստություն, մերթ դժգոհություն ու անհամբերություն: Այս ամբողջ ժամանակաշրջացքում Զանանի դիմախաղը տպավորիչ էր ու հարափոփոխ, դուրս էր ցայտեցնում բառեր, նախադասություններ, որոնք չեին գրվել, բայց «ասվում էին», տեղ հասնում:

Զանանը Արիսողով, աղայի դերակատարման մեջ սկսքից մինչև վերջը տանում էր որոշակի գիծ,— ցուց տալ, որ «մուրացկամների» ողբալի վիճակը արդյունք է ո՞չ թե այդ անձնավորությունների անձնական թերությունների, բնավորության առանձնահատկությունների, այլ բուրժուական հարաբերություննե-

րի, որը բարոյապես ընկճել, հաշմանդամ է դարձրել մարդկանց: Սոցիալական խորը բովանդակությամբ էր խաղում նա այն տեսարանը, որտեղ սակարկուվ էր լուսանկարչի հետ: Այս տեսարանում Զանանը Արիստոլոմի մեջ զարթեցնում էր կալվածատերի բնակդը, և իրեն պատկերացնելով ոչ թե Պոլսում,— որտեղ կան բարոյական այլ նորմեր,— այլ Տրապիզոնում, իր ագարակում, խոսում էր որպես կալվածատեր՝ խոսակիցներին մի պահ ընդունելով որպես իր ծառաները: Խոսում էր գոռով մեծամտությամբ, ընդգծելով՝ իր ատելությունը աշխատավորների նկատմամբ:

Եթե «Պահտասար աղբարում» հումորն ու ողբերգականը ներդաշնակ ու զուգահեռ ընթանում են սկըրբից մինչև վերջը, ապա Արիստոլոմ աղայում իշխողը հումորն է, միաժամանակ առողջ ու լիաթոք ծիծաղը, առաջացած Արիստոլոմի տգիտության, մեծամտության և շրջապատի բարոյական նորմաների բախումից:

\* \* \*

Համառոտակի ծանոթանանք Զանանի հասարակական և թատերական գործունեությանը:

Որպես թատերախմբերի ղեկավար, ռեժիսոր, նրա աշխատանքը ընթացել է երկու ուղղությամբ՝ Հայաստանի աղբեջանական և քրդական թատրոններում, որոնց ստեղծողներից մեկն է եղել ինքը, և Երևանի

բանվորական թատրոնում, որի ստեղծմանը նույնպես  
մոտիկից մասնակցել է:

1928 թ., մի ամբողջ հնգամյակ Երևանի Պետա-  
կան առաջին թատրոնում աշխատելուց հետո, Զանա-  
նը խնդրում է ազատել իրեն «հաստիքավոր» դերա-  
սանի պարտականություններից, խոստանալով չկտըր-  
վել նրա բեմից:

Այդ նույն թվին Սովետական Հայաստանի կառա-  
վարությունը նրան վստահում է շատ պատվավոր մի  
աշխատանք՝ կազմել Երևանի առաջին Ադրբեյջանա-  
կան թատրոնը, որ հեշտ գործ չէր:

Սովետական կարգերի հաստատումից առաջ ա-  
ղքրբեցանական աշխատավորության մեջ մշակույթա-  
յին աշխատանք գրեթե չէր կատարվել: Հեղափոխու-  
թյունից հետո քաղաքական դաստիարակչական, ինչ-  
պես և կրթական խոշոր աշխատանք ծավալվեց: Բաց-  
վեցին ադրբեցանական դպրոցներ, լուս էին տեսնում  
ադրբեցաներեն գրքեր, Հայաստանում ապրող ադրբ-  
եցանցիները ունեցան իրենց «Կըզը շաֆաք» թեր-  
թը: Թատրոնի բնագավառում սակայն նոր նոր էր  
ծրագրվում աշխատանքը: Եվ դա ամենից դժվարն էր:  
Ավատական կենցաղը, կրոնական հավատալիքները  
դժվարացնում էին նոր գաղափարների տարածումը,  
մասսայական արվեստի այնպիսի մի ճյուղի միշոցով,  
ինչպիսին էր թատրոնը, որը պահանջում էր երկսեռ

մարդկանց համախմբում և այդ այն պալմաններում, երբ հենց Երևանաբնակ աղբբեջանութինների մեծ մասը դեռ դեն չէր գցել չափրան, շարունակում էր տաքել արևելյան ներփակ կենցաղով, շատերի ամուսիններն ու եղբայրները չին համաձայնվում, որ իրենց կանայք ու քույրերը հաճախեն թատրոն, էլ ո՞ւր մնաց թե բարձրանան թեմ:

Այս պալմաններում 1928 թ. Զանանը Երևանի տեխնիկումի աղբբեջանցի ուսանողներից և հայ ուսանողութիններից, ստեղծում է առաջին աղբբեջանական թատրոնը Հայաստանում: Դա նոր Երևույթ էր մեր հանրապետության մեջ, և լենինյան ազգային քաղաքականության նվաճումներից մեկը:

Սկսվում են կանոնավոր ներկայացումները, որոնք հաճուկքով են դիտվում ո՞չ միայն աղբբեջանցի, այլև հայ հանդիսատեսների կողմից:

Մինչ այդ Զանանը աչքի էր ընկել գերազանցապես որպես դերասան, այժմ նա իր ուժերը դրսերում էր որպես ռեժիսոր, ի հայտ բերելով ակնառու կարողություններ և այդ բնագավառում: Նրա աշխատանքներին օժանդակում էին Լևոն Քալանթարը, դերասան Վաղարշ Վաղարշյանը և ուրիշներ:

Զանանի համառ ու քրտնաջան աշխատանքի շնորհիվ, կարճ ժամանակից, Երևանի աղբբեջանական թատրոնը ձևավորվեց, հասունություն ձեռք բերեց, հա-

մալրեց իր շարքերը կարող ուժերով: Խումբը բաղկացած էր քսանչորս արտիստ-արտիստութիներից: Չորս արտիստութիներ ադրբեջանցի էին, երկուսը՝ հայ: Դա ինքնին մեծ նվաճում էր:

Հետագայում Զաբար Զաբարլիի անունը կրող Երևանի ադրբեջանական թատրոնը խոշոր դեր կատարեց հանրապետության ոչ միայն ադրբեջանցի աշխատավորության քաղաքական-կուլտուրական կյանքում, այլև ադրբեջաներենը հասկացող մանավանդ հայրենադարձ հայերի մեջ, որոնք հաճուքով գնուս էին խմբի ներկայացումները դիտելու:

Ադրբեջանական թատրոնը բեմադրեց մի շարք պիեսներ, ինչպես՝ «Սևիլ», «Պայթյուն», «Ինձի», «Ալմազ» հետագայում «Նամուս» և այլն:

Խումբը սպասարկում էր նաև գյուղական բնակչությանը:

Զանանի արխիվում պահպանված է մի վեկուցագիր՝ Հայաստանի շրջաններում ադրբեջանական խմբի տված ներկայացումների մասին: Դա շատ հետաքրքրական փաստաթուղթ է, որը ցուց է տալիս, թե Զանանը և նրա ընկերները, ինչ դժվարին պայմաններում և ինչպիսի անձնավոր աշխատանքով թատերական արվեստը հասցրել են Հայաստանի ամենահեռավոր ու խոլ անկյունները, հաճախ այնպիսի գյուղեր, որտեղ թատրոնի մասին առաջին անգամն էին լսում:

Խումբը իր ներկայացումները տվել է երբեմն էլ անբարենպաստ պայմաններում, հատկապես այն գուրդերում, որտեղ չեն եղել դրա տարրական հնարավորությունները։ Հարկադրված են եղել ներկայացումներ տալ գյուղական բակերում, խրճիթ-ընթերցարաններում, կամ մեջիտների առաջ՝ բացօթյա։ Չի եղել էլեկտրական լուսավորություն։ «Հաճախ ստիպված ենք եղել խաղալ արևի լուսով, մի անգամ էլ լուսնի լույսով» գրում է Զանանը վերոհիշյալ զեկուցագրում։

Խմբի ներկայացումները, սակայն, ադրբեջանական այդ գյուղերում դրական խոշոր դեր են խաղացել՝ մի կողմից գյուղական բնակչությանը թատերական արվեստին հաղորդակից դարձնելու, մյուս կողմից ժողովուրդների համերաշխության ամրապնդման լենինյան ազգային քաղաքականության պրոպագանդայի ուղղությամբ։

«Ամասիայում, մեր վերջին ներկայացման ժամանակ,— գրում է Զանանը,— խմբին օվացիա սարքելուց հետո տեղական ադրբեջանցի աշխատակիցները ի պատիվ մեզ վեցեր կազմակերպեցին, որտեղ իրենց կանայք պարեցին և երգեցին. ադրբեջանական կյանքում այս երևույթը պիտի համարել վերին աստիճանի խրախուսիչ. իսկ Զորագիսում մեր վերջին ներկայացմանը նույնպես օվացիա սարքելուց հետո բանվորները՝ հայ, ադրբեջանցի, հուկը բեմ բարձրացան և խո-

սեցին խմբի տարած աշխատանքների մասին: Դրանով էլ չբավարարվելով, առավոտյան, երբ խումբը մեկնում էր, բանվորներն իրենց կանանցով ու երեխաներով երկու վերստ ճանապարհ ուղեկցեցին խմբին ուռաներով: Պետք է հիշել նաև Ղարաքիլիսի վինվորական լագերում մեր տված ներկայացման մասին, որը ինքնարերաբար քաղաքական ցուցի փոխվեց: Սրանի կարմիրբանակայինները զարմանալի հոետորներ էին դուրս բերում, որոնք կոմունիստների տարած ազգային քաղաքականության մասին էին ճառում և ներկայացման համար բերել տված օրկեստրը ստիպված եղավ ավելի շատ «Ինտերնացիոնալ» նվազել:

Զանանը խմբի և՛ ռեժիսորն էր, և՛ բեմադրողը, հաճին և՛ ձևավորողը: Նա օգտագործում էր Երևանից ծիասայլերով տարված դեկորացիաներ, բեմական զգեստներ և տեղական պրիմիտիվ հնարավորությունները:

Թե Երևանում, և թե գաստրոլային այս ներկայացումների ժամանակ Զանանը աշխատել է մի կողմից ներկայացումները լավ կազմակերպել, մյուս կողմից աղրբեջանցի երիտասարդ ու խոստումնալից ուժերից դերասանական կադրեր պատրաստել: Այս բանում նրան օժանդակել է թուրքերենի իր լավ իմացությունը, որի շնորհիվ աղրբեջաներեն լեզուն նայուացրեց ամենակարճ ժամանակամիջոցում և սկսեց

խաղալ այդ լեզվով, կատարել նույնիսկ թարգմանություններ:

1929 թ. «Խորհրդային Հայաստան» թերթը գրել է. «Թուրք շրջիկ թատրոնում դերասան Մ. Զանանը երկրորդ տարին է ինչ աշխատում է իբրև ռեժիսոր բեմադրող, որտեղ նա Քաղլուսգլխվարի ղեկավարությամբ եռանդ չի խնայում թուրք շրջիկ թատրոնի աշխատանքների գեղարվեստական մասը որակապես բարձրացնելու ուղղությամբ: Նրանք, ովքեր ուշի ուշով հետևել են այդ թատրոնի անցած ճանապարհին, հաստատապես կարող են ասել, որ թուրք շրջիկ թատրոնն այս երկու տարվա ընթացքում խոշոր հաջողություններ է ձեռք բերել և նրա արդյունքները միանգամայն քաջալերիչ են ապագայի նկատմամբ»<sup>1</sup>:

Զանանի աշխատանքը բարձր են գնահատել նախ և առաջ հենց իրենք՝ աղբքեջանական թատրոնի արտիստները: Այդ թատրոնի աչքի ընկնող դեմքերից մեկը՝ ռեժիսոր Մ. Հյուսեինովը, 1934 թ. գրած իր «Մի քանի դիտողություններ Հայաստանի պետական թուրք թատրոնի մասին» հոդվածում ասում է. «Մենք չենք կարող մոռանալ թուրքական թատրոնի բազմամյա ռեժիսոր, վաստակավոր դերասան ընկ. Զանանի մեծ աշխատանքը»:

<sup>1</sup> «Խորհրդային Հայաստան», 1929 թ. № 295:

Զանանը արժանի էր այդ գնահատականին։ Հինգ տարիների ընթացքում, որը ընդմիջվել է ընդամենը մեկ թատերաշրջանով,— երբ նա հրավիրվել է Լենինականի պետական թատրոնը,— աշխատել է մեծագույն եռանդով ու զանասիրությամբ։ Ինքը Զանանը, մամուլում անդրադառնալով Երևանի ադրբեջանական թատրոնի աշխատանքներին, գրել է. «Ադրբեջանական թատրոնի զարգացման մեջ հինգ տարվա ընթացքում ես աշխատել եմ տալ իմ բեմական կուտակված փորձի լավագույն տրադիցիաները։ Իմ ամբողջ զանքը եղել է ադրբեջանցի ռեժիսորներ պատրաստել, որոնք պետք է շարունակողը լինեն սկսված գործին։ Այս ուղղությամբ պատրաստվող ընկերներից Հյուսեինովը, Ռամազանովը և Գագանֆարը արդեն ունեն որոշ գրավականներ»։

Մ. Զանանը մասնակցել է նաև Հայաստանի քըրդական թատրոնի ստեղծմանը։ Եթե ադրբեջանական բնակչության զգալի մասը ապրում էր քաղաքներում և համեմատաբար հեշտ էր նրանց մշակույթային կյանքում ներգրավել, ապա քուրդ աշխատավորությունը գերազանցապես ապրում էր Ալագյավի լանջերին, կիսաքրոչվորական պայմաններում, հեռու մշակույթային կյանքից։ Միայն սովետական իշխանության տարիներին էր, որ գիրն ու գրականությունը հասնում էին հեռավոր այդ գյուղերը, բացվում էին դպրոցներ, գի-

տութիւն լուսը իր ճառագայթներն էր նետում դեպի Ապարանի, Թալինի քրդական գյուղերը։ Այս պայմաններում է, որ մի խումբ էնտուպիաստների անծնվեր ջանքերով, քրդական գյուղական աշխատավորությունը ծանոթանում է նաև թատերական արվեստի հետ։

Զանանը իր մասնակցությունն է ունեցել Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոնի կազմակերպման գործին։ Գեղաշխի միության այն ժամանակվա նախագահ, թատերագետ Ս. Մելիքսեթյանը իր հուշերում հավաստում է, որ երբ միությունը ծրագրել էր մայրաքաղաքում ստեղծել նման մի թատրոն, Զանանը եղել է այդ գաղափարով առաջին խանդավառվողներից մեկը։ Որպեսզի նախապատրաստական աշխատանքները դրվեն գործնական հողի վրա, նա Գեղաշխի հանձնարարությամբ գրում է մի պիես՝ «Բանվոր քեռին արևելքում», որ բեմադրվում է այդ տարիներին Դ. Գուլավյանի ղեկավարությամբ գործող Բանշրջիկ թատրոնում ու ներկայացվում ո՞չ միայն մայրաքաղաքում, այլ հանրապետության մի շարք այլ վայրերում (Երևան, Էջմիածին, Սարդարաբադ, Լենինական, Սանահին, Ալավերդի, Ղարաբիլիսա, Ստեփանավան և այլն)։

Զանանը ինքն է բեմադրել «Բանվոր քեռին»։

Թատրոնի ղեկավար Դ. Գուլավյանի արխիվում պահպանված աֆիշաներն ու ծրագրերը ցուց են տա-

լիս, թե ինչպիսի մեծ հետաքրքրություն է ցուցաբերել աշխատավորությունը խմբի կազմակերպած ներկայացումների հանդեպ, որոնք տրվում էին գերազանցապես բանվորաբնակ վայրերում:

Ավարտելով նախապատրաստական աշխատանքները և ունենալով իր ձեռքի տակ Զանանի «Բանվորքերին արևելքում» մանկական պիեսը, Գեղաշխի միությունը հանձնարարում է Զանանին գրել հատուկ վեկուցագիր, որը ներկայացվում է Լուսժողկոմ Մռավյանին և տուացվում նրա համաձայնությունը՝ մանուկների և պատանիների համար թատրոն ստեղծելու վերաբերյալ:

1929 թ. հիմնադրվում է Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոնը:

Սկսած 1928 թ., մի ամբողջ տասնամյակ, Զանանը ունեցել է նաև ռեժիսորական գործունեություն: Նա բեմադրություններ է տվել Երևանի ադրբեջանական թատրոնում, Բանվորական թատրոնում, Լենինականի թատրոնում և այլն, բեմադրել է մի շարք պիեսներ ինչպես ինքնուրուցն, այնպես էլ թարգմանական: Ավելորդ ենք համարում դրանցից յուրաքասչուրի վրա մանրամասն կանգ առնել: Այս ուղղությամբ նրա կատարած աշխատանքի մասին կարելի է պատկերացում ստանալ, ծանոթանալով Բանվորական թատրոնում «Պաղտասար աղբարի» նրա բեմադրությանը, և

«Վենետիկի վաճառականը» կատակերգության բեմադրության շուրջ ծավալված այն վեճին, որին ակտիվ կերպով մասնակցել է Զանանը:

Նախ՝ «Պաղտասար աղբարի» մասին:

Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար» կատակերգությունը հայ թատրոնում ունի բեմադրության ուշագրավ պատմություն: Ըստ Էության այն անցել է բեմադրական հինգ շրջան, սկսած Արամ Վրույրից, Մինչև Վարդան Աճեմյանի վերջին բեմադրությունը, որն արդեն մի քանի տարի է ինչ հաջողությամբ գնում է:

Մկրտիչ Զանանի բեմադրության մասին անհնար է ճշգրիտ գաղափար կազմել առանց գեթ ընդհանուր գծերով ծանոթանալու նախընթաց տարիներին կատարված աշխատանքներին: Այդ փորձերի բավականաչափ օրյեկտիվ բնութագրությունը տվել է ինքը՝ Զանանը: Ամենևին չժիտելով դերասան Վրույրի խոշոր ծառայությունները հայ թատրոնում, Զանանը գըտնում է, որ Վրույրը «Պաղտասար աղբարի» քաղաքական բովանդակությունը անտեսելով՝ այն դարձրել էր ընտանեկան մի կատակերգություն, իր բառերով ասած «խարտոցել է կոմեդիայի քաղաքական սուր կողմերը»: «Ստացվել է ապուշ մի մարդու ընտանեկան կյանքի ծիծաղաշարժ պատկերը»:

«Պաղտասար աղբարի» երկրորդ բեմադրությունը կատարեց Մոսկվայի հայկական ստուդիան Ռ. Սի-

մոնովի ղեկավարությամբ: Ինչպես հայտնի է ստուդիան բեմադրեց նախ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները», ապա «Պաղտասար աղբարը»: Երկու բեմադրություններն ել կատարվել են նույն սկզբունքներով, հետապնդել են նույն նպատակը: Թե ո՞րն է եղել այդ սկզբունքը, երևում է մի ուշագրավ հոդվածից, որը լուս է տեսել մամուլում «Մեծապատիվ մուրացկանների» բեմադրության առթիվ: Քանի որ «Պաղտասար աղբարն» էլ բեմադրվել է նույն ելակետներով, ուստի ավելորդ չի լինի ծանոթանալ այդ հոդվածին, մանավանդ որ այն ընդհանուր պատկերացում է տալիս առհասարակ 20-ական թվականների կեսերից սովետահայ թատրոնում իր արտահայտությունը գտած մեյերխոլդյան սկզբունքների մասին: Վերոհիշյալ հոդվածից երևում է, որ ստուդիայի ղեկավարների համար հեղինակը և նրա տեքստը ինչպես և կոնկրետ պատմական իրականությունն ու ժամանակաշրջանի հասարակական հարաբերությունները, կենցաղը, հոգեբանությունը, մղվում են երկրորդ այլան, ավելի ճիշտ՝ օգտագործվում են բեմադրողին հուզող գաղափարների մատուցման համար՝ չափազանց ազատ եղանակով: Բեմադրող ռեժիսորն իր հայեցողությամբ, ասված է այնտեղ, կարող է բնագրից դուրս գցել մի շարք հատվածներ, որոնք վերաբերում են ասենք կենցաղին, կարող է ավելացնել այլ հատվածներ նույն

ჩեղինակից, ჩაճախ նույնիսկ այլ ჩեղինակներից: Պարտադիր չէ ո՞չ ժամանակաշրջանի կոլորիտի պահպանումը (տարապ, ჩամապատասխան դեկորացիաներ և այլն) և ո՞չ էլ ժամանակաշրջանի ընդհանուր հոգեբանության պահպանումը:

«Վերցված է Հակոբ Պարոնյանի պիեսան,—կարդում ենք այդ հոդվածում,—և ենթարկված փոփոխության, ჩամածայն բեմական արվեստի այժմեական պահանջներին և դիտողների վրա ամենաուժեղ ներգործություն անելու նկատառումով: Մեզ ჩամար պիեսի գործողությունը կատարվում է ներկայումս,— ասում է Սիմոնովը,— ալսօրվա մեծապատիվ մուրացկանները դա ամեն ազգության էմիգրանտներն են, ամեն տեսակի բախտախնդիրներ ու շինարար աշխատանքի անընդունակներ, որ հիմա էլ ժամերով նստում են Կ. Պոլսի, Փարիզի, Բեռլինի կաֆեներում, «թեթև աշխատանք» որսալու, կամ անվերադարձ փոխառություններ անելու հույսով»<sup>1</sup>:

Ինչպես երևում է այս մեջբերումից, ստուդիալի նպատակն է եղել ჩամենայն դեպս ընդգծել պիեսի քաղաքական կողմը, բայց ռեժիսորը, այն ավելի ցցուն դարձնելու ჩամար, ամբողջովին դուրս է թողել կենցաղայինը, այսինքն այն, ինչ ամենից ավելի է պարոնյանական, որը անմահ երգիծաբանի մոտ նպաս-

<sup>1</sup> «Նոր ակոս», 1924, օգոստոսի 21:

տում է հենց կատակերգության քաղաքական տես-  
դենցների բացահայտմանը:

Դուրս վանելով կենցաղայինը, նաև «պսիխոլոգիկ-  
մը»—ինչպես ասում են բեմադրողները մամուլուս  
տպած իրենց հոդվածներում՝ ակնարկելով հերոսների  
հոգեբանության ցուցադրումը — ստուդիան նպատակ  
է ունեցել ներմուծել «անընդհատ աճող գործողություն  
և տրյուկներ», անկախ միջավայրից, ժամանակից ու  
կենցաղային ինքնատիպությունից: Ստուդիայի ղեկա-  
վարների նպատակն է եղել «դիտողների վրա սույն  
միջոցներով մաքսիմալ տպավորություն թողնելը ու  
նրանց ուշադրությունը շարունակ լարված պահելը:...  
Կոստյումների ու գրիմի մեջ էլ պահպանվում է ընդ-  
հանուր պայմանական ոճը... դեկորներ համարյա բա-  
ցակայում են... ռեժիսորը բեմադրության մեջ մտցնում  
է անախրոնիզմ, որով և ընդարձակում է բեմից ագի-  
տացիա անելու հնարավորությունները:... Դա շարժա-  
կան ագիտ թատրոն է, որը դուրս գալով թատրոնա-  
կան նեղ արկղիկից, օգտագործելով ժամանակակից  
թատրոնի և ցիրկի տեխնիկական հնարավորություն-  
ները, շրջում է գյուղերը, բանվորական կենտրոնները,  
պրոպագանդա անելով մեր քաղաքական ու տնտեսա-  
կան հետագա խնդիրների շուրջը, այլ կերպ ասած  
դառնալով նոր կյանքի բեմը»<sup>1</sup>:

<sup>1</sup> «Խոր ակոս», 1924 թ. օգոստոսի 21:

Թե դա ինչպիսի տարօրինակ բեմադրություն է եղել, երևում է այն փաստից, որ Պարոնյանի հերոսներից մեկը բեմում երգել է Ազատ Վշտունու մի երգը:

Մենք ընդարձակ կանգ առանք պարոնյանական դրամատուրգիայի մեկնաբանության վրա ստուդիայի կողմից, նախ այն պատճառով, որ դա շատ կարևոր է սովետահայ թատրոնի անցած էտապի պատկերացման համար և երկրորդ՝ այն պատճառով, որ ինքը Մ. Զանանը քննադատում է «Պաղտասար աղբարի» նըման մեկնաբանությունը:

Ստուդիայի կողմից բեմադրված «Պաղտասար աղբարում» գրեթե իսպառ բացակայել է Պարոնյանի երգիծանքին սնունդ տվող պոլսական միջավայրը, կենցաղը. ավելին՝ բացակայել է անգամ քաղաքական այն նպատակասացությունը, որ առկա է արտաքուստ կենցաղային այդ բեմադրության մեջ, այսինքն 19-րդ դարի երկրորդ կեսերին հայ հասարակական կյանքում իշխող դեր կատարած լիբերալ բուրժուազիայի և նրա կողմից թմբկահարված հայ հոգևորականության ոչընչացնող քննադատությունը:

«Պաղտասար աղբարի» այսպիսի բեմադրությունը չէր կարող հաջողություն ունենալ: Պատահական չէ որ մեր մեծ պոետ Եղիշե Զարենցը, հատուկ հոդված գրելով ստուդիայի կողմից բեմադրված «Պաղտասար աղբարի» մասին, ասում էր. «Երեկ Պետական թատ-

ոռնի բեմի վրա մենք տեսանք պարզապես մի աշակերտական ներկայացում, որն այդպիսին լինելով հանդերձ հավակնություն ուներ ամենավերջին «նորույթի» տպագորությունը թողնել Երևանի «պրովինցիալ» հասարակության վրա: Սակայն, Օ՛ զարմանք. ներկայացումը ոչ մի տպագորություն չթողեց»:

«Պաղտասար աղբարը» բեմադրել է նաև Լևոն Զալանթարը՝ ծգտելով հիմք ընդունել Պարոնյանի տեքստը, որոշ չափով պահպանելով կենցաղը, միջավայրը: Սակայն դժբախտաբար նրա մոտ ևս Պարոնյանի կատակերգությունը լիաթոք չի հնչել: Տուրք տալով ժամանակի մտայնությանը, ռեժիսորը տեքըստում ավելացրել է այնպիսի խոսքեր, որոնք չեին կարող լինել Պարոնյանի մոտ և ինչպես Զանանն է նշում, կարծես հիշեցնում էր Զացկու մոնոլոգը:

Եվ որ ամենից տարօրինակն էր, այստեղ էլ Պաղտասարը հանդգնում էր թքել իշխանավորների երեսին ու փոխադրվել... Խորհրդային Հայաստան: Դուրս էր գալիս, որ Պարոնյանը գրել էր իրենից 50 տարի հետո կատարվող դեպքերի մասին:

Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար» կատակերգությունը սովետահայ բեմում առաջին անգամ պարոնյանական ողջ շնչով հնչեց Զանանի բեմադրությամբ:

Նա այդ պատասխանատու գործին ծեռնարկելուց  
առաջ հանգամանորեն ուսումնասիրեց Պարոնյանի  
ողջ ստեղծագործությունը, պիեսի հետ հարակցվող  
փաստերը և չնայած շատ լավ ծանոթ էր պոլսական  
միջավայրին ու լեզվին, հետազոտական աշխատանք  
կատարեց ավելի խորը թափանցելու համար Պարոն-  
յանի տեքստի մեջ: Նա որոնեց, գտավ հենց իր՝ Պա-  
րոնյանի տված մեկնաբանությունը «Պաղտասար աղ-  
բարի» մասին, տպված Խիկար պարբերականում Ես-  
թեր ծածկանունով: Ի դեպ այս փաստը առաջին ան-  
գամ Զանանն է, որ մատնանշել է: Հետագայում,  
տարիներ անց, այլ պարոնյանագետներ նույնպես ու-  
շադրություն են դարձրել դրա վրա:

Ղեկավարվելով Պարոնյանի այդ ցուցումներով,  
Զանանը աշխատել է իր ռեժիսորական աշխատանքի  
ընթացքում ուշադրություն դարձնել հատկապես այն  
հարցերի վրա, որոնց մասին խոսում է Պարոնյանը:  
Ինչպես հայտնի է «Պաղտասար աղբարը» չունի որո  
շակի ֆինալ, դրա համար էլ գրեթե բոլոր բեմադրու  
թյուններում թույլ են տրվել կամայական ընդհանրա  
ցումներ: Բեմադրողներից մեկը, ինչպես տեսանք Պաղ-  
տասարին ուղարկել էր Սովետական Հայաստան, մի  
այլ բեմադրող՝ Վ. Աճեմյանը, հիմնականում ճիշտ մեկ-  
նաբանելով պիեսը, վերջում Պաղտասարին պարել է  
տալիս նեղանի վրա՝ կիսաჩիստերիկ վիճակում:

Ֆինալ չունենալու փաստը առաջինը նկատել է Պարոնյանը և մատնանիշ արել վերոհիշյալ հոդվածում: Թե ինչու իմանալով հանդերձ այդպիսի մի լուրջ թերություն, չի ուղղել ինքը հեղինակը, մեր կարծիքով պետք է բացատրել ժամանակի ցենզուրական նկատառումներով: Որ Պարոնյանի նպատակն է եղել ֆինալում իր հերոսին դուրս գցել ոչ միայն պոլսական նեխած միջավայրից, այլև Թուրքիայից, դա ակնբախ է, բայց անհնար էր այդ մասին պարզ խոսել համիդյան ցենզուրայի ամենախստագույն այն տարիներին, երբ լույս տեսավ «Պաղտասար աղբարը»:

Զանանը նախքան բեմադրելը, խորհրդակցել է Պարոնյանի ստեղծագործությանը ծանոթ մարդկանց հետ.

«Կարիք եմ զգացել,— ասում է նա,— խորհրդակցել Պարոնյան ճանաչող մի շարք ընկերների հետ (Զ. Եսայան, Արուս Ռոկանյան, Էդվարդ Խոճիկ, Արա Սարգսյան և այլն)»:

Նախապատրաստական նման աշխատանքից հետո Զանանը ձեռնարկում է «Պաղտասար աղբարի» բեմադրությանը, նախ Բանվորական թատրոնում, ապա 1936 թ. Պետական թատրոնում:

Ոեժիսոր Զանանին նույնպես զբաղեցրել է պիեսը որքան հնարավոր է քաղաքականապես նպատակալաց դարձնելու հարցը: Բայց նա այդ արել է ոչ թե

Պարոնյանից հեռանալով, այլ որքան հնարավոր է մոտենալով նրան, նրանից վերցնելով իր մեկնության ատաղձը: Խոկ հայտնի է, որ «Պաղտասար աղբար» կատակերգությունը հարուստ է այդպիսի ատաղձով և կարիք չունի արհեստական շպարի:

Զանանը ոչ միայն պահպանել էր կենցաղայինը սիեսում, այլև այն հմտորեն օգտագործել Պարոնյանի քաղաքական նպատակների ցուցադրման, այսինքն բուրժուական նեխած ընտանեկան հարաբերությունների բացահայտման համար՝ հանդիսատեսի մեջ ատելություն և զվաճանք հրահրելով դեպի առհասարակ սեփականատիրական կարգերը:

Զանանը Պաղտասարին ապուշ չի համարում, այլ Պոլսի բուրժուական ապականված կյանքի քառսի մեջ ընկած մի գավառացի առևտրական, որը նոր միջավայրում ընկել է ապուշային վիճակի մեջ: Եթե նա հրաշքով մի պահ դուրս ընկներ շրջապատից և հայտնըվեր իր գավառում, իրեն կզգար այնպես, ինչպես ծուկը ջրում, հանդես կը բերեր իր գործարար կարողությունները, որոնց շնորհիվ այդքան հարստացել է: Զանանի կարծիքով Պաղտասարը «գավառային կյանքի ու համառության մարմնացումն է. նա իր արդարությանը և ինչ որ արդարության կուրորեն հավատում է. չարագործը պետք է պատժվի, արդարությունը պետք է ի հայտ գա, — այս է նրա ըմբռնումը»:

Պաղտասարի կերպարի ալսպիսի մեկնաբանությամբ միայն հասկանալի կարող է դառնալ «ընծի Պաղտիկ կըսեն» հայտնի հոխորտանքը, որ արտասանում է Պաղտասարը ամեն անգամ, երբ նրան թվում է, թե հաղթելու է հակառակորդին:

Որպես ռեժիսոր, Զանանը այսպիսի մեկնաբանությամբ է բեմադրել «Պաղտասար աղբարը», Խաչանյան-Պաղտասարն էլ խաղացել է այդ մեկնաբանությամբ: «Խաչանյանը,— կարդում ենք մամուլում,— խաղում է ամենայն լրջությամբ, ելակետ ունենալով այն մեկնակետը, որ իր հերոսի կոմիկական վիճակը ըստ էության հենց նրա տրագեդիան է: Եվ այդ է Խաչանյանի հաջողության հիմնական գաղտնիքը»:

Երկրուղածությամբ մոտենալով Հ. Պարոնյանի կատակերգության բնագրին, չանելով որևէ հավելում, մեծ զգուշությամբ պահպանելով արևմտահայերենի առողջանությունը, Զանանը համեմատաբար ազատ է վարվել գործող անձանց հետ, կատարելով կամայական հավելումներ, նպատակ ունենալով «ազատել բեմադրությունը աղքատիկ միօրինակությունից»: Զանանի այդ միջամտությունը, իհարկե, անտեղի էր. ինչպես հայտնի է, առանց այն էլ կատակերգությունը բավականաչափ ծանրաբեռնված է գործող անձերով. կանանց նոր խմբի հանդես գալը ճգճգում էր պիեսը:

Մասնակի այս թերությունով հանդերձ, Զանանի

Անդիանուր մտտեցումը ճիշտ էր, մտածված և տեքըս-  
տից բխող:

Դրանով պետք է բացատրել Զանանի բեմադրած  
«Պաղտասար աղբարի» աննախընթաց հաջողությու-  
նը, մի բեմադրություն, որը իրավամբ կարելի է համա-  
րել սովետահայ թատրոնի ակնառու նվաճումներից  
մեկը հայ դասական դրամատուրգիայի բեմականաց-  
ման գործում:

\* \* \*

Զանանը մեծ եռանդով մասնակցել է այն վեճին,  
որ մղվել էր Երևանի Պետական թատրոնում և մա-  
մուլում Վ. Շեքսպիրի «Վենետիկի վաճառականը» կա-  
տակերգության բեմադրության շուրջը: Այդ պիեսը  
բեմադրելու էր Ա. Բուրջալյանը: Նա իր մեկնաբանու-  
թյունը հրատարակում է մամուլում «Վենետիկի կար-  
նավալը կամ Շեյլոկ» վերնագրով: Ուժիսորի կար-  
ծիքով Շեքսպիրի պիեսը կատակերգություն է և սխալ-  
վում են այն մարդիկ, որոնք բեմադրում են այն դրա-  
մայի պլանով: Բուրջալյանը հիմնավորում է իր տե-  
սակետը, պիեսից բերելով այնպիսի օրինակներ, որոնք  
բնորոշ են բացառապես կոմեդիայի ժանրին:

Մամուլում Բուրջալյանի դեմ հոդվածով հանդես  
է գալիս Մ. Զանանը:

Անկախ այն բանից, թե ով էր իրավացի այս վե-

ճում, անհրաժեշտ ենք համարում ծանոթացնել Զանանի մոտեցմանը այն պիեսի հանդեպ, որով նա զբաղվել էր ու հետաքրքրվել դեռևս 1921 թ. Հոնդոնում, պատրաստվելով հանդես գալ Շալլոկի դերով:

Զանանը իր «Վենետիկի վաճառականը» հոդվածի սկզբում գրում է.

«Ծանր է իմ դրությունը, երբ ստիպված եմ հրապարակային ելույթ ունենալ այնպիսի անձնավորության դեմ, որից բավական բան եմ սովորել թատրոնի ձևական մարզում: Բայց կարծում եմ, որ ամեն մի ուսուցիչ պիտի ուրախանա, տեսնելով, որ աշակերտներն ընդունակ են կանգնել ճշմարտության կողմը, կամ գոնե ցանկանում են որոնել ճշմարտությունը»:

Իրականում Բուրջալյանի և Զանանի վեճը ձևին չէր վերաբերում, այլ բովանդակությանը: Բուրջալյանի կարծիքով,—և անշուշտ նա իրավացի էր,—պիեսի գաղափարական առանցքը ո՞չ թե հակասեմիտիզմն էր, ինչպես կարծում էին ոմանք, այդ թվում և Զանանը, այլ հումանիզմը, որը և Շալլոկի կերպարն անգամ դարձնում էր մարդկային, հուվական:

Զանանը Շալլոկի մեկնաբանման իր մոտեցումը ավելի հանգամանորեն շարադրել է Վահրամ Փափակյանին գրած մի նամակում, ցանկություն հայտսելով միասին բեմադրել Շեքսպիրի այդ պիեսը: Քանի որ Զանանի այդ տարիների բեմական ըմբռնումների հա-

մար բնորոշ է դա, ծանոթանանք ալդ ուշագրավ փաստաթղթի մի քանի կետերին.

«Վենետիկի վաճառականը» սոցիալական պիես է,— գրում է նա,— որտեղ պետք է պարզ կերպով երևա առևտրական կապիտալի և փողային կապիտալի պայքարը, ընդհանուր ֆոն ունենալով իր ժամանակի հասարակական փոխարարերությունների տնտեսական հիմունքը: Պարզ կերպով պետք է երևա հականիրեականության տնտեսական պատճառները: Մարդիկ ոճրագործ չեն ծնվում, այլ հասարական պայմաններն են, որ մարդկանց ոճրագործ են դարձնում: Հասարակության ցուց տալ հալածված մարդը հրեայի մեջ և բացասական տրամադրություն ստեղծել դեպի «ազնիվ» վենետիկցիները և վենետիկյան արդար դատարանը: Տեքստի մեջ կատարել որոշ կրծատումներ և անհրաժեշտ հավելումներ, վայել Շեքսպիրի բարձրության և ոգուն: Բեմադրության մեջ կիրառել հեղափոխական ռեալիզմի կոնստրուկցիան»:

Ցանկանալով անպայման ընդգծել պիեսի սոցիալական կողմը, տալ նրան դասակարգային բովանդակություն, այն համարելով «առևտրական կապիտալի և փողային կապիտալի պայքարը արտահայտող մի երկ,— ինչպես բնութագրում է ինքը,— Զանանը պիեսում առանցքային հարց է համարել հակահրեական պայքարը և փորձել այն բացատրել տնտեսական գոր-

---

ծոններով: Բայց ընկնելով ծայրահեղության մեջ, բևեռ-ներ ստեղծելու տենդենցով տարված, ցանկացել է սրբագրել Շայլոկի կերպարը, փաստորեն դեն զցելով Նրանից ամենահականը՝ վաշխառուական դաժանությունը, ներկայացնելով Շայլոկին որպես «անխնակերպով հալածվող հրեա»:

Անկախ այս բոլորից, Զանանի վեճը ցույց է տալիս արտիստի լայն իրավեկությունը համաշխարհային, հատկապես շեքսպիրյան դրամատուրգիային, ինչպես և նրա կուռ տրամաբանությունը, բանավիճողի առուրանալի տաղանդը:

---

Այս գաղտնաբառը կամաց պահանջանելի է կարգադրության համար, ի վերաբերյալ զանազան պատճենների կամ պահանջանելի է կարգադրության համար, ի վերաբերյալ զանազան պատճենների կամ

Բուլղարիա Կառավարություն. 1932





Զեր՝ «Շանհամ»

ԱՐԵՎԱՆԻ ՀԵՂԱԳԱՀԱՆ

ԱՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԽՈՎՃԵԼԻԿ

## ԶԱՆԱՆԸ ԴՐԱՄԱՏՈՒՐԳ

Արտիստական իր աշխատանքին վուգընթաց՝ Զանանը պբաղվել է նաև գեղարվեստական գրականությամբ, գրել է պատմվածքներ, ակնարկներ, դրամատիկական ստեղծագործություններ:

«Գրական իմ առաջին փորձը,— վկայում է նա,— կատարել եմ 1924 թ. Վ. Թոթովենցի ստիպումով։ Գրել եմ «Պոլսո կյանքից փոքրիկ պատմվածքներ, որոնք տպվեցին «Նոր ակոս» ժուռնալում։ Դրամատուրգիական աշխատանքի մղել է ինձ Պետական թատրոնի նախկին դիրեկտոր Մամիկոն Գևորգյանը, հանձնարարելով ինձ Վ. Թոթովենցի հետ միասին պիեսայի վերածել Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները»։

Թոթովենցը և Մամիկոն Գևորգյանը չեն սխալվել։ Զանանի թողած գրական փոքր ժառանգությունը վկայում է, որ մենք գործ ունենք պրոֆեսիոնալ գրչի տեր հեղինակի հետ։ Զափազանցություն չպետք է համա-

րել եթե ասենք, որ արտիստ լինելը մասամբ խանգարել է Զանանին գրող լինել, գուցե այնպես, ինչպես խանգարել է Ադամյանին՝ դառնալու պրոֆեսիոնալ նկարիչ։

Այժմ ծանոթանանք Զանանի գեղարվեստական ստեղծագործություններին։

1924 թ. «Նոր ակոսում» լույս են տեսնում Զանանի մի քանի պատմվածքները, որոնցից ուշագրավ է հատկապես «Զոհերը», տպագրված պարբերականի մի քանի համարներում։ Դա շատ ինքնատիպ մի գործ է, մատնում է պոլսական կյանքը խորապես ճանաչող, նրա տիպական կողմերը ընկալող ու գեղարվեստական պատկերներով ներկայացնելու կարողությամբ օժտը-ված գրողին։ Նյութը, ընտրված թեման, նորություն չէին հայ գրականության համար, այդպիսի սյուժեով, այդպիսի հերոսներով մեծ վարպետությամբ ծավալուն վեպեր է գրել Ե. Օտյանը։ Նույն՝ հարուստ դասի ալ-լասերված ու ապականված բարքերը, աշխատավորական խավերի ծանր վիճակի նկարագրություն է, որ տալիս է Զանանը։ Եթե Օտյանի գրչի տակ մեծ տաղանդով ցուցադրվել են բուրժուական ընտանիքների նեխած բարքերը, ապա Զանանի մոտ վառ կ'ոպով ցուցադրվում է Պոլսի աշխատավորական դասի կյանքը՝ զարմանալի իրավեկությամբ ու գունագեղ գրչով։ Դա երևան է եկել հատկապես պատմվածքի հերոսուհու՝ Անթառամի կերպարի գծագրման մեջ։

Զանանին զբաղեցրել է քաղաքացիական կօհվների էպոպեան գեղարվեստական գրականության նյութ դարձնելու միտքը: Դրա արտահայտություններից մեկն է «Թեմականի գլխարկով կոմունարը» պատմվածքը, նվիրված բոցաշունչ բոլշևիկ Ռ. Ղուկասյանի հեղափոխական կյանքին:

Զանանը գրել է նաև այլ պատմվածքներ, մենք չենք կարող հանգամանորեն կանգ առնել դրանց վրա: Անհրաժեշտ է միայն նշել, որ նա գրող է ո՞չ միայն իր պատմվածքներում, այլև հաճախ ընթացիկ հարցերի մասին գրած հոդվածներում և ակնարկներում: Թատրոնի, գրականության և այլ խնդիրների մասին նրա արժեքավոր հոդվածները, եթե մի կողմից վկայում են նրա խորը իրավեկությունը համաշխարհային մշակութին, հատկապես ֆրանսիական թատերական արվեստին,— ինչպես այդ երևում է «Պայքարում» գրած նրա մի ուշագրավ հոդվածից,— ապա միաժամանակ, իրենց ինքնատիպությամբ, բնութագրում են արձակագիր Զանանին:

Իբրև արձակագիր Զանանը, սակայն, հետք չթողեց սովետահայ գրականության մեջ, նա այդ տեղունվաճեց որպես դրամատուրգ: Ուստի անհրաժեշտ է ավելի հանգամանորեն խոսել նրա դրամատուրգիայի մասին:

Զանանը թողել է դրամատիկական մի շարք եր-

կեր: Դրանց թվում «Մեծապատիվ մուրացկանների» ինսցենիրովկան, գրված արձակագիր Վահան Թոթովենցի հետ, «Սիրելն արվեստ է» երեք գործողությամբ պիեսը, «Բանվոր քեռին արևելքում» մանկական պիեսը, հայտնի «Շահնամեն» և Մ. Նալբանդյանի ռևոլուցիոն գործունեությանը վերաբերող մի սցենարիալից պատառիկներ: Սրանցից լուս է տեսել միայն «Շահնամեն», թարգմանվել է մի քանի լեզուներով և բեմադրվել մի շաբթ թատրոններում թե՛ Հայաստանում և թե՛ Հայաստանից դուրս: «Բանվոր քեռին արևելքում» և «Մեծապատիվ մուրացկանները» չեն տպագրվել, սակայն բազմաթիվ անգամներ բեմադրվել են, իսկ «Սիրելն արվեստ է» պիեսը ո՞չ բեմադրվել է, ո՞չ էլ տպագրվել և գտնվում է հեղինակի անտիպ ձեռագրերի մեջ:

Զանանը իր ձեռքով լրացրած հարցաթերթիկներից մեկում, թվարկելով իր կատարած գրական աշխատանքները, առաջին հերթին նշում է «Մեծապատիվ մուրացկանների» ինսցենիրովկան: Նա իրավացի է: Դա որևէ երկ պիեսի վերածելու սովորական մի գործ չէ, այլ ստեղծագործություն, եթե կուկե՛ մասամբ հետապոտական աշխատանք, որին ձեռնարկել էին Զանանն ու Թոթովենցը՝ Հ. Պարոնյանի նկատմամբ ունեցած երկյուղածության ու հարգանքի խորը գիտակցությամբ:

Նրանց նպատակն է եղել ոչ թե «Մեծապատիվ մուրացկաններ» պատմվածքը վերածել պիեսի, որը իրենցից տարիներ առաջ կատարել էր Արամ Վրույրը, այլ հիմք ընդունելով պատմվածքը և տալով նրան դրամատիկական կառուցվածք, ստեղծել այնպիսի մի կատակերգություն, որտեղ օգտագործված լիներ Հ. Պարոնյանի երգիծական ժառանգությունը առհասարակ: Զանանի ու Թոթովենցի կատարած այս աշխատանքի մեջ բացի «Մեծապատիվ մուրացկաններից» օգտագործված են որոշ հատվածներ «Քաղաքավարության վնասներից», «Ազգային ջոջերից» որոշ սրամիտ ասուլյթներ և անգամ Պարոնյանի հանճարեղ աֆորիզմներից մի քանիսը:

Աբիսողոմ աղայի ինսցենիրովկայի ձեռագիր օրինակները, արտագրված Զանանի և Թոթովենցի կողմից, վկայում են, որ նրանց ելակետն է եղել չմեղանչել Պարոնյանի տեքստի դեմ, միաժամանակ Պարոնյանի երգիծանքի սուր զենքը ծառայեցնել բուրժուական կարգերի ու իդեոլոգիայի դեմ մղվող պայքարին: Ինչպես հայտնի է, «Մեծապատիվ մուրացկաններ» պատմվածքը ունի բեմականացման լայն հնարավորություններ, բավմապան ու տարբեր սիտուացիաներ ներկայացնող գործողություններ, որոնք այնքան արագ հաջորդում են միմյանց, երևան բերելով պոլսարիայ կյանքի նորանոր կողմերը, ինքնատիպ պերսոնաժները:

Սա հեշտացնում է ինսցենիրովկայի հեղինակի գործը: Բայց կա նաև մի դժվարություն. պատմվածքը չունի որևէ կուռ սյուժե: Դեպքերը հաջորդում են միմյանց հաճախ նույնատիպ պայմաններում, նույնպիսի իրադրության մեջ, հերոսները, այն էլ ոչ բոլորը, մեկ էլ վերջում են հանդես գալիս, շատ էպիզոդիկ ձևով: Զանանն ու Թոթովենցը զգալի աշխատանք են կատարել երկին ըստ ամենայնի դրամատիկական տեսք տալու համար: Աշխատել են լայն տեղ տալ հերոսներից մի քանիսին՝ Արիսողոմ աղային, Մանուկ աղային, Վերջինիս կնոջը՝ Շուշանին: Հեղինակներն ընդգծել են պիեսի սոցիալական կողմը, մի բան, որի համար լայն նյութ է տալիս Պարոնյանը հենց «Մեծապատիկ մուլացկաններ» պատմվածքի այն տեսարանում, ուր Արիսողոմ աղան զրուցում է լուսանկարչի հետ:

«Սիրելն արվեստ է» պիեսը Զանանը գրել է Դիլիջանում, 1932 թ. ամռանը: Մի շնչով գրված տտեղծագործություն է սա, որտեղ ի հայտ է գալիս խոր դիտողականության տեր գրողը: Պիեսի հիմքում ընկած է ընտանեկան, ամուսնական օջախն անխախտ պահպանելու գաղափարը: Գործող անձանց թիվը ընդամենը երեք է՝ Իդա Սերգեևնան, բարձրագույն կըրթություն ստացած մի կին, Միջան՝ նրա ամուսինը, ինժեներ, Մարտին Գրիգորիսիչը՝ շինարարության պետ,

որը միջամտում է Իդայի և Միշայի ընտանեկան կյանքին ու վրդովում այն: Իդան սիրում է ամուսնուն, միաժամանակ անտարբեր չէ դեպի Մարտինը, մի զգացմունք, որն աստիճանաբար ուժեղանալով իր ցանցի մեջ է առնում ჩեզ կնոջը ու նրան դնում անհույս վիճակի մեջ:

Հեղինակն իր առաջաբանում խոստովանում է, որ իր երկը գրել է, աչքի առաջ ունենալով ֆրանսիացի դրամատուրգ Պոլ Ժերալդիի մի պիեսը, որի բեմադրությունն ինքը տեսել է Փարիզում 1921 թ.: «Դա նշանակում է,— ասում է Զանանը,— իբր հեղինակ պրետենզիա չունիմ, քանի որ ես օգտվել եմ Ժերալդիից, չնայած նրան, որ մտքերի ու կառուցվածքի ակնքախ մի մասը ինքնուրուցն է»:

Անշուշտ, արտաքին իր հատկանիշներով որևէ նորություն չի պարունակում Զանանի այդ պիեսը: Համաշխարհային գրականության մեջ ալնքան շատ արծարծված թեմա է երրորդ մի անձնավորության միջամտությունը ընտանեկան կյանքին, կողմերի թաքուն զգացումների զարգացումը, հասունացումը, մինչև այն աստիճանը, երբ սիրահարներից լուրաքանչյուրը գերազույն երջանկություն է համարում ոչ թե գաղտագողի համբուլըներն ու գրկախառնումները, այլ այն գերերջանիկ օրը, երբ սիրելի մարդու հետ, առանց երկյուղի, կարող է զարթնել նույն հարկի տակ: Բայց

Բենց Երջանկության պատրանքով լի այդ պահին էլ սկիզբ է առնում նրանց դժբախտությունը: Այդպիսին է Էմիլ Չոլայի «Թերեւ Ռաքենը»: Այդպիսին է նաև Զանանի պիեսը, որի հերոսութին, փոթորկոտ ու ամենաբուռն սիրուց հետո, ընկնում է ջղաձգական վիճակի մեջ:

Զանանի պիեսի արժեքը նրա գեղարվեստական հատկանիշների մեջ է: Այն գրված է մեծ պաթոսով, լիրիկական տաք շնչով, հոգեբանի վրձինով: Հեղինակը գիտի մտնել իր հերոսների հոգեկան գաղտնարանների մեջ, որսալ նրանց ամենաթաքուն զգացումները: Պիեսը կուռ է, զերծ ավելորդաբանություններից ու շեղումներից: Եվ եթե այնուամենայնիվ չի բեմադրվել, դրա պատճառն այն է, որ Զանանը չի կարողացել բարձրանալ երեք անձի ապրած հոգեբանական դրամայի ոլորտից: Այդ պայքարի մշուշի մեջ է պահում նա իր ընթերցողին: Ցանկանալով հոգեբանական իր պիեսին տալ իրական հենք, սովետական շրջանի հասարակական հարաբերություններ, նա այնուամենայնիվ, չի կարողացել ստեղծել համովիչ ու իրական միջավայր:

Զանանի պիեսի մեջ իրոք որ նկատելի է ֆրանսիական ռոմանտիկ դպրոցի գերմ շունչը, հուկականությունը, անկեղծությունը. մասամբ զգացվում է նաև Օսկար Ուայլդի ոճական ազդեցությունը: Տեղ տեղ

նրա Խղան խոսում է այնպես, ինչպես խոսում էր Սալոմեն: Պիեսի վրա նկատելի է նաև «Թերեկ Ռաքեն» վեպի ազդեցությունը: Զանանի արխիվում պահպանվում է համանուն պիեսի մի թարգմանությունը կատարված, կամ արտագրված իր կողմից 1914 թ. Պոլսում, մի հանգամանք, որ վկայում է նրա հետաքըրքըրությունը դեպի այդ ստեղծագործությունը:

Զանանի ամենից շատ բեմադրված երկը «Բանվոր քերին արևելքում» մանկական պիեսն էր:

Պիեսի գաղափարական հենքը մերձավոր արևելքի երկրներից մեկում տիրող սոցիալական անհավասարությունն է: Հեղինակը ստեղծել է սյուժետային շատ ինքնատիպ մի կառուցվածք, օգտագործելով մանուկների համար սիրելի կենդանիների «կերպարներ»:

Որսորդը թակարդներ է լարել կենդանիներ բռնելու համար: Այդ թակարդների մեջ ընկնում են քաղաքի հարուստ վաճառականներից Միրկա Թիմուր աղան, աղվեսը, արջը, փիղը և էջը: Բատրակ Օսմանը, Թիմուր աղայի աղաչանքը լսելով, ուզում է նրան հանել ծուղակից, բայց դուրս է գալիս աղվեսը, ապա արջը, փիղը, էջը և նոր միայն ծուղակից ազատվում է Միրկա Թիմուրը: Վերջինս, նախքան ծուղակից դուրս գալը, մեծ խոստումներ է անում իր ազատարարին: Ծուղակից դուրս գալուց հետո բռլորն իրենց

Երախտագիտությունը հայտնում են բատրակ Օսմանին, տալով նրան նվերներ և միայն Միրզա Թիմուրն է, որ Երախտահատուց չի լինում: Քաղաքի հարուստ վաճառականները՝ Օսմանի ծեռքին տեսնելով փողի տված նվերը՝ թանկագին մի ադամանդ, ցանկանում են այն խլել նրա ծեռքից: Նրան գող են հոչակում և ոստիկանության օժանդակությամբ վերցնում ադամանդը:

Մանուկների ըմբռնողությանը հարապատ այս պարզ սյուժեի դրամատիկական զարգացման միջոցով Զանանը կարողացել է հասարակական քաղաքական բարդ հարցեր բարձրացնել՝ հանդիսատեսներին սեր ու համակրանք ներշնչելով դեպի բանվոր դասակարգը, կիզող ատելություն կապիտալիստական կարգերի հանդեպ, ատելություն, որը տեղ-տեղ իր արտահայտությունն է գտել դաჩլիճի ակտիվ բացականչություններով:

Բայց չե՞ որ պիեսը կոչվում է «Բանվոր քեռին արևելքում»: Հեղինակը արդարացրել է այդ վերնագիրը, գործող հերոսներից ամենից աշխուցքը, սիրելին «արցունք սրբող բանվոր քեռին է», որ հայտնվում է ամեն տեղ, որտեղ երևան է գալիս անարդարությունն ու խարեբայությունը: Նա ոչ միայն իր խորհուրդներով, այլ կոնկրետ օգնությամբ, հանդես է գալիս բանվորների, սեփական աշխատանքով ապրողների դատի

պաշտպանությամբ։ Գործող բոլոր անձերը սիրում են բանվոր քեռուն և հարգանքով խոսում նրա մասին։

Բացի բանվոր քեռուց և բատրակ Օսմանից՝ պիեսում, որպես դրական հերոսներ, հանդես են գալիս Օսմանի կինն ու աղջիկը, իսկ որպես բացասական՝ Թիմուր աղայից բացի, մի հարուստ վաճառական, մի ոստիկան, դատավոր, դատախազ և գրագիր։ Մնացածը կենդանիներ են՝ աղվես, արջ, փիղ, էշ գորտ և այլն։

Դրամատիկական տեսակետից բավականաչափ հաջող կառուցվածք ունի պիեսը, գործողության արագ ընթացքը, աշխուց ու սրամիտ դիալոգները, տեքրըստի հեկվամետր շարադրանքը, գործող անձանց բազմազանությունը, այս բոլորը բեմում ստեղծում են կենդանի մթնոլորտ, որին նույնքան աշխուժորեն արձագանքում էր դաჩլիճը։ Հեղինակը ըստ ամենայնի հաշվի է առել գերազանցապես պատանի հանդիսատեսի պահանջը։ Դրա համար էլ պիեսում տեղ-տեղ նա հաշվետու է լինում իր փոքրիկ հանդիսատեսներին, հարցեր է տալիս նրանց ու ստանում պատախաններ։

«Բանվոր քեռին արևելքում» մանկական պիեսը բեմադրել է ինքը Զանանը։ Դժբախտաբար չի պահպանվել մամուլի որևէ գնահատականը այդ բեմադրության ու ռեժիսուրայի մասին, բայց պիեսի մի

շարք վարիանտներում պահպանված ռեմարկներն ու ռեպլիկները ցուց են տալիս, որ Զանանը նպատակ է դրել ամենից առաջ ցուցադրելու արևելյան քաղաքի մթնոլորտն իր կենցաղային շտրիխներով, միաժամանակ ցանկացել է խույս տալ մերկապարանոց ագիտացիայից և այդ ագիտացիան գերազանցապես մատուցել է արագորեն միմյանց հաջորդող պատկերների միջոցով: Պատանի հանդիսատեսներին դեպի հարուստները ատելությամբ էին լցնում ո՛չ այնքան բանվոր քեռու ճառերը,— տեղ-տեղ նա իր վերաբերմունքը հայտնում է բնորոշ ու դիպուկ գնահատումներով,— այլ նրա խորապես պատճառաբանված արարքները: Բեմադրության գաղափարական կողմի բացահայտմանը նպաստել են կենդանական աշխարհից վերցված գործող անձինք: Բնորոշն այն է, որ հեղինակը կենդանիներին որպես գործող անձեր վերցնելու պայմանականությունը բացատրում է պիեսի հենց սկզբում և հայտնում մանուկներին, որ աղվեսի, փղի, արջի, էշի դիմակի տակ խաղալու են իրական մարդիկ, դերասաններ:

Զանանին շատ է հետաքրքրել Միքայել Նալբանդյանի կերպարը: Նա ծրագրել է գրել մի սցենարիա Նալբանդյանի կյանքի և ռևոլյուցիոն գործունեության մասին: Հայկինոյի հետ կնքված պայմանագրից երևում է, որ նա այդ աշխատանքը կատարելու հր մեծանուն

գրող Ավետիք Խարհակյանի հետ: Սցենարի մասին պայմանագրում տրված բացատրությունից երևում է, որ Ֆիլմը հիմնականում պատկերելու էր Նալբանդյանի մղած պայքարը հայ ժողովրդին դարավոր լծից ազատելու համար: Այն կոչվելու էր «Կոմս Էմմանվել, կամ «Գռեհիկ խելառը»: Թե ինչու «Գռեհիկ խելառ», դժվար է գուշակել, անշուշտ Զանանը ունեցել է որևէ նպատակ: Դժբախտաբար սցենարիայից մեզ հասել են միայն որոշ պատահիկներ, նշումներ, բոլորը գրված 1935 թվականին:

Ցաքուցրիվ այդ պատահիկները վկայում են, որ Զանանը հանգամանորեն ուսումնասիրել է Նալբանդյանի կյանքն ու ռևոլյուցիոն գործունեությունը, օգտագործել է անգամ արխիվային փաստաթղթեր:

Որոշակի նշում կա միայն Ֆինալի վերաբերյալ, որը լինելու էր այսպիսին. Երևան. Նալբանդյան փողոցում մարդիկ այցելում են հեղափոխական թանգարանի այն բաժինը, որտեղ այլ լուսանկարների և փաստաթղթերի կողքին, դրված է նաև Մ. Նալբանդյանի նկարը: Այս բաժինը այցելողների մեջ նկատվում է մի մարդ, որը չի հանել գլխարկը: Թանգարանի աշխատակիցը մոտենում է նրան ու ասում. «Ընկեր, հանեցեք ձեր գլխարկը»:

Այս կցկտուր նյութերից, ի հարկե, դժվար է գաղափար կազմել գրվելիք սցենարի մասին, սակայն երե-

վույթը ինքնին ուշագրավ է և վկայում է Զանանի հետաքրքրությունների մասին:

Սովետահայ դրամատուրգիայի պատմության մեջ, Զանանը իր արժանի տեղը գրավեց «Շահնամե» պիեսով:

«Շահնամե» շուրջ ժամանակին մեծ հետաքրքրություն է ստեղծվել, ծավալվել մտքերի աշխույժ փոխանակություն թե՛ մամուլում, և թե՛ դիսպուտներում, արտահայտվել են թեր ու դեմ կարծիքներ, այս բոլորով հանդերձ Զանանի պիեսը բռնել է դժվարին քննություն և հաղթանակով է դուրս եկել բոլոր փորձություններից:

Դրա ապացույցն է ո՞չ միայն այն, որ նա արժանացավ լավագույն պիեսների համամիութենական մըրցանակաբաշխության երրորդ մրցանակին (ըստ Էռլիան գրավեց երկրորդ տեղը, որովհետև առաջին չտրվեց ոչ ոքի), այլև այն, որ «Շահնամեն» ցայտուն մարմնավորում ստացավ բեմի վրա, խաղացվեց Երևանում, Բաքվում, Լենինականում, Նախիջևանում և այլ քաղաքներում, թարգմանվեց ռուսերեն, վրացերեն, ադրբեյջաներեն, ուզբեկերեն, տաջիկերեն և այլ լեզուներով:

Զանանի պիեսը երկար ու տքնածան աշխատանքի պատուղ էր: Ավելի քան մեկ հնգամյակ ուսումնասիրելով պարսկական դինաստիաների տարեգրությունը,

թափանցելով պարսիկ շահերի ոճիրներով լի պատմության էջերի մեջ,— որոնցից յուրաքանչյուրից արյուն էր բուրում, դրամատուրգը կարողացել է բացահայտել ընչափուրկ մասսաների ծանր վիճակը ու պայքարը տիրապետողների դեմ: Հեղինակին չի հետաքրքրել 18-րդ դարի պարսկական արքունիքի ներքին ապականված բարքերի պասսիվ ցուցադրումը, միայն դաժանությունների բեմ հանումը: Նրան առաջին հերթին հետաքրքրել է պատմական այդ ֆոնի վրա ժամանակակից Արևելքի հուզող հարցերը բարձրացնելու, գաղութային ժողովուրդների ազատագրական պայքարը իմպերիալիզմի դեմ պատկերելու խնդիրը: «Շահնամեում»—գրում է Զանանը,—ուզեցել եմ արվեստի միջոցով իմ բուռն ատելությունը արտահայտել միապետական բռնակալությունների հանդեպ, դիմակավերծել հաշտվողականության լարծուն դեմքը և լուսեղեն կերպով ուրվագծել հեղափոխական շարժումների նախատիպերը:... Պատմականությունը լոկ գեղարվեստական միջոց է ժամանակակից արևելյան սոցիալ քաղաքական խնդիրների շուրջը ևս հրապարակով մտածելու»<sup>1</sup>:

Զանանը իր նամակներից մեկում գրում է, որ իրեն վրադեցրել է նաև պիեսը հայ հասարակական քաղա-

<sup>1</sup> Գրականության և արվեստի բանգարան, Մ. Զանանի ֆոնդ:

քական կյանքի հրատապ հարցերին ծառայեցնելու միտքը: Ի դեմս ժողովրդի անունից խոսող, բայց ժողովրդի դեմ գործող Յուսուփի, նա ցանկացել է ջրի երես հանել «...բոլոր տեսակի քաղաքական շառլատաններին և ժուլիկներին (դաշնակներին, մենչևիկներին, սոցիալ-դեմոկրատներին և այլն):

Այս պիեսի արժանիքը, սակայն գաղափարական ճիշտ կողմնորոշման մեջ չէ միայն, այլ գեղարվեստական ինքնատիպության: Նա որքան մեծ եռանդ է գործադրել պիեսում պատկերվող ժամանակաշրջանի պատմությունը խորապես ուսումնասիրելու համար, նույնքան տքնել է այն գեղարվեստորեն վերարտադրելու համար: «Շահնամեն» իրոք, ծնվել է ստեղծագործական երկարատև ու մեծ երկունքից հետո: Այդ է վկայում հեղինակի արխիվում պահպանված տարբերակների բազմազանությունը, տարբերակներ, որոնց թիվը ինչպես Զանանն է վկայում, հասնում է քսանի: Անգամ հարևանցիորեն ծանոթանալով այդ ծեռագրերին, համոզվում ես, թե դրամատուրգը ինչպիսի խըստապահանջությամբ է մոտեցել իր ստեղծագործությանը. Եղել է անխնա, կրճատել է, շնչել ամբողջ հատվածներ, գլուխներ, էջեր, գրել է նորը, այն էլ է փոխել, սեղմել ծգծգված մասերը, միշտ նպատակ ունենալով ստեղծել դրամատիկական լիարժեք մի գործ, հաշվի առնելով բեմի սպեցիֆիկան: Այսպիսի ծանր



Սերգ' «Խասու-վիոլ» կինոնկարից



...Մարտիրոս Սարյանի պատկերմամբ

ՀԱՅ ՍԱԾ ԳԻՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՏԵՇԻՑՆԵՐԱԿ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱԿԱԴԵՄԻԱՆ

ու հոգեմաշ աշխատանքից հետո է, որ հեղինակին հաջողվել է ստեղծել կլասիկ տրագեդիայի պլանով հյուսված մի պիես, մի շարք այնպիսի կերպարներ, որոնք կարող են արժանի համարվել հայ դրամատուրգիայի ստեղծած մնայուն կերպարների թվում դասվելու:

Զանանը Շեքսպիրից շատ է ազդվել: Այդ մասին կա նաև իր վկայությունը: «Շահնամեի» ստեղծագործական պատմության նվիրված հոդվածում նա գրում է. «Դրամատիկական կառուցման խնդրում օգտվել եմ 23 տարվա իմ բեմական փորձից, կլասիկների ժառանգության նորագույն օգտագործումից: Շիլերին քիչ եմ սիրել, անսահման պաշտամունք եմ ունեցել Շեքսպիրի և Գոգոլի հանդեպ»:

«Շահնամեի» սկիզբը, օրինակ բավականաչափ հիշեցնում է «Համլետի» սկիզբը: Երկու դեպքերում ել բնության գաղտնիքների նկատմամբ մարդու ցուցաբերած հետաքրքրության հետ կապված դեպքերով է, որ սկսում է բեմական գործողությունը, հենց սկըզբից հանդիսատեսի մեջ բուռն հետաքրքրություն առաջացնելով բեմում կատարվող դեպքերի հանդեպ: «Համլետում» այդ հետաքրքրությունը կապված է ուրվականի հայտնվելու հետ, «Շահնամեում» աստղերի շարժման, այդ շարժման ընթացքով քաղաքական դեպքերը բացատրելու հետ:

Այուժետալին այս կարգի նմանություններ դարձյալ կան, որոնք սակայն չեն նսեմացնում դրամատուրգին: Ինքը՝ դրամատուրգիայի համաշխարհային Հսկան, իր բոլոր պիեսների այուժեները վերցրել է ժողովրդական ավանդություններից, անգամ տպագրված նովելներից: Նույնն են արել նաև արևմտաեվրոպական, ռուսական շատ նշանավոր դեմքերը, Շիլերը, Պուշկինը, Լերմոնտովը... Հականը ստեղծագործական այն ինքնուրույնությունն է, որ մենք տեսնում ենք այդ բոլոր հեղինակների մոտ:

Զանանի «Շահնամեն» ևս ինքնուրույն երկ է:

Պիեսը գրելիս, հատկապես նրա կենտրոնական դեմքի՝ Շահ Ջեփրի կերպարը գծագրելիս, Զանանը հաշվի է առել ինչպես Շեքսպիրի Ռիչարդ 3-րդի, Մակբեթի կերպարները, այնպես էլ, մեր կարծիքով, Ա. Տոլստոյի Իվան արենի կերպարը: Բայց նա իր հերոսին ներկայացրել է ուրիշ միջավայրում, օժտել արևելքի բռնապետի հոգեբանությամբ ու համոզմունքներով, հատկանիշներ, որոնք նրան անչափ հեռացնում են հատկապես Շեքսպիրի վերոհիշյալ հերոսներից: Զանանի հերոսը չունի ո՞չ հոգեկան և ո՞չ մտավոր որևէ արժանիք: Նրա մոտ առկա է միայն անասնական եսը, որին նա զոհաբերում է ո՞չ միայն ժողովրդին, պալատականներին, այլև իր հարազատ որդուն: Հարեմի անուշահոտ բուրմդունքների մեջ թմրած

շահը չունի մարդկային որևէ ապնիվ զգացում սեր, բանականություն և ոչ էլ որևէ այլ ձգտում: Տարիների շվալտ կյանքը նրա մեջ առաջացրել է բռնապետական այնպիսի մի ահավոր խստություն, որին ոչինչ դիմանալ չի կարող: Սկզբից մինչև վերջ նա ծանրախոհ է, զսպված: Նրա ամպամած դեմքին երբեք չի երևում լուսի որևէ նշույլ:

Շահ Զեհրից ոչ պակաս, գուցե նույն հաջողությամբ է գծված, ներքինապետ Խոջա Մուբարեքը, արևելքի ընտանեկան կյանքի ամենամեծ անպատճերյունը մարմնավորող այդ քստմնելի մարդը: Բնության կողմից մարդուն տրված ֆիզիկական շնորհներից զուրկ այդ ներքինին, կրկնակի մի հաշմանդամ է, հաշմանդամ՝ և՝ ֆիզիկական, և հոգեկան առումով—վրեմի պապակը հագեցնելու համար՝ նա պալատի ճահճուտում իր սնանկացած հոգու սնունդ է որոնում արյան ճապաղիքի մեջ, իր կյանքի նպատակն է համարում հարստանալն ու շրջապատի մարդկանց աղետի մատնելը:

Ինչպես Շահ Զեհրը, Խոջա Մուբարեքն էլ չունի որևէ վերի ձգտում, նա սողում է հարեմական նրբանցք ներում, քծնում, շողոքորթում երեսանց, իսկ ներքնապես ատամներ կրճտում բոլորի նկատմամբ: Զքնաղ կանանց մթնոլորտում ապրող այդ մարդու մեջ մնացել է միայն վրեժիննդրության բուռն ցասումը:

Մ. Զանանը այս պիեսում ստեղծել է նաև մի քանի կանացի կերպարներ: Դրանցից ամենից հաջողվածը և ավարտունը Սելման է, մայր թագուհին, պարսկական շահերի դինաստիայի համար արու զավակ ծնած կինը, որը, պալատական այդ քառսի մեջ, իր հոգեկան ազնիվ գծերով փայլող միակ անձնավորությունն է: Նրա մոտ մենք տեսնում ենք սեր, հավատարմություն, վեհանձնություն և հապատություն, արհամարհանք դեպի շրջապատի փարթամ կյանքն ու գաճաճ մարդիկ: Որդու սերը, նրա դժբախտ ճակատագիրը, Սելմային մի կողմից մղում են դեպի վրեժինդրություն, մյուս կողմից կասեցնում են նրան՝ վճռական պահին: Սելման ճշմարտացի կերպար է և՝ իր համոզմունքներով և՝ իր գործունեությամբ: Անկեղծ են նրա ապրումները, հոգեկան փոթորկումները, վիշտըն ու տառապանքը, ցասումն ու կատաղությունը:

Միանգամայն տարբեր խարակտեր է Փիրուզան: Դա հենց Արևելքի հարեմական կյանքում սնուցված այն անձնավորությունն է, որի մեջ մարդկային բոլոր զգացմունքները կենտրոնացվում են մի կուլմինացիոն կետում. դա կիրքն է, անհագուրդ, անասնական կիրքը: Այստեղ էլ հանդես է եկել դեռևս պոլսական պայմաններում հարեմական կյանքը խորապես ուսումնասիրած գրողի նուրբ դիտողականությունը:

Մամուլում թեր ու դեմ կարծիքներ են եղել «Շահ-

նամեից» հերոսներից Յուսուֆի ու Կուլաբի մասին։ Յուսուֆը անողնաշար ու անսկզբունք մարդ է, որը այլ բան է քարոզում, այլ բան կատարում։ Խոսում է, շաղակրատում դեմոկրատիայի մասին, ժողովրդի մասին, կոչ անում ապստամբության, կատարում խոստումներ, բայց, հենց որ գահ է բարձրանում, կորցնում է իրեն՝ ճոխ կյանքի արահետների, հարեմի մշուշի մեջ, չի տեսնում այլևս պալատի պարիսպներից դուրս գտնվող կյանքը։ Զպետք է մոռանալ, որ հեղինակը նրան ներկայացրել է որպես երրորդ դասի ներկայացուցիչ, որին հատուկ էին անվճռականությունը, խոսքի և գործի անհամապատասխանությունը, ի վերջո դավաճանությունը ժողովրդի նկատմամբ։ Ուստի դժվար է համաձայնել այն մարդկանց հետ, որոնք գտնում են, թե թույլ է գծված այդ կերպարը։

Նույնը չի կարելի ասել Կուլաբի մասին, հեղինակը հնարավորություն ուներ ավելի տիպական գծերով ներկայացնելու Արևելքում շատ տարածված գաղափարական այդ ավազակին։

Զանանը ցույց է տվել նրա մի շատ բնորոշ հատկանիշ, որով նա տարբերվում է պիեսի բոլոր գործող անձերից։ Դա նրա հետևողական ժողովրդասիրությունն է, անդավաճան հավատարմությունը դեպի ճնշված մարդը։ Այդ բանը սքանչելի կերպով հանդիս է գալիս այն տեսարանում, երբ Կուլաբը, մեծ դը-

վարությամբ, համաձայնվում է ներկայանալ իր նախ-  
կին ընկեր, այժմ արքա Յուսուֆին ու ներկայանալուց  
հետո իրեն պահում է սեփական արժանապատվու-  
թյան բարձր գիտակցությամբ: Կարծեք թե իրար դեմ  
կանգնած այդ երկու անձնավորություններից ոչ թե  
Յուսուֆն է արքան, այլ՝ Կուլարը, որ համարձակ մեր-  
կացնում է Յուսուֆի հակաժողովրդական գործունեու-  
թյունը:

Դիպուկ դիալոգներով կառուցված այս ամբողջ  
տեսարանը, իր դրամատիզմով, «Շահնամեի» ամենա-  
հաջողված էջերից է: Դժբախտաբար, Կուլարը միայն  
այս տեսարանում է իրեն դրսերում: Պիեսի այլ հատ-  
վածներում ավելի շատ խոսվում է նրա մասին, բան  
ցույց տրվում նրա գործերը:

«Շահնամեն» դրամատիկական տեսակետից և գա-  
ղափարական առումով հաջողված գործ էր, միանգա-  
մայն արժանի այն գնահատականին, որ ստացել էր  
լավագույն պիեսների համամիութենական մրցանակա-  
բաշխության Ժյուրիի Բաղորդագրության մեջ, որտեղ  
ի միջի այլոց ասված է. «Հեղինակը, օգտագործելով  
ավանդության նյութերը, կարողացել է տալ Արևելքի  
ճնշված մասսաների վառ պատկերը: Զանանի պիեսը  
բեմական տեսակետից շատ էֆեկտավոր է և գրված  
բանաստեղծական հիանալի լեզվով (հանգավորված  
արձակ) »:

\* \* \*

1936 թ. գարնանը Երևանի պետական թատրոնը բեմադրեց «Շահնամեն» որ ունեցավ փայլուն հաջողություն: Դրան նպաստեցին մի կողմից պիեսի դրամատիկական արժանիքները, ռեժիսոր Ա. Գուլակյանի շանադիր աշխատանքը, մյուս կողմից՝ դերասանական կոլեկտիվի մղումը լիարժեք մարմնավորում տալու Զանանի հերոսներին (Սելմա խանում—Արուս Ոսկանյան և Հասմիկ, Նավլու խաթուն—Ռուզաննա Վարդանյան և Սյուզան Գարագաշ, Խոջա Մուբարեք—Վ. Վաղարշյան և Ա. Ավետիսյան, Միրզա Յուսուֆ—Հ. Ներսիսյան և Վ. Վարդանյան, Կուլաբ—Գ. Զանիբեկյան):

Մամուլում շատ գրվեց Շահ Զեիրի դերակատար Զանանի մասին: Նրա Շահ Զեիրը ահարկու, սարսըռապղեցիկ մի բռնապետ էր, որից սարսափում էր ոչ միայն ժողովուրդը, այլև իր հարազատ ընտանիքը: Կասկածամտությունը նրան մղում է նորանոր ոճիրների, բայց ոչ երբեք նահանջի, զիջողության: Նրա զորեղ կամքը երևուած էր թե՛ շարժումներից, ձայնից, խոսելածեակից, և թե՛ կեցվածքից ու միմիկայից: Եվ այս բոլորը բացահայտված խորը ռեալիզմով, առանց որևէ սեթեթանքի, անհամովիչ զեղումների, ինչպես մամուլն էլ նշել է, «ոչ ոռմանտիկ կողմերով, այլ ցայտուն ռեալիզմով. այս է Զանանի առավելությունը այդ

դերի մեջ, որ հուվիչ է այնքան, որքան ատելի և ատելի է այնքան, որքան հուվիչ»<sup>1</sup>:

Միակ շեղումը տեքստից այն էր, որ պիեսում Զանանը իր գլխավոր հերոսին գծագրելիս առաջնորդվելով շեքսափիրյան պլանով, փորձելով նրա մեջ ցուց տալ մակրեթյան և ոիչարդյան գծեր, հենց սկզբից ի հայտ էր բերում կերպարին ոչ բնորոշ խոհականություն, զսպվածություն, որոնք հոգեբանական բ'արդ ապրումներից զուրկ այդ մարդուն արհեստականորեն դարձնում էին իր արարքների դաժանությունը գիտակցող անձնավորություն, մինչդեռ Շահ Զեհրի նման բռնապետներին հատուկ էր անտարբեր վերաբերմունք շրջապատում կատարվող ոճիրների հանդեպ: Զանանը հենց առաջին գործողությունում, առաջին անգամ բեմ մուտք գործելիս, հոգեկան անհարկի փոթորկումներ ու ապրումներ արտահայտելով, ըստ էության շեշտակինում էր դերակատարման որոշ դրվագների հնչողությունը, թուլացնում այն պահերը, երբ Զեհրը, հարկադրված լինելով պայքար մղել մի կողմից հայրական ու մարդկային զգացման, և մյուս կողմից իշխանության տենչի դեմ, պիտի փոթորկվեր ու իսկապես ապրեր իր վիճակը:

«Այլևս,— կարդում ենք մամուլում»— նրան ուժ

<sup>1</sup> «Խորեգային արվեստ», 1986 թ. № 9:

չի մնում այդ երկու զգացմունքների պայքարի զարգացման համար: Նրա հրամանը թագաժառանգին գլխատելու վերաբերմամբ, անցնում է առանց խորը տպավորության, քանի որ այդ կոնֆլիկտի զարգացումը դեռ չի լարել հանդիսականին և ընդհակառակը հանդիսականը դեռ սպասում է հանգուցի զարգացմանը գործողության մեջ. բայց ոչ մի լուծում սկսութեղի տեսարանով»<sup>1</sup>:

Շահ Զեհրից հետո Զանանը կատարել է մի շարք այլ դերեր, որոնք շատ բան չեն ավելացնում նրա հաջողված խաղացանկի վրա: Շահ Զեհրը մնաց իբրև նրա ստեղծագործական մտքի ուժգին պոռթկումը թե՛ որպես դրամատիկական կերպար և թե որպես արտիստական մտահղացում: Այս իմաստով դա էլ հենց եղավ Զանանի կարապի երգը: Զանանը Շահ Զեհրի կերպարանքով ամուր քանդակվեց թատերասեր հասարակայնության հիշողության մեջ և այսօր էլ, այդ դերի վերջին երևումից ավելի քան քսան տարի հետո, այն չի խունացել ու մոռացվել տեսնողների մտքում:

«Շահնամեում» իրենց ամբողջ տաղանդով փայլեցին նաև Արուս Ոսկանյանը (Սելմա խանոս), Վ. Վաղարշյանը և ուրիշներ: Անմոռանալի էին հարեմական ապականված միջավայրում իր մարդկային

1 «Խորեգային արվեստ», 1936, № 9:

ապնիվ գծերը պահած Արուս-Սելմայի հանդիպումները Շահ Զեհրի և Խոջա Մուբարեքի հետ: Վ. Վահարշյանը Խոջա Մուբարեքի մեջ ընդգծում էր ոչ այնքան վրեժխնդրության զգացումը, որքան իր ողորմելի էության բազմակողմանի ցուցադրումը:

Երևանից հետո «Շահնամեն» բեմադրվեց Լենինականում: Հեղինակի կարծիքով ռեժիսոր Վ. Աճեմյանը շեշտը դնելով պալատական ինտրիգաների վրա, դրանք դարձնելով առանցքային հարց, պիեսի սոցիալական քաղաքական կողմը մասամբ թուլացրել էր, մանավանդ որ սոցիալական պայքարի մարմնացումը հանդիսացող Կովաբը միայն մի տեսարանուն էր հանդես գալիս:

Մեր կարծիքով Զանանը չափավանցել է իր բնութագիրը: Փաստ է, որ Կովաբը պիեսում էլ թույլ է գծված:

Իր բեմական կյանքի վերջալույսին «Շահնամենում» հանդես եկավ Հովհ. Աբելյանը իր տաղանդի ողջ ցուցադրմամբ:

Լենինականի թատրոնում «Շահնամեն» ունեցավ իր կերպարների տաղանդավոր մարմնավորողներին հանձին Ցոլակ Ամերիկյանի (Շահ Զեհր), Լ. Զոհրաբյանի (Խոջա Մուբարեք), Ե. Դուրյան-Արմենյանի (Սելմա), Գեղամ Հարությունյանի (Կովաբ) և ուրիշների:

Ամերիկյանը Շահ Զեհրի մեջ ընդգծել է ամենից առաջ բռնապետին, ներկայացնելով Իվան Արեղին հիշեցնող, բայց արևելյան պալատական ինտրիգաներից ցանցի մեջ խճճված մի այնպիսի ինքնակալի, որը հարազատ էր հենց պիեսի հեղինակի ընկալմանը:

Բացի Երևանից ու Լենինականից «Շահնամեն» բեմադրվեց նաև Բաքվում ու Նախիջևանում: Բանն այն է, որ Ժյուրիի որոշման հրապարակումից հետո մեծ հետաքրքրություն էր ստեղծվել պիեսի շուրջը. Սովետական Միության կենտրոնական քաղաքներից մի քանիսում նախապատրաստական լուրջ աշխատանքներ էին կատարվել «Շահնամեն» բեմադրելու ուղղությամբ: Սկսվել էր ակտիվ նամակագրություն Զանանի ու այդ քաղաքների թատրոնների ղեկավարների միջև: «Շահնամեն» բեմադրելու ուղղությամբ զգալի աշխատանք էր կատարել նաև ՄԽԱՏ-ը, որն իր ներկայացուցչին ուղարկել էր Երևան՝ բանակցելու հեղինակի հետ, հայտնելու ՄԽԱՏ-ի ղեկավարության որոշ ցանկությունները պիեսում մի քանի փոփոխություններ մտցնելու մասին: Ակտիվ գրագրություն էր սկսվել նաև Բաշկիրիայի և այլ հանրապետությունների թատրոնների ու Զանանի միջև:

Թե «Շահնամեն» պիեսի շուրջ ստեղծված հետաքրքրությունը որքան մեծ էր, որքան բարձր էր գնահատվել պիեսը հատկապես միջին ասիական երկր-

Ներում,— որոնց համար ավելի հարազատ էր ներկայացվող նյութը,— երևում է Տաջիկստանի լուսժողկոմ Ապտինովի հեռագրից՝ ուղղված Զանանին:

«Շահնամեի» բեմադրությունը,—կարդում ենք այդ հեռագրում,— մի ներդրում է մեր դրամատուրգիայի ասպարեզում: Իրանյան ժողովուրդների կենցաղի և բարքերի ծանոթությունը, քաղաքական նպատակադրությունները, վառ տիպաժը «Շահնամեն» դարձնում են մեր էպոխայի տաղանդավոր ստեղծագործությունը: Անկեղծորեն շնորհավորում ենք մեծ հաջողությունը: Ուրախ կլինեինք տեսնել Ձեզ Ստալինարադում «Շահնամեի» բեմադրությանը»:

Մկրտիչ Զանանը մեռավ 1938 թ., իր ստեղծագործական կյանքի ամենահիասուն ու բեղմնավոր շրջանում, երբ նա և՝ որպես դերասան և՝ որպես դրամատուրգ լայնորեն ճանաչված էր ոչ միայն մեր հանրապետության մեջ, այլև նրանից դուրս:

Այս գրքուկը ականավոր արտիստի թափառումներով ու մաքառումներով լի կյանքը ընթերցողին ներկայացնելու մի նախափորձ է, թատերական մի գործի, որը շրջագայեց շատ երկրներ, եղավ Փարիզում, Լոնդոնում, Հռոմում, տեսավ բազմաթիվ քաղաքներ, ժողովուրդներ, բայց ստեղծագործորեն աճեց իր հայ-

րենիքում, սիրեց մայրենի բեմը և իր ամբողջ ուժը, հմտությունը, փորձը տրամադրեց սովետահայ թատրոնի բարգավաճման գործին, եղավ նոր գաղափարներով անկեղծորեն խանդակառվողներից մեկը:

Մաքառում, կյանքի սանդուղքների դժվարությունները հաղթահարելու տոկունություն, ձգտում՝ դեպի ազնիվ, հանրօրեն օգտակար աշխատանքը, դեպի լավը, այս էր Զանանի կենսական մղումը: Նա անկեղծ էր, ազնիվ, բարի, չգիտեր խորամանկել, վրեժինդիր լինել: Համակ էներգիա էր, նվիրվածություն, պոհարերություն:

Զանանը միայն դերասան չէր, այլև թատրոնի պրոպագանդիստ: Նա թատերական արվեստը սիրով տարավ ամենահեռավոր գլուղերը: Նրան չվախեցրին ո՞չ Հայատանի ահասարսուռ լեռները բարձրանալու և ո՞չ Էլ անդնդախոր ձորերում սայլերով անցնելու դըժվարությունները: Ու այն պահին, Երբ նա իր ընկերների հետ միասին, լծված սայլերին, անցկացնում էր ջրերից թատերական դեկորները, գուցե գտնվում էր հոգեկան գերերջանիկ այնպիսի վիճակում, որի մեջ չէր գտնվել ո՞չ Ելֆելան աշտարակի գագաթին, ոչ ու Մարկոսի հրապարակում: Երջանիկ էր այն գիտակցությամբ, որ ծառայում էր ազատագրված նոր հայրենիքը կառուցող մեծ բանակում:

---

Զանանը օրինական հպարտությամբ ու անկեղծությամբ է, որ 1935 թ. Փարիզ ուղարկած իր նամակներից մեկում գրել է. «Երջանիկ եմ այս խորը զգացումով, որ խորհրդային կյանքի կազմակերպման ամենադժվարին օրերին անդավաճանորեն գլուխս հետ չդարձրի և այժմ տասներեք տարվա ստաժ ունեցող խորհրդային քաղաքացի եմ»:

Ոչինչ չունենք ավելացնելու այս խոստովանությանը:



## ԶԱՆԱՆԻ ԽԱՂԱՑԱԾ ԴԵՐԵՐԸ

ՊՈԼՍՈՒՄ ԵՎ. ՓԱՐԻԶՈՒՄ. 1912—1922 թթ.

Սերոք — «Մարվող նրազներ» — Ալ. Արելյան  
Բարխուսար — «Նամուս» — Ալ. Շիրվանզադե  
Ռուտամ — «Նամուս» — Ալ. Շիրվանզադե  
Մեյրան — «Նամուս» — Ալ. Շիրվանզադե  
Դիմ Դանիել — «Չար ողի» — Ալ. Շիրվանզադե  
Էլիզրարով — «Պատվի համար» — Ալ. Շիրվանզադե  
Բագրատ — «Պատվի համար» — Ալ. Շիրվանզադե  
Դալու — «Արմավիրի օրերին» — Ալ. Շիրվանզադե  
Ֆագո — «Օրելլո» — Վ. Շեխոպիր  
Դոն Պիետրո — «Դոն պիետրո Կարուզո»  
Լորան — «Թերեզ Ռաֆեն» — Էմիլ Ջոլա  
Ժան Վալժան — «Թշվառներ» — Վ. Հյուզոն  
Արման Դյուվալ — «Կամելիազարդ կինը» — Ալ. Դյումա  
Դուբս Ռովիկո — «Մահամ Սանծեն» — Վիկտորիեն Սարդու  
Նապոլեոն — «Նապոլեոն Բոնապարտ» — Պիեր Ռեշոն  
Հեռվզես — «Սալոմե» — Օսկար Ռայլիդ  
Կլորիո — «Սամսոն» — Թերեզայն  
Շենքո — «Սիմոն» — Պիեռ  
Գահաճառանգ — «Միմոսը արքա» — Յր. Լոտար  
Պիեր — «17 տարեկաններ» — Մարտ Դրեյեր

կարգ—«Աղբատ երիտասարդի մը վեպը»—Օգոալ Ֆեռյե  
Ստանիսլավ—«Ֆրանսիոն»—Ալ. Դյումա ուղի  
Ժյուլ Ռենին—«Փողոցային աղջկը»—Դ. Նիկոլեմ  
Յարենծ—«Խորտակված բեվեր»—Պիեր Վոլֆ

Բացի ճիշճած դերերից Զանանը Պոլսում մասնակցել է  
նաև «Անմանն ժիրայր», «Գլխու պառյա», «Առլումին», «Դա-  
տախազ Հալլես», «Դյուրան-Դյուրան» և այլ պիեսների բե-  
մադրություններին:

### ՍՈՎԵՏԱՀԱՅ ԹԱՏՐՈՆՈՒՄ

#### 1 9 2 3

Պիորուչինո—«Կամակոր կնոշ սահմանարումը»—Վ. Շեխո-  
պիր  
Դիմանշ—«Դոն Ռուս»—Մոլիեր  
Պասոոր—«Զրասույզ զանգ»—Գ. Հառապաման  
Արզան—«Երևակայական նիվանդ»—Մոլիեր  
Բոս—«Հույսի կործանում»—Հ. Հեյերման  
Սոլոմոն—«Քին»—Ա. Դյումա  
Լուենցո—«Վենետիկի վանառականը»—Վ. Շեխոպիր  
Ժեկիո—«Տրիլիք»—Գ. Գի

#### 1 9 2 4

Իշխան—«Ազատագրված Դոն Կիխոտ»—Ա. Լունաշարսկի  
Շպիզելրեգ—«Ալազակներ»—Շիլեր  
Ռտգին—«Կարմիր դիմակ»—Ա. Լունաշարսկի  
Ռուբել Ակոստա—«Ռուբել Ակոստա»—Կ. Գուցկով  
Ղորորոպա—«Քաջ նազար»—Դ. Դեմիրնյան

1925

Մարտին—«Զրահ փառաց»—Յու. Յուրին  
 Կլավդիոս—«Համլետ»—Վ. Շեխտիր  
 Բարբոլոմե—«Վարժապետ Բուրուս»—Ա. Յայկո  
 Քրիստիան—«Աննա Քրիստի»—Օնեյլ  
 Հաստ պարոն—«Առավոտից մինչև կես գիշեր»—Դ. Կայզեր

1927

Հենրի—«Բուլ»—Դ. Շեքլնավ  
 Միխ. Յարովյա—«Լյութով Յարովյայա»—Կ. Տրենյավ  
 Միստեր դ'Ստել—«Մորգանի խնամին»—Ալ. Շիրվանգաղի  
 Տարտյուֆ—«Տարտյուֆ»—Մոլիեր

1928

Գոդուն—«Բեկում»—Բ. Լավրենյավ  
 Պեկլեվանով—«Զրահագենաց»—Վ. Խվանով  
 Շուրուպով—«Թույն»—Ա. Լունաշարսկի  
 Ռուրավոյ—«Խոռվուրյուն»—Դ. Յուրմանով  
 Կապիտան—«Մոնշա Զինաստան»—Ս. Տրետյակով

1930

Լիոնով—«Լեռ»—Զ. Զալայա  
 Քաղաքազլուխ—«Ռեվիզոր»—Ն. Գոգոլ  
 Ելցին—«Վերածուլում»—Դ. Շեքլնավ  
 Օհան ամի—«Օղակում»—Վ. Վաղարշյան

1931

Ժեներալ—«Մարոկիո»—Ա. Բաղդասարյան

Մորիս—«Նապոլեոնի արշավանք»—Ա. Լունաշարսկի և  
Ա. Դեյչ  
Ռուդակի—«Պոեմ կացնի մասին»—Ն. Պոգոսին

### 1 9 3 2

Ցեխովոյ—«Անը»—Աֆինոգենով  
Սատին—«Հատակում»—Մ. Գորկի  
Արկադի Կիրակոսով—«Նավթ»—Վ. Վաղարշյան  
Օզաբն—«Պաղտասար աղբար»—Հ. Պարոնյան  
Մարտինով—«Ֆուֆորային շող»—Դ. Թևիրնյան

### 1 9 3 3

Մակրեր—«Մակրեր»—Վ. Շեխովիր  
Յագո—«Օրելլո»—Վ. Շեխովիր

### 1 9 3 5

Բերեստ—«Պլատոն Կրեշետ»—Ա. Կորնեյչով

### 1 9 3 6

Իշխան Զատլ—«Արսեն»—Ս. Շանջիաշվիլի  
Շան Զեիր—«Շահնամե»—Մ. Զանան  
Օզաբն—«Պաղտասար աղբար»—Հ. Պարոնյան

### Կ Ի Ն Ո Տ Ո Ւ Մ

Սեիդ—«Խասփուզ»—ռեժ. Հ. Բեկնազարյան  
Խանո—«Քրդեր և եղիղներ»—ռեժ. Մարտիրոսյան  
Պրեմիեր Մինիստր—«Երկու գիշեր»—ռեժ. Պ. Բարխումարյան

## ԹՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

[Նախարանի փոխարեն]	5
Առաջին տասնամյակը	7
Սովետահայ քեմում	42
Զանանը դրամատուրգ	113
Զանանի խաղացած զերերը (յանկ)	143



Գառնիկ Խաչատրյան Ստեփանյան  
«ՄԿՐՏԻՉ ԶԱՆԱՆ»

Խմբագիր՝  
ՎԱԴԻՄ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Տեխ. Խմբագիր՝  
Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Մրբագրիչ՝  
Հ. ՀԱՅՐՈՒԹՅՅԱՆ

\*

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ Յ Ա Ն  
Երևան, Ստալինի պող. Հ 45

\*\*

Իշեցված է արտադրության 5 ճակիսի 1960 թ.:  
Ստորագրված է տպագրության 2 օգոստոսի 1960 թ.:  
Բուլը  $70 \times 921/32$ , տպագրական 4,6 մամով:  
Հատարակական 4,1 մամով + 6 ներդիր:  
Փաստվեր 1107, Տպագրական 2000; ՎՃ 03951, զինք 4 ռ.:

Ե. Խան, Պոլիգրաֆիկոմրինատ, Տերյան 91:

26

ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0054902

[504.]

AT  
15082

24  
1961